Необходимо эту область покрыть минимальным числом кругов (R_1, R_2, \dots, R_m) радиуса R с центрами $O_1(x_1, y_1) \dots O_m(x_m, y_m)$ так, чтобы любая точка $M(x, y) \in V$ принадлежала множеству W , где W – множество точек (u, v) , удовлетворяющих хотя бы одному из ограничений:

$$\left. \begin{aligned} (u - x_1)^2 + (v - y_1)^2 &\leq R \\ (u - x_2)^2 + (v - y_2)^2 &\leq R \\ \dots\dots\dots\dots\dots\dots\dots\dots\dots \\ (u - x_m)^2 + (v - y_m)^2 &\leq R \end{aligned} \right\} \quad (2)$$

При этом предполагается, что множество V непусто и ограничено.

В известных исследованиях [1–13] данная задача, в основном, рассматривается при следующем допущении:

- V -выпуклая область, в большинстве случаев представляющая из себя многоугольник, т.е. функции $f_i(x, y) (i = 1, 2, \dots, n)$ – линейные.

В общем случае, область может быть произвольной и не обязательно выпуклой и даже не обязательно односвязной.

Мы будем рассматривать случай, когда область V произвольна, в частности может быть и не выпуклой и функции $f_i(x, y)$, $(i=1, 2, \dots, n)$ могут быть нелинейными.

В качестве критерия оптимальности (эффективности) покрытия выберем отношение площади области, подлежащей покрытию к суммарной площади кругов радиуса R , которыми полностью покрывается область.

$\max F,$

где

$$- F = S_{ob} / (\pi m R^2)$$

- S_{ob} – площадь области, подлежащей покрытию.

- R – радиус кругов, которыми необходимо покрыть область.

- M – число кругов, которыми покрывается область.

Отметим, что в общем случае нахождение точного аналитического решения подобной задачи не представляется возможным [2].

Известны разные алгоритмы для трех, четырехугольных областей, имеются теоретические исследования для разных случаев [1–3], а также примеры практического применения предложенных подходов [10–12], однако, случай для произвольной области практически мало исследован.

2. Описание алгоритмов и вычислительных схем

Перед изложением численных алгоритмов нахождения наилучшего покрытия приведем известные понятия геометрического ($G(x_g, y_g)$) и чебышевского ($СНЕВ(x_c, y_c)$) центров плоской дискретной области, образованной точками $M(x_i, y_i)$, ($i=1, 2, \dots, n$).

Координаты геометрического центра $M(x_g, y_g)$ (центра массы плоской однородной фигуры) определяются формулами:

$$x_g = \frac{1}{n} \sum_{i=1}^n x_i, \quad y_g = \frac{1}{n} \sum_{i=1}^n y_i \quad (3)$$

Чебышевским центром [13] ограниченного множества M метрического пространства $X = (X, \rho)$ является элемент $x_0 \in X$, для которого

$$\sup_{y \in M} \rho(x_0, y) = \inf_{x \in X} \sup_{y \in M} \rho(x, y) \quad (4)$$

где $\rho(x, y)$ – расстояние между точками $x, y \in X$

В работе предлагаются следующие приближенные алгоритмы и соответствующие вычислительные схемы покрытия заданной области V кругами фиксированного радиуса – R .

1. Алгоритм поворота области вокруг середины отрезка, образованного наиболее удаленными точками области V .

2. Алгоритм покрытия по горизонтально расположенному прямоугольнику наименьших размеров, полностью покрывающему область (алгоритм – АН),
3. Алгоритм покрытия по произвольно расположенному прямоугольнику минимальных размеров, полностью покрывающему область (алгоритм – АА),
4. Алгоритм покрытия по геометрическому центру (алгоритм – АG),
5. Алгоритм покрытия по Чебышевскому центру (алгоритм – АСН),
6. Алгоритм покрытия по серединной и параллельным ей линиям (алгоритм – АМ).

Применение этих алгоритмов могут дать разные результаты в зависимости от характера и свойств области V .

Предлагается следующая общая схема поиска наилучшего покрытия:

- Преобразование непрерывной области V в множество точек $M_i(x_i, y_i) \in V (i=1, 2, \dots, n)$ с практически удовлетворительной точностью δ .
- Последовательное применение всех перечисленных выше пяти алгоритмов покрытия и сравнение обеспечиваемыми ими эффективностей покрытия.
- Выбор наиболее эффективного покрытия.

2.1. Алгоритмы покрытия по прямоугольникам горизонтального и произвольного направлениям: АН и АА

Эти алгоритмы представляют из себя последовательность следующих шагов:

- для рассматриваемой области находят наиболее удаленные точки по горизонтальному и вертикальному направлениям, строят горизонтальный прямоугольник, рис.1) (алгоритм АН).

- находят две самые удаленные друг от друга точки (M_1 и M_2) области и две точки области N_1 и N_2 , которые максимально удалены от прямой, проходящей через точки M_1 и M_2 . По этим точкам строят прямоугольник произвольного направления (рис.1) (алгоритм АА).




Рис. 1. Прямоугольники горизонтального и произвольного расположения

- построенные прямоугольники разбивают на квадраты со стороной $h = R\sqrt{2}$




Рис. 2. Разбиение прямоугольника на квадраты со стороной $h=R\sqrt{2}$

Обозначим через u и v , соответственно, ширину и высоту прямоугольника.

Очевидно, что отношения u/h и v/h в общем случае могут быть не целыми числами. В этом случае в качестве количества квадратов по ширине (k) и по длине (l) берут, соответственно, наименьшие целые числа, равные или превышающие соответственно u и v :

$$k = \text{int}(u/h) + 1, l = \text{int}(v/h) + 1$$

- Каждый из квадратов покрывают кругом радиуса R , исключая те круги, которые не имеют общих точек с областью V (рис.3.)




Рис. 3. Покрытие прямоугольной области кругами

2.2. Описание алгоритмов AG и АСН

Алгоритмы состоят из следующих шагов:

- находят геометрический(GC) и Чебышевский(СНС) центры области (рис.4)




Рис. 4. Геометрический и Чебышевский центры области.

- начиная с центра (GC или СНС) последовательно по окраинам каждой окружности проводят круги радиуса R , пока очередной круг не окажется вне области (рис. 5).




Рис. 5. Проведение кругов, начиная с центров: GC или СНС

2.3. Описание алгоритма АМ

В этом случае

- находят средние точки области по вертикали или по горизонтали и проводят среднюю и параллельные ей линии, на расстоянии R (рис 6).




Рис. 6. Проведение средней и параллельных ей линий области.

- по каждой линии, начиная со средней и параллельными линиям, проводят круги радиуса R с центрами на расстоянии R , начиная с левой крайней точки.




Рис. 7. Проведение кругов по средней и параллельно ей линиям.

Полученные по разным алгоритмам результаты сравнивают друг с другом по их показателю эффективности (3) и выбирают то покрытие, при котором эффективность покрытия максимальна.

По каждому алгоритму составлена программа на языке Visual Basic и образована единая программная система.

Для примера приведем описание алгоритма преобразования (дискретизации) области. Имеем область V , определяемую ограничениями:

$$f_i(x_i, y_i) \leq 0$$

Не нарушая общности, можно предполагать, что область находится в первом квадранте и ее точки удовлетворяют условиям: $a \leq x \leq b$ и $c \leq y \leq d$.

Введем булеву переменную $u = (f_1(x_1, y_1) \leq 0) \text{ and } (f_2(x_2, y_2) \leq 0) \text{ and } \dots \text{ and } (f_n(x_n, y_n) \leq 0)$. Тогда алгоритм преобразования области на псевдокоде будет иметь следующий вид:

Input a, b, c, d, delta – точность преобразования области в множество точек.

Ограничения: $\{(f_1(x_1, y_1) \leq 0), (f_2(x_2, y_2) \leq 0), \dots, (f_n(x_n, y_n) \leq 0)\}$

Output l_1 – число всех точек области, которое непосредственно зависит от delta

l_2 – число крайних точек области, которое непосредственно зависит от delta

Множество всех точек области $\{ax(i), ay(i)\} (i=1, 2..l_1)$

Множество крайних точек области $\{kx(i), ky(i)\} (i=1, 2..l_2)$

$plob$ – площадь области

$i=0, j=0, l_2=0$

For $x=a$ to b step delta

$q=0$

For $y=c$ to d step delta

$u = (f_1(x, y) \leq 0) \text{ and } (f_2(x, y) \leq 0) \text{ and } (f_n(x, y) \leq 0)$

$l_2 = l_2 + 1$

If u then $i = i + 1$

$ax(i) = x$

$ay(i) = y$

```

        IF q=0 then j=j+1
            kx(j)=x
            ky(j)=y
            q=1
        end if
    end if
end for
end for
l1=j-1
plob =(b-a)*(c-d)*(l1-1)/(l2-1)
end

```

Множества точек $M_1(ax(i), ay(i))(i=1, 2 \dots l)$ и $M_2(kx(i), ky(i))(i=1, 2 \dots l)$, которые в дальнейшем используются во всех алгоритмах.

3. Краткое описание программной системы, реализующей алгоритмы покрытия

Для реализации описанных выше вычислительных алгоритмов составлены соответствующие программы на языке Visual Basic. Запуская программу ss.exe открывается следующее окно-главное меню программы, имеющее следующие составляющие:

Главное меню системы




Рис.8. Главное меню и его состав

В качестве практического примера применения программной системы рассмотрим следующую задачу:

Дана область, образованная точками $M(x,y) \in D \subset R^2$ и удовлетворяющая следующим ограничениям:

$$\left. \begin{aligned}
 (x - 60)^2 + 5(y - 50)^2 &\leq 1600 \\
 (x - 10)^2 + (y - 10)^2 &\geq 500 \\
 (x - 20)(x - 50) + (y - 80)^2 &\geq 100 \\
 (x - 60)^2 + (y - 20)^2 &\geq 500 \\
 x + 0.2y &\leq 100
 \end{aligned} \right\} \quad (6)$$

Для этой области определены геометрическое (GC(57.27,51.47)) и Чебышевское центры (СНЕВС(56,45) (рис.9). Как видно, они могут не совпадать.




Рис. 9. Область, образованная ограничениями (б) и ее геометрические (GC) и Чебышевские (CHBC) центры.

По описанным выше алгоритмам, получены следующие результаты по покрытию области D кругами радиуса R.

1. По горизонтально расположенному прямоугольнику минимальных размеров, покрывающему область D.




Рис.10. График покрытия области D кругами радиуса R по алгоритму АН

2. По произвольно расположенному прямоугольнику минимальных размеров, покрывающему область D.




Рис. 11. График покрытия области D кругами радиуса R по алгоритму АА

3. По алгоритму вокруг геометрического центра




Рис. 12. График покрытия области D кругами радиуса R по алгоритму AG

4. По алгоритму вокруг Чебышевского центра




Рис. 13. График покрытия области D кругами радиуса R по алгоритму ACH

По алгоритму средней и параллельно ей линиям




Рис. 14. График покрытия области D кругами радиуса R по алгоритму AM

Результаты применения различных алгоритмов приведены в таблице 1.

Таблица 1.

**Данные по характеристикам покрытия области D
кругами радиуса R разными алгоритмами.**

№	Алгоритм размещения кругов	Δ	Площадь области	Радиус круга	Количество кругов	Степень эффективности покрытия (%)
1	По горизонтально расположенному прямоугольнику минимальных размеров, покрывающему область (АН)	0.1	1800	15	8	31.87
2	По произвольно расположенному прямоугольнику минимальных размеров, покрывающему область (АА)	- ^с -	1800	- ^с -	8	31.87
3	Вокруг геометрического центра (АГ)	- ^с -	1798.111	- ^с -	7	36.34
4	Вокруг Чебышевского центра (АСН)	- ^с -	1798.111	- ^с -	9	28.26
5	По серединной и параллельным ей линиям (АМ)	- ^с -	1798.111	- ^с -	7	36.01

Анализ табличных данных показывает, что в данном случае для области D наиболее подходящим алгоритмом покрытия является алгоритм АГ, когда покрытие производится вокруг геометрического центра области. В этом случае вся область покрывается 7 кругами, при этом доля оптимального покрытия составляет 36.34%.

Разумеется, для другой области наилучшим алгоритмом может быть другой и полезное покрытие будет другим.

ЛИТЕРАТУРА

1. Казаков А.Л., Лебедев П.Д. Построение наилучших круговых аппроксимаций множеств на плоскости и на сфере, М., ИПУ РАН, 16–19 июня 2014г.
2. Лебедев П.Д., Бухаров Д.С. Аппроксимация многоугольников наилучшим набором кругов, Известия Иркутского государственного университета, серия «Математика», 2010, Т. 3, № 4.
3. Лебедев П.Д., Ушаков А.В. Аппроксимация множеств на плоскости оптимальными наборами кругов// Автоматика и телемеханика, 2012. СС. 79–90.
4. Kurzhanski A. B., Valyi I. *Ellipsoidal calculus for estimation and control*. Boston: Birkhauser, 1997. 220 p.
5. Гусев М.И. Оценки множеств достижимости многомерных управляемых систем с нелинейными перекрестными связями // Тр. ИММ УрО РАН. 2009. Т. 15. СС. 82–94.
6. Гаркави А.Л. О существовании наилучшей сети и наилучшего поперечника множества в банаховом пространстве // Успехи матем. наук. 1960. Т. 15. Вып. 2. СС. 210–211.
7. Гаркави А.Л. О наилучшей сети и наилучшем сечении множеств в нормированном пространстве // Изв. АН СССР. Сер. матем. 1962. Т. 26. СС.87–106.
8. Гаркави А.Л. О чебышевском центре и выпуклой оболочке множества // Успехи матем. наук. 1964. Т. 19. Вып. СС. 139–145.
9. Гаркави А.Л. Об условном чебышевском центре компактного множества Непрерывных функций // Матем. заметки. 1973. Т. 14. СС. 469–478.
10. Казаков А.Л., Лемперт А.А. Об одном подходе к решению задач оптимизации, возникающих в транспортной логистике // Автоматика и телемеханика. 2011. СС. 50–57.
11. Лемперт А.А., Казаков А.Л., Бухаров Д.С. Математическая модель и программная система для решения задачи размещения логистических объектов // Управление большими системами. 2013. Вып. 41. СС. 270–284.

12. Бухаров Д.С., Казаков А.Л. Программная система «ВИГОЛТ» для решения задач оптимизации, возникающих в транспортной логистике // Вычислительные методы и программирование. 2012. Раздел 2. СС. 65–74.

**APPROXIMATE METHODS AND SOFTWARE IMPLEMENTATION
OF THE SOLUTION OF THE PROBLEM OF COVERING
AN ARBITRARY PLANE REGION BY CIRCLES**

V. Hovsepyan

Vanadzor State University after Hovhannes Toumanyán

hovar@inbox.ru

ABSTRACT

The problem of covering a plane domain with circles of bounded radius is examined. A criterion is proposed and a comparison of several algorithmic solutions is made. The task has acquired great importance in recent years in connection with the development of mobile telephony, industrial logistics, etc.

Keywords: Chebyshev Center, sensor network, coverage of the area with circles.

ՄՏԵՓԱՆԱԿԵՐՏՈՒՄ ՊԻԿ ԺԱՄԵՐԻՆ ԱՌԿԱ
ՏՐԱՆՍՊՈՐՏԱՅԻՆ ԽՑԱՆՈՒՄՆԵՐԻ ՎԵՐԱՑՄԱՆ
ՄԻՋՈՑՆԵՐԻ ՔՆՆԱՐԿՈՒՄ

Ա.Ն. ՀԱԿՈԲՅԱՆ, Ն.Ի. ԲՍԲՍՅԱՆ

Արցախի Պետական համալսարան

ani_hakobyan_98@bk.ru, nastasya.avetisyan@gmail.com

varustamyan@rambler.ru

ԱՄՓՈՓՈՒՄ

Հոդվածում վերանայված է ուղևորափոխադրումների զարգացման նախադրյալները քաղաք Ստեփանակերտում: Տրված են ինտելեկտուալ տրանսպորտային համակարգի գործառույթները: Նկարագրված է ք. Ստեփանակերտում այդ համակարգի ներդրումը: Բերված են հասարակական տրանսպորտի որակի բարելավման տարբերակները՝ մեկ միասնական ապահով, հարմարավետ շարժական համակարգի ստեղծման համար:

Հիմնաբառեր՝ ինտելեկտուալ տրանսպորտային համակարգ, հասարակական տրանսպորտ, ճանապարհային երթևեկություն, տեղեկատվական համակարգ, ուղևորափոխադրում:

Ստեփանակերտը հանդիսանում է Արցախի Հանրապետության մայրաքաղաք և ի տարբերություն հանրապետության մյուս քաղաքների այն ավելի խիտ է բնակեցված, բացի այդ ճարտարապետական տեսանկյունից քաղաքի փողոցները նեղ են, որն էլ հենց հանդիսանում է

քաղաքի տրանսպորտային համակարգի կազմակերպման բարդության հիմնական պատճառը: Պիկ ժամերին բնակչության մեծամասնությանը անհրաժեշտ է լինում քաղաքի մի ծայրից հասնել մյուսը, օգտագործելով մի քանի հիմնական մայրուղիները: Եվս մեկ գործոն էլ հանդիսանում է բնակչության անհավասարաչափ տեղաբաշխումը:

Ըստ 2015թ. իրականացված մարդահամարի տվյալների ԱՀ-ում ապրում է 140535 մարդ, որից 54752-ը ապրում է ք.Ստեփանակերտում: Քաղաքում բնակչության միջին խտությունը կազմում է 2155.46 մարդ/կմ², որն ի համեմատ հանրապետության մյուս քաղաքների բավականին մեծ թիվ է կազմում [3]:

Քաղաքի որոշ մարդաշատ փողոցների սպասարկում է միայն մեկ երթուղային տաքսի, որը հանգեցնում է տրանսպորտում մարդկանց քանակի գերազանցմանը նախատեսված տեղերից, ժամանակային առումով ուշացումների, բացի այդ հասարակական տրանսպորտի բացակայության պատճառով մարդիկ փորձում են ձեռք բերել իրենց անձնական մեքենաները, որն էլ խթանում է քաղաքում խցանումների մեծացմանը և մթնոլորտի աղտոտմանը:

Քաղաքում տրանսպորտային համակարգն ունի մի շարք խնդիրներ, որոնցից են երթուղիների ժամանակացույցի խախտումները, արդյունավետ երթուղային ցանցի բացակայությունը, քաղաքի հիմնական մայրուղիներում երթևեկության խցանումները, քաղաքային ավտոկայանատեղիների բացակայությունը, հասարակական տրանսպորտի համար տեղեկատվական համակարգի բացակայությունը և այլն:

Եթե համեմատենք միկրոավտոբուսային երթուղով, ավտոբուսներով և տաքսիներով ուղևորափոխադրությունը, ապա ավտոբուսները կգերազանցեն մյուսներին, քանի որ դրանք հարմար են հասարակության տարբեր խավերի մարդկանց համար և ավելի մատչելի են, քան տաքսիները: Սակայն մյուս կողմից ուղևորափոխադրման այս մի-

ջոցը հարմարեցված չէ հաշմանդամություն ունեցող մարդկանց համար, որը մեծ թերություն է հանդիսանում: Ավտոբուսների ուղևորավճարը 2014թ. հոկտեմբերի 1-ից կազմում է 100 դրամ, իսկ մինչ այդ կազմում էր 70դրամ: Թանկացման պատճառն ըստ «Ստեփանակերտ սերվիս»-ի ներկայացրած հայտի ընկերության կրած վնասներն են և շահույթի բացակայությունը:

Այսպիսով ուղևորափոխադրման հետ կապված խնդիրների լուծման համար առաջարկում ենք ինտելեկտուալ տրանսպորտային համակարգի ներդնումը, որի հիմնական գործառույթներն են □

1. Տեղեկատվական համակարգ հասարակական տրանսպորտի համար: Տրանսպորտի վերահսկման կենտրոնը գործում է տերմինալով, որը տեղեկատվություն է հաղորդում ավտոբուսի գտնվելու վայրի մասին յուրաքանչյուր կանգառում: Շնորհիվ դրա քաղաքի բնակիչները կարող են իմանալ, թե օրինակ ինչու է ավտոբուսն ուշանում:
2. Վճարային քարտերի ստեղծում: Նման քարտերի օգնությամբ կարող ենք վճարել ոչ միայն բոլոր տիպերի հասարակաակական տրանսպորտներով փոխադրման համար, այլև ավտոկայանման, սուպերմարկետներում մանր գնումների և այլնի համար: Քաղաքում կներդրվի հանկանխիկ վճարային համակարգ, օգտագործելով վճարային պլաստիկ քարտեր:
3. Լուսակիր ըստ պահանջի: Անցումներում լուսակրի կանաչ լույսը կմիանա կոճակի սեղմումով:
4. «Խելացի ճանապարհային ցանց» հավաքածուներ: Մա հատուկ էլեկտրոնային ծրագիր է, որը պարունակում է ճանապարհների ինտերակտիվ քարտեզ:
5. Ավտոմոբիլային տեղեկատվության և կապի համակարգ: Այս համակարգի միջոցով կարող ենք մշտապես տվյալներ ստանալ

- քաղաքում ճանապարհների ծանրաբեռնվածության և ճանապարհների հնարավոր շրջանցումների մասին GPS-ի միջոցով:
6. Ճանապարհային հաղորդագրությունների ռադիոալիքներ: Այս ալիքներով կարող են պարբերաբար հաղորդվել առանցքային մասերի ծանրաբեռնվածության մասին: Պիկ ժամերին հաղորդումները կարող են հաճախանալ:
 7. Բազմաֆունկցիոնալ տրանսպորտային կայք: Այցելելով այս կայք կարող եք գնահատել քաղաքի ճանապարհների իրավիճակը և հետևել ուղիղ տրանսյացիային ճանապարհային վերտեսախցիկներից:
 8. Դինամիկ ճանապարհային նշաններն վահանակներ: Ի շնորհիվ նշանների ավտոմեքենաների վարորդները նախազգուշացված կլինեն ճանապարհային ցանցի ծանրաբեռնված փոփոցների մասին:
 9. Կայանման ժամանակ օգնության համակարգ: Սրա օգնությամբ կարողանում ենք պարզել կայանատեղում ազատ տեղերի քանակը, որպեսզի հեշտացնենք մեքենայի կայանումը:
 10. Քաղաքի ճանապարհներին հետևող տեսախցիկներ: Սրանց միջոցով կարելի է հետևել խցանումներին, ինչպես նաև սխալ կայանված մեքենաներին:
 11. Լուսակիրների կառավարման համակարգ: Այս համակարգի շնորհիվ կկրճատվի խաչմերուկներում անցումներով անցնելու ժամանակը, տեղադրված ղեկավարող լուսակիրների միջոցով, որոնք կախված են տրանսպորտային միջոցների շարժի պարամետրերից:
 12. Հակահրդեհային և օդի աղտոտման դետեկտորներ: Սրանք շատ հաճախ անհրաժեշտ են թունելներում, որտեղ կրակն ու

տեխնիկական անսարքությունները բարդ է հայտնաբերել տեսախցիկով դիտելիս և որտեղ դրանք իրենցից ներկայացնում են առավել մեծ վտանգ:

Ուղևորափոխադրումների կազմակերպման գործում մեծ դեր է խաղում ուղևորների անհավասարաչափ տեղաբաշխումը ըստ ժամանակի և ըստ երթուղիների տարբեր հատվածների: Այդ պատճառով ռացիոնալ երթուղային ցանցի ձևավորման, ինչպես նաև ուղևորների սպասարկման բարձր մակարդակի ապահովման համար անհրաժեշտ է իմանալ անհավասարաչափ տեղաբաշխման ուղղությունը, չափն ու աստիճանը [1]:

Կապված քաղաքի որոշակի մասերում բնակչության բարձր խտության և այդ մասերում ընդհանուր մեծ ծանրաբեռնվածության հետ՝ առաջանում են հետևյալ տրանսպորտային խնդիրները.

- քաղաքի կենտրոնական մայրուղիների երկայնքով շարժման անհրաժեշտություն,
- խցանումներ կենտրոնական մայրուղիների խաչմերուկներում [2]:

Գլխավոր խնդրահարույց տարածքներն են Ազատամարտիկների, ԱդՊ Իսակովի, ՄՍՄաշտոցի անվան փողոցները և Ազատության հրապարակը, քանի որ սրանք կենտրոնական փողոցներ են և բացի նրանից, որ բնակչության մեծամասնությունը բնակեցված է այս մասում, նաև այստեղ են կենտրոնացված մի շարք պետական աշխատատեղեր՝ ՊԲ կենտրոնական շտաբը, թիվ 2 և թիվ 11 դպրոցները, ֆինանսների, աշխատանքի և սոցիալական հարցերի, արտաքին գործերի նախարարությունները, ոստիկանությունը, գերագույն դատարանը, կենտրոնական ավտոկայանը և մի շարք այլ աշխատատեղեր, ինչն էլ հանգեցնում է պիկ ժամերին այդ փողոցներում մեծ խցանումների: Խցանման պատճառներից մեկն էլ այդ մասում այն է, որ շրջաններից

քաղաք մտնելու բոլոր ճանապարհները անցնում են թվարկված փողոցներով:

Այս խնդրի լուծում է հանդիսանում ինտելեկտուալ տրանսպորտային համակարգի ստեղծումը քՍտեփանակերտում: Այն կլուծի հետևյալ առաջադրանքները.

- երթևեկության հոսքերի վերաբաշխումը պիկ ժամերին,
- տրանսպորտի վերահսկում վթարային պատահարների, աղետների կամ որևէ իրադարձությունների դեպքում, որոնք որոշակի ազդեցություն ունեն երթևեկության վրա,
- ճանապարհներին անվտանգության բարձրացում,
- շրջակա միջավայրի վրա տրանսպորտային միջոցների բացասական ազդեցության նվազեցում,
- ճանապարհների վիճակի մասին ինֆորմացիայի տրամադրում բոլոր հետաքրքրվող անձանց:

Ինտելեկտուալ տրանսպորտային համակարգի հիմնական կազմն ու անդամները հանդիսանում են տրանսպորտային ենթակառուցվածքը, տրանսպորտային միջոցները, ինտելեկտուալ տեղեկատվական վահանակները, ճանապարհային երթևեկության նշանները և լուսակիրները, որոնց հնարավոր է ղեկավարվել հեռվից, ինֆորմացիայի հավաքման և մշակման կենտրոնները, որոշումների իրականացման և ճանապարհային երթևեկության վերահսկման կենտրոնները: Համակարգի ղեկավարման համար անհրաժեշտ է ստեղծել ճանապարհային երթևեկության կառավարման քաղաքային կենտրոն, որը կհանդիսանա պետական սեփականություն: ԻՏՀ-ի ստեղծումը Ստեփանակերտում թույլ կտա քաղաքին անցում կատարել նոր մակարդակի: Այս համակարգի ներդրմամբ քաղաքում կարգապահության աստիճանը կաճի: Կստեղծվի հանրային տրանսպորտի անվտանգ, հարմարավետ և շարժական միասնական համակարգ՝ դրանում ներառելով քաղաքային տարբեր տեսակի տրանսպորտային միջոցները

և տարբեր մակարդակների ինտեգրված տրանսպորտային հանգույցները:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. *Ларин О.Н.* Организация пассажирских перевозок: Учебное пособие. Челябинск: Изд-во ЮУрГУ, 200. 104 с.
2. Пассажирские автомобильные перевозки: Учебник для вузов / В.А. Гудков, Л.Б. Миротин, А.В. Вельможин, С.А. Ширяев. Под ред. В.А. Гудкова. М.: Горячая линия: Телеком, 2006. 448 с.
3. <http://stat-nkr.am>

ОБСУЖДЕНИЕ МЕТОДОВ ИЗБАВЛЕНИЯ ДОРОЖНЫХ ЗАТОРОВ В ГОРОДЕ СТЕПАНАКЕРТЕ В ЧАСЫ ПИК

А.Н. Акопян, Н.И. Бабаян

Арцахский Государственный университет

ani_hakobyan_98@bk.ru, nastasya.avetisyan@gmail.com, varustamyan@rambler.ru

АННОТАЦИЯ

В статье рассмотрено развитие пассажирского транспорта в городе Степанакерте. Приведены функции интеллектуальной транспортной системы. Описано введение этой системы в городе Степанакерте. Приведены варианты улучшения качества общественного транспорта, создания единой комфортной, безопасной и мобильной системы общественного транспорта.

Ключевые слова: интеллектуальная транспортная система, общественный транспорт, дорожное движение, информационная система, пассажирские перевозки.

ՆԵՅՐՈՆԱՅԻՆ ՑԱՆՑԵՐԻ ՏՈՊՈԼՈԳԻԱՅԻ ՕՊՏԻՄԱԼԱՑՈՒՄ ԳԵՆԵՏԻԿ ԱԼԳՈՐԻԹՄԻ ՄԻՋՈՑՈՎ

Ա.Ս. Հովակիմյան¹ Մ.Գ. Սարգսյան², Չ. Մովսիսյան²

¹Հայ-Ռուսական համալսարան

²Երևանի պետական համալսարան

*anna.hovakimyan@rau.am, siranushs@ysu.am,
movchinar@gmail.com*

ԱՄՓՈՓՈՒՄ

Աշխատանքում դիտարկվում է երկարատև կարճաժամկետ հիշողության (Long Short-Term Memory – LSTM) տեսքի ռեկուրենտ նեյրոնային ցանցերի տոպոլոգիայի օպտիմալացման խնդիրը: Ենթադրվում է, որ այդ ցանցերը օգտագործվում են կանխատեսման խնդիրների համար: Որպես ցանցի տոպոլոգիան որոշող պարամետրեր դիտարկվում են մուտքային շերտի նեյրոնների (window size) և թաքնված շերտի գազաթների (number of units) քանակները: Օպտիմիզացիայի խնդիրը լուծելու համար կիրառվում է գենետիկ ալգորիթմ, որի սկզբնական պոպուլյացիան կազմված է ուսուցման արդյունքում գեներացված նեյրոնային ցանցերից՝ տոպոլոգիան որոշող պարամետրերի պատահական արժեքներով:

Մշակված է ծրագրային համակարգ, որը գտնում է տվյալ առարկայական տիրույթի տվյալների վրա հիմնված կանխատեսման խնդիրը լուծող նեյրոնային ցանցի օպտիմալ տոպոլոգիա: Մշակված գործիքը փորձարկված է քամու ուժգնության կանխատեսման խնդրի համար:

Հիմնաբառեր՝ ռեկուրենտ նեյրոնային ցանցեր, երկարատև կարճաժամկետ հիշողություն, նեյրոնային ցանցի տոպոլոգիա, գենետիկ ալգորիթմ:

Ներածություն

Նեյրոնային ցանցերն օգտագործվում են մի շարք ոլորտներում: Օգտագործված ոլորտներում լավ արդյունքի հասնելու համար անհրաժեշտ է ընտրել ցանցի ճիշտ տոպոլոգիա, որն որոշվում է ցանցի մուտքային և թաքնված շերտերի նեյրոնների քանակով: Ցանցի տոպոլոգիան սովորաբար ձևավորվում է էքսպերտի կողմից փորձարկումների արդյունքում: Այդ գործընթացը բավականին ժամանակատար է, ուստի խնդիր է առաջանում այն ավտոմատացնելու:


Նեյրոնային ցանցերի կառուցման խնդիրը հանգում է մի շարք պարամետրերի սահմանելուն, նախքան սովյալների վրա ցանցի ուսուցումը սկսելը:

Աշխատանքի նպատակն է գենետիկ ալգորիթմի միջոցով որոշել պարամետրերի այնպիսի արժեքներ, որը կբերի սովյալ առարկայական տիրույթի սովյալների վրա հիմնված կանխատեսման խնդիրը լուծող ռեկուրենտ նեյրոնային ցանցի օպտիմալ տոպոլոգիայի:

Ռեկուրենտ նեյրոնային ցանցեր և գենետիկ ալգորիթմներ

Ռեկուրենտ նեյրոնային ցանցը (RNN) ցանց է ցիկլերով, որը կարողանում է պահպանել ինֆորմացիան: Ցիկլը թույլ է տալիս ($t-1$) քայլում x_{t-1} մուտքային ազդանշանին համապատասխան էլքային h_{t-1} արժեքը փոխանցել t -րդ քայլ: Յուրաքանչյուր քայլի էլքային արժեքը կախված է ընթացիկ քայլի մուտքային ազդանշանից և նախորդ քայլի-

րից հաղորդված ինֆորմացիայից (նկ. 1): Սակայն քայլերի միջև հեռավորության մեծացման հետ RNN-ները դժվարանում են ինֆորմացիան փոխանցել քայլերի միջև:



Նկ. 1. Ռեկուրենտ նեյրոնային ցանց

Վերջին խնդիրը լուծվում է մի քանի եղանակով: Աշխատանքում դիտարկվում են RNN տիպի երկարատև կարճաժամկետի շողության տեսքից անցերը (LongShort-TermMemory - LSTM): Դրանք RNN-ի անալոգն են, բայց յուրաքանչյուր թաքնված գազաթ ունի 4 շերտ [1,2]:

LSTM ցանցերի ուսուցումը կատարվում է ժամանակի ընթացքում սխալի հետադարձ տարածման մեթոդով [1-3]:

Ցանցի ուսուցման սխալանքը արտահայտում է n ($n \geq 1$) օրինակներից կազմված ուսուցանող հավաքածուի վրա ուսուցանված ցանցի որակական բնութագիրը: Վերջինս հաշվարկվում է տարբեր եղանակներով: Աշխատանքում օգտագործվել է միջին քառակուսային սխալանքը՝ RMSE:

$$RMSE = \sqrt{\frac{\sum_{i=1}^n (Y_{obs,i} - Y_{model,i})^2}{n}}$$


որտեղ $Y_{obs,i}$ -ը ցանկալի ելքային արժեքն է մոդելի $X_{obs,i}$ մուտքային տվյալի համար, իսկ $Y_{model,i}$ -ն՝ մոդելի փաստացի ելքային արժեքը:

Գենետիկ ալգորիթմները (Genetic Algorithms – GA) էվրիստիկ որոնման և օպտիմիզացիայի մեթոդներ են, որոնց հիմքում ընկած է բնության մեջ գործող ընտրության սկզբունքը [4, 5]:

Ուսումնասիրվող խնդրում գենետիկ ալգորիթմի պոպուլյացիաներին ներկայացնում է ուսուցանված ցանցերի տոպոլոգիաները ներկայացնող քրոմոսոմների հավաքածուն: Քրոմոսոմները կոդավորվում են 10 երկարությամբ երկուական զանգվածի տեսքով, որտեղ առաջին 6 բիթերի պարունակությամբ տրվում է պատուհանի չափը (Window Size), իսկ հաջորդ 4 բիթերի պարունակությամբ՝ թաքնված շերտի գազաթների քանակը (Number of Units) (նկ.2): Պոպուլյացիայի տարրի (տեսակի), այսինքն տվյալ տոպոլոգիայով ցանցի, պիտանելիությունը հակադարձ համեմատական է ուսուցանված ցանցը բնութագրող միջին քառակուսային սխալանքի գնահատականին:

Աշխատանքում տեսակի ընտրությունը կատարվում է ըստ նրա պիտանելիության չափի: Ընտրության օպերատորի միջոցով ընտրվում է երկու տեսակ (ծնողներ), որոնց համար կատարվում է մեկ կետանի կարգավորված խաչասերում: Կետը ընտրվում է 6-րդ և 7-րդ բիթերի միջև և փոխանակվում են ծնող-քրոմոսոմների առաջին և երկրորդ հատվածները համապատասխանաբար: Խաչասերումից առաջացած որդիներ-տեսակները մուտացիայի են ենթարկվում որոշակի հավանականությամբ: Քրոմոսոմների որևէ բիթին վերսիայի է ենթարկվում [4-6]: Այնուհետև առաջացած որդի-տեսակների պիտանելիությունն է հաշվարկվում, որը համեմատվում է ծնողների պիտանելիության հետ: Հաջորդ սերունդ անցնում են «լավագույնները»՝ մաքսիմալ պիտանիները: Գենետիկ ալգորիթմի համար որպես աշխատանքի


կանգառի պայման համարվում է սերունդների սահմանափակ քանակը: Գենետիկ ալգորիթմի աշխատանքը կարելի է նկարագրել հետևյալ դիագրամով (նկ. 3):



$$Fitness\ Score = \frac{1}{RMSE}$$

Նկ. 2 Քրոմոսոմների կոդավորում և պիտանելիության ֆունկցիա

Ալգորիթմի աշխատանքը սկսվում է նախնական պոպուլյացիայի սահմանմամբ, որն իրենից ներկայացնում է երկու պարամետրերի (պատուհանի չափ և գազաթների քանակ) պատահական արժեքներով LSTM ցանցերի բազմություն՝ ուսուցանված մուտքային տվյալների հավաքածուների վրա: Բոլոր ցանցերի համար հաշվարկվում է ուսուցման սխալանքը՝ որոշվում է պիտանելիության գործակիցը: Ստուգվում է գենետիկ ալգորիթմի ավարտի պայմանը: Եթե այն տեղի ունի, ստացված սերունդից ընտրվում է ամենապիտանի տեսակը, որի պարամետրերն էլ հենց հանդիսանում են համարյա օպտիմալը: Այլապես գենետիկա լգորիթմի հիմնական օպերատորների միջոցով ձևավորվում են նոր պարամետրերով տեսակներ, որոնց գործարկման շնորհիվ առաջանում են LSTM նոր մոդելներ: Վերջիններս կազմում են գենետիկ ալգորիթմի պոպուլյացիայի նոր սերունդը:



Նկ. 3. Գենետիկ ալգորիթմի աշխատանքի դիագրամ

Արդյունքներ

Մշակվել է ծրագրային համակարգ Python լեզվով, որն իրականացնում է վերը նկարագրված մոտեցումը: Օգտագործվել են Python համակարգում առկա Tensorflow, Keras, Deap, Numpy, Matplotlib և այլ գրադարաններ [6]:

Համակարգը փորձարկվել է քամու ուժգնության կանխատեսման խնդրի համար՝ գենետիկ ալգորիթմի ստորն դիտարկված պարամետրերի դեպքում.

- `Generation_size=100`
- `Generation_count=50`
- `Gene_lenght = 10, Window_size_lenght = 6, Number_of_units =4,`
- `Mutpb = 0.1`
- `Cxpb = 0.6`

Աղյուսակ 1-ում ներկայացված է մշակված ծրագրային համակարգի աշխատանքի արդյունքները՝ քամու ուժգնության կանխատեսման խնդրի համար:

Աղյուսակ 1

Window Size	Number of Units	Validation RMSE
35	15	0.0998766162
9	10	0.1054462331
15	4	0.0985950033
44	8	0.0950128194
46	8	0.0887755748
13	4	0.0985346284
47	15	0.0998058638
43	10	0.0996080734
34	11	0.0983118583
47	12	0.1024061348
42	15	0.1042505894

Ստացված տեսակներից ընտրվում է լավագույնը՝ ամենաբարձր պիտանելիության ցուցանիշով. WindowSize=46, NumberofUnits=8, RMSE=0.0887755748: Պարամետրերի այս արժեքներով գեներացրած LSTM մոդելը չդիտարկված տվյալների դեպքում տալիս է հետևյալ արդյունքը (աղյուսակ 2):

Աղյուսակ 2

Best WindowSize	Best NumberofUnits	TestRMSE
46	8	0.0656975479

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. *Gers F.* Long Short-Term Memory in Recurrent Neural Networks. Lausanne, EPFL 2001
2. *Olah C.* Understanding LSTM Networks // <http://colah.github.io/posts/2015-08-Understanding-LSTMs/>.
3. *Britz D.* Recurrent Neural Networks Tutorial // <http://www.wildml.com/2015/09/recurrent-neural-networks-tutorial-part-1-introduction-to-rnns/>.
4. *Bodenhofer U.* Genetic Algorithms: Theory and Applications. Linz-Hagenberg 2003/2004
5. *Koehn P.* Combining Genetic Algorithms and Neural Networks. Knoxville, 1994.
6. *Brownlee J.* Time Series Prediction with LSTM RNNs in Python with Keras // <https://machinelearningmastery.com/time-series-prediction-lstm-recurrent-neural-networks-python-keras/>.

ОПТИМИЗАЦИЯ ТОПОЛОГИИ НЕЙРОННЫХ СЕТЕЙ С ПОМОЩЬЮ ГЕНЕТИЧЕСКОГО АЛГОРИТМА

А.С. Овакимян¹, С.Г. Саркисян², Ч. Мовсисян²

¹Российско-Армянский университет

²Ереванский государственный университет

*anna.hovakimyan@rau.am, siranushs@ysu.am,
movchinar@gmail.com*

АННОТАЦИЯ

В статье рассматривается задача оптимизации топологии рекуррентных нейронных сетей с долговременной краткосрочной памятью (Long Short Term Memory – LSTM). Предполагается, что эти сети используются для задач

прогнозирования. В качестве параметров топологии сети рассматриваются количество нейронов входного слоя (window size) и количество нейронов скрытого слоя (number of units). Для решения задачи оптимизации используется механизм генетического алгоритма, для которого начальная популяция состоит из сгенерированных в результате обучения нейронных сетей со случайными значениями варьируемых параметров.

Разработана программная система, которая ищет оптимальную топологию нейронной сети, решающей задачу прогнозирования в данной предметной области. Разработанный инструмент апробирован на примере задачи прогнозирования интенсивности ветра.

Ключевые слова: рекуррентные нейронные сети, долгая краткосрочная память, топология нейронной сети, генетический алгоритм.

ՎԵՐ ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐԻ ՄՇԱԿՈՒՄԸ ASP.NET CORE ՏԵԽՆՈԼՈԳԻԱՅՈՎ

Ղ.Է. Իսրայելյան

*Արցախի պետական համալսարան
Գիտական ղեկավար մ.գ.թ.դոցենտ Վ.Վ. Առստամյան*

israelyan.diana@gmail.com

ԱՄՓՈՓՈՒՄ

Համացանցի զարգացմանը զուգընթաց որակյալ և արագագործ վեբ հավելվածների մշակումը դարձել է անհրաժեշտություն: Ուստի շատ կարևոր է վեբ հավելվածներ մշակելիս ընտրել այնպիսի տեխնոլոգիա, որը կբավարարի ժամանակակից պահանջներին: Հոդվածում ներկայացվում է ASP.NET CORE տեխնոլոգիայի նկարագրությունը և այն ուղիները, որոնց միջոցով կարելի է օպտիմալացնել հավելվածի աշխատանքը:

Հիմնաբառեր՝ ASP.NET CORE, վեբ – հավելված, մշակում, MVC շաբլոն:

Այսօր շատ ձեռնարկատերերի մոտ հարց է առաջանում, թե ինչի համար են անհրաժեշտ վեբ կայքերը: Երբ մենք ցանկանում ենք որևէ ապրանք գնել կամ օգտվել տարբեր ծառայություններից, առաջնահերթ դրանք փնտրում ենք համացանցում: Վեբ կայքերը հնարավորություն են տալիս:

- տեղեկավորություն տարածել և գովազդել ապրանքներն ու ծառայությունները, դրանց գները, տեղեկացնել սպասվող ակցիաներ մասին,
- զբաղվել onlineվաճառքով,
- ստեղծել հարթակ շփման համար, ինչպես աշխատակիցներն են կարողանում հաղորդակցվել միմյանց հետ, այնպես էլ հաճախորդներն են կարողանում հարցեր ուղղել կազմակերպության ներկայացուցիչներին:
- մարկետինգային գործունեություն ծավալել:

Հաշվի առնելով վեբ կայքերի կարևորությունը և անհրաժեշտությունը, հարց է առաջանում թե ինչ տեխնոլոգիա օգտագործել որակյալ և արագագործ կայք ունենալու համար:

ASP.NET CORE-ը անվճար բաց կոդով վեբ ֆրեյմվորք է, որը ստեղծվել է Microsoft ընկերության կողմից և նախատեսված է տարբեր տեսակի վեբ հավելվածներ մշակելու համար:

Հարթակի մշակումը սկսվել է 2014 թվականից, այն ժամանակ հարթակը պայմանականորեն կոչվում էր ASP.Net vNext: 2016 թվականի հունիսին ներկայացվել է հարթակի առաջին տարբերակը:

ASP.NET CORE հանդիսանում է ASP.NET հարթակի շարունակությունը: Քանի որ այն բազմապլատֆորմ է, ապա հնարավորություն է տալիս վեբ հավելվածներ մշակել օգտագործելով տարբեր օպերացիոն համակարգեր՝ Windows, Mac OS X, Linux: ASP .NET CORE-ը ամբողջովին ներկայացված է NuGet փաթեթների միջոցով, ինչի շնորհիվ օգտագործվում են միայն այն բաղադրիչները, որոնք անհրաժեշտ են ու պրոյեկտի մեջ ավելորդ կախվածություններ չեն լինում :

ASP .NET CORE-ի միջոցով վեբ հավելվածներ մշակելու համար կարելի է օգտագործել Visual Studio խմբագրիչը 2015 թվականի տարբերակից սկսած և Visual Studio Code խմբագրիչը, որը աշխատում է Windows, Mac OS X և Linux օպերացիոն համակարգերում: Visual

Studio-ն ունի Bower, Grunt, Gulp բազմաֆունկցիոնալ գործիքների աջակցում, որոնք հնարավորություն են տալիս աշխատել Javascript-ի և CSS-ի հետ:

ASP .NET CORE-ընտանյալ պարունակում է MVC ֆրեյմվորք, որը միացնում է MVC, Web API և Web Pages տեխնոլոգիաները: Սկզբնական տարբերակներում այս տեխնոլոգիաները հանդես էին գալիս առանձին-առանձին և պարունակում էին մեծ քանակությամբ կրկնվող ֆունկցիոնալություն: Ներկայիս տարբերակում դրանք համախմբված են ASP .NET Core MVC-ի մեջ, իսկ Web Forms արդեն համարյա չի օգտագործվում:

Արագագործությունը վեբ կայքի կարևորագույն ցուցանիշներից է: Եթե օգտագործողի հարցումին պատասխանելու ժամանակը տևում է 3 վայրկյանից ավելի երկար, ապա օգտագործողը սովորաբար նորից չի մտնում այդ կայքը:

Աշխատանքի կատարման ընթացքում ստեղծվել են փոքրիկ պրոյեկտներ և ուսումնասիրվել է հարթակի աշխատանքը: ASP .NET CORE-ի արդյունավետությունը և արագագործությունը բարձրացվում է որոշակի ծրագրային օպտիմալացումների շնորհիվ: Ստորև ներկայացվում են օպտիմալացման մի քանի եղանակներ:

Խորհուրդ է տրվում միշտ օգտագործել վեբ հավելվածի վերջին տարբերակը: ASP .NET CORE-ի առաջին տարբերակը թողարկվել է 2016 թվականին Visual Studio 2015-ի հետ միասին: Այսօր արդեն Visual Studio 2019-ը աջակցում է ASP .NET CORE 3.0: Առաջին և երրորդ տարբերակների մեջ կան բազմաթիվ տարբերություններ:

Վեբ հավելվածների մշակման ժամանակ պետք է խուսափել սինխրոն մեթոդների կանչերից: Նման մեթոդները արգելափակում են օգտագործողի ինտերֆեյսը և օգտվողը որևէ այլ գործողություն կատարելու համար պետք է սպասի մինչև ավարտվի նախորդ գործողություն:

նր: Խորհուրդ է տրվում օգտագործել `async/await` օպերատորները: Օրինակ եթե կայքը հնարավորություն է տալիս ֆայլեր ներբեռնել և բեռնել, որոնք համարվում են երկարատև գործողություններ, ապա դրանք պետք է իրականացվեն առանձին հոսքում, այսինքն դրանց կատարման ժամանակ օգտագործողը պետք է հնարավորություն ունենա այլ գործողություններ կատարել:

ASP .NET CORE-ով հավելվածներ մշակելիս տվյալները պահպանելու և դրանց հետ աշխատելու համար ծրագրավորողները օգտագործում են Entity Framework Core տեխնոլոգիան: Այն հնարավորություն է տալիս մոդելների հիման վրա կառուցել տվյալների բազա և ներդրված ֆունկցիաների միջոցով ավելացնել, փոփոխել և ջնջել տվյալներ: Տվյալների հետ աշխատանքը օպտիմալացնելու համար կան հետևյալ եղանակները.

- Օգտագործել `NoTracking()` մեթոդը միայն ընթերցելու համար նախատեսված տվյալները ստանալիս:
- Եթե անհրաժեշտ է տվյալները ֆիլտրավորել, ապա ավելի լավ է ֆիլտրացիան կատարել տվյալների բազայում, այլ ոչ թե ստանալ ամբողջ տվյալները և փորձել դրանք ֆիլտրավորել C#-ի օգնությամբ: EF Core –ում հասանելի `Where()`, `Select()` մեթոդները օգտագործելով տվյալները կարող ենք ֆիլտրավորել տվյալների բազայում:
- Որոշակի քանակությամբ տվյալներ ստանալու համար օգտագործել `Take()` և `Skip()` մեթոդներ, օրինակ երբ ցանկանում ենք տվյալները ցույց տալ էջերով:

Վեբ հավելվածի արագործությունն ապահովելու համար անհրաժեշտ է որոշ օպտիմալացումներ կատարել կլիենտի կողմում: Դրանք են.

- Փաթեթավորում և մինիմալացում

Ներկայումս վեբ կայքերի դինամիկությունը և գեղեցիկ օգտագործողական ինտերֆեյսի համար լայնորեն օգտագործում են Javascript ծրագրավորման լեզվով գրված սկրիպտներ և CSS ոճեր: Մի հավելվածը կարող է պարունակել բազմաթիվ սկրիպտներ և ոճեր:

Փաթեթավորումը իրենից ներկայացնում է մի քանի ֆայլերի միացում իրար, այսինքն բրաուզերը կարդում է մեկ ֆայլ:

Հատուկ գործիքների միջոցով ֆայլերը կարելի է մինիմալացնել, որի արդյունքում տվյալ ֆայլերից ջնջվում են մեկնաբանությունները, բացասներն բրաուզերը կարդում է ավելի փոքր չափի ֆայլ:

- CSS ոճերը HTML-ինմիացնել էջի սկզբում, իսկ Javascript-ի սկրիպտները էջի վերջում:
- Նկարների չափերը փոքրացնել սեղման համար նախատեսված գործիքներով:

Այսպիսով, հաշվի առնելով, որ ASP .NET CORE-ը աշխատում է C# օբյեկտային-կողմնորոշված ծրագրավորման լեզվով, որը հանդիսանում է կոմպիլացվող լեզու, ապա դրա շնորհիվ էլ բավականաչափ մեծանում է .NET համակարգի աշխատանքի արագությունը: ASP .NET CORE-ի բոլոր կոմպոնենտները առանց ինտերպրիտացիայի աշխատում են ֆրեյմվորքի հետ, որն էլ իր հերթին կոմպիլացված է և կարողանում է անմիջականորեն կանչել օպերացիոն համակարգի ֆունկցիաները: Կոմպիլացման շնորհիվ սխալների մի մասը ի հայտ են գալիս ծրագրի մշակման նախնական փուլերում, ինչի շնորհիվ հնարավոր է լինում խնայել ժամանակ և խուսափել հետագայում ավելի մեծ սխալներից: Ինչպես նաև MVC շաբլոնի առկայությունը հնարավորություն է տալիս ծրագրային կողմ բաժանել երեք հիմնական մասերի, որը զգալիորեն մեծացնում է ծրագրավորողների հարմարավետությունը աշխատելու համար:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. *Чамберс Д., Пэкетт Д.* Тиммс С. ASP.NET Core Разработка приложений // Питер, 2018, С. 464.
2. *Freeman A.* Pro Entity Framework Core 2 for ASP .NET Core MVC // London, UK – 2018, P. 656.
3. <https://docs.microsoft.com/en-us/aspnet/core/>
4. <https://metanit.com/sharp/aspnet5/1.1.php>

РАЗРАБОТКА ВЕБ-ПРИЛОЖЕНИЙ ПО ТЕХНОЛОГИИ ASP.NET CORE

Д.Э. Израелян

Арцахский государственный университет

israelyan.diana@gmail.com

АННОТАЦИЯ

Разработка высококачественных и быстрых веб-приложений параллельно с интернет-разработкой стала необходимостью. Поэтому очень важно разрабатывать веб-приложения, которые будут соответствовать современным требованиям. В статье описывается описание технологии ASP.NET CORE и способы оптимизации производительности приложения.

Ключевые слова: ASP.NET CORE, разработка веб-приложений, MVC шаблон.

ԳԻՏԵԼԻՔՆԵՐԻ ՍՏՈՒԳՄԱՆ ԱՎՏՈՄԱՏ
ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄ ՀՆԱՐԱՎՈՐ ԹԵՍԵՐԻ
ՁԵՎԱԶԱՓԵՐԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆ
ԵՎ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՄՇԱԿՈՒՄ

Ն.Ն. Խուբլարյան, Գ.Տ. Մանուկյան

*ՎՊՀ, ԻՏՄՄ ամբիոն, դասախոս,
ՎՊՀ, Էլեկտրոնային կրթական տեխնոլոգիաների կառավարման և
սպասարկման բաժին, ցանցային ադմինիստրատոր*

n_khublaryan@mail.ru, gormail93@mail.ru

ԱՍՓՈՓՈՒՄ

Հայաստանում նոր թափ է ստանում էլեկտրոնային տեխնոլոգիաների կիրառումը ուսուցման գործընթացում, մասնավորապես գիտելիքների ստուգման իմաստով: Դրանք կիրառվում են թեմատիկ քննությունների, դպրոցական ավարտական քննությունների, բուհի ընդունելության քննությունների, աշխատանքի ընդունման հարցազրույցների և այլ դեպքերում: Թեստային համակարգերը ունենում են տարբեր ալգորիթմներ: Այսօր արդիական են ադապտիվ ալգորիթմները: Թեստային հարցերը կարող են լինել տարբեր ձևաչափի, որոնք հետաքրքիր են դարձնում թեստավորման գործընթացը: Մենք ուսումնասիրել ենք տարբեր հարցումների ձևաչափեր և մշակել սեփական համակարգը:

Հիմնաբառեր` թեստեր, ուսուցում, էլեկտրոնային համակարգ, գիտելիք, ստուգում:

Տեղեկատվական տեխնոլոգիաների զարգացման հետ մեկտեղ, Հայաստանի Հանրապետությունում (ՀՀ) նոր թափ է ստանում էլեկտրոնային տեխնոլոգիաների ներդրումը ուսուցման գործընթացում: Առավել մեծ ուշադրություն է դարձվում գիտելիքների ստուգման էլեկտրոնային համակարգերի վրա:

Թեստավորման էլեկտրոնային համակարգերը օգտագործվում են բազմաբնույթ բնագավառներում: Օրինակ՝ առարկայական ընթացիկ թեմատիկ քննություններ, դպրոցական ավարտական քննություններ, բուհի ընդունելության քննություններ, աշխատանքի ընդունման հարցազրույցներ և այլն: Թեստավորման, գնահատման և ուսուցման ավտոմատացված համակարգերի ներդրումը լայն տարածում է ստանում ՀՀ-ում:

Թեստերի առաջացման ճշգրիտ և ամբողջական պատմությունը հնարավոր չէ վերականգնել: Այնուամենայնիվ, նշենք այդ պատմության մի քանի կարևոր փուլեր.

- հին Բաբելոն - անց էին կացվում գրագետների դպրոցների շրջանավարտների քննություններ;
- հին Եգիպտոս - օգտագործվում էր դասընթացից ստացած գիտելիքների ստուգման համակարգեր;
- հին Հունաստան - անց էին կացվում ստուգումներ հատուկ բարդության մաթեմատիկական խնդիրների միջոցով;
- հին Չինաստան - օգտագործվում էր առաջին մասնագիտական կողմնորոշմամբ ստուգումները պաշտոնի թեկնածուների ստուգման համար;
- հին Հնդկաստան - իրականացվում էր իմաստունության ստուգում հատուկ խաղերի միջոցով;
- հին Վիետնամ - անց էին կացվում զինվորական և քաղաքացիական պաշտոնյաների գիտելիքների պարբերական ստուգումներ;

- Անգլիա - առաջին անգամ օգտագործվում էր գրավոր աշխատանքի ուսուցման արդյունքի ստուգման օբյեկտիվության բարձրացման համար;
- ԱՄՆ - լույս տեսավ առաջին առարկայական գիրքը, որը բաղկացած էր թեստային հարցերից;
- Ֆրանսիա - առաջին փորձերն էին կատարվում թեստավորման միջոցով երեխաների գիտելիքների ստուգման գործում;
- Ժամանակակից աշխարհ - մեծ կիրառություն է ստացել գիտելիքների թեստային ստուգումը, ինչպես նաև անց են կացվում քննություններ:

Համակարգչային թեստերի ստեղծումը կարելի է իրագործել հետևյալ հաջորդականությամբ.

- գիտելիքների նպատակային մոդելների ձևավորում;
- թեստային միջավայրի նախագծում;
- թեստային առաջադրանքների ձևավորում և բովանդակայինացում;
- ամբողջական համակարգչային թեստի ձևավորում;
- համակարգի փորձարկում;
- վերլուծում և ճշգրտում:

Ձևակերպենք հայտնի համակարգչային թեստերի տեսակները և մեկնաբանենք դրանք:

Ստանդարտ թեստեր.

▪ **Մեկ ճիշտ պատասխանի ընտրությամբ հարցեր** - թեստային առաջադրանք, որի կատարման ժամանակ ընտրվում է թվարկված տարբերակներից միակ ճիշտ պատասխանը:

▪ **Մեկ սխալ պատասխանի ընտրությամբ հարցեր** - թեստային առաջադրանք, որի կատարման ժամանակ ընտրվում է թվարկված տարբերակներից միակ սխալ պատասխանը:

▪ **Երկու և ավելի ճիշտ պատասխանների ընտրությամբ հարցեր** - թեստային առաջադրանք, որի կատարման ժամանակ ընտրվում է թվարկված տարբերակներից երկու և ավելի ճիշտ պատասխան:

▪ **Ճիշտ պատասխանի լրացում** - թեստային առաջադրանք, որի կատարման ժամանակ տրված դաշտում լրացվում է ճիշտ պատասխանը: Պատասխանը կարող է լինել մեկ բառ կամ մեկ թիվ:

Ժամանակակից թեստեր.

▪ **Էլեմենտների դասակարգում** - թեստային առաջադրանք, որի կատարման ժամանակ անհրաժեշտ է տրված տարրերը դասակարգել ըստ նշված երկու հայտանիշների: Տարրերը պետք է տեղադրվեն համապատասխան հատկանիշների սյունակներում:

▪ **Համապատասխանեցում** - թեստային առաջադրանք, որի կատարման ժամանակ անհրաժեշտ է ստեղծել համապատասխանություն երկու բազմության տարրերի միջև: Առաջին բազմության տարրերն իրենցից ներկայացնում են օբյեկտներ, երկրորդինը՝ հատկանիշ, կառուցվածք և այլն:

▪ **Ճիշտ հաջորդականության կառուցում** - թեստային առաջադրանք, որի կատարման ժամանակ անհրաժեշտ է տրված տարրերը ստանալ ճիշտ հաջորդականություն՝ ըստ նախօրոք նշված պայմանի կամ պայմանների:

▪ **Բաց թողնված բառի ընտրություն** - թեստային առաջադրանք, որի կատարման ժամանակ անհրաժեշտ է տրված հնարավոր տարբերակները (թափվող ցուցակից կամ բառերի բազմությունից) ընտրել և տեղադրել բաց թողնված բառը:

▪ **Մտքի ազատ շարադրանք** – թեստային առաջադրանք, որի կատարման ժամանակ անհրաժեշտ է շարադրել տրված առաջադրանքի պատասխանը մի կամ մի քանի նախադասության միջոցով:

Այս ամենը հաշվի առնելով, մենք մշակել ենք գիտելիքների ուսուցման և ստուգման տարբեր ձևաչափերի հարցադրումներ պարունակող ավտոմատացված թեստային համակարգ: Համակարգ մտնելիս հարկավոր է լրացնել որոշակի դաշտեր, պակաս դաշտ թողնելիս գալիս է հաղորդագրություն-զգուշացում, այն լրացնելու մասին: Բուն թեստավորման գործընթացը սկսում է միայն այն դեպքում, երբ տվյալները լրացված են ամբողջականորեն:


Ներկայացնենք մեր համակարգում առկա տարաբնույթ թեստային հարցեր.

1. մեկ ճիշտ պատասխանի ընտրությամբ հարց



Նկ. 1

2. մի քանի ճիշտ պատասխանի ընտրություն




Նկ. 2

3. Ճիշտ պատասխանի ներմուծում




Նկ. 3

4. Բաց թողնված բառի ընտրություն




Նկ. 4

5. Համապատասխանեցում



Նկ. 5

6. Էլեմենտների դասակարգում (կիրառել ենք քարշ տալ գցել տեխնոլոգիան)




Նկ. 6

7. Հաջորդականության կազմում




Նկ. 7

8. Բաց թողնված բառի տեղադրում




Նկ. 8

9 □ Համապատասխանեցում




Նկ. 9

Առաջադրվող թեստի համար տրված է կոճակներ՝ «պատասխանել» և «հանձնվել»: Սեղմելով «պատասխանել» կոճակին, հայտնվում է հաղորդագրություն՝ պատասխանի ճիշտ (Նկ. 10) կամ սխալ (Նկ. 11) լիելու մասին, սխալի դեպքում տրվում է նաև այն թեմայի վերնագիրը, որին վերաբերում է հարցը: Թեմայի վերնագիրը հուշում է, եթե դուք սկզբում նշել եք, որ ուսուցանող թեստավորում եք ընտրում, համակարգում կա նաև պարզապես թեստավորում: Վերջին դեպքում թեմայի վերնագիրը չի հուշվում:




Նկ □ 10




Նկ. 11

Թեստավորումն ավարտելուց հետո էկրանին հայտնվում է պատուհան, որտեղ նշվում է, որ թեստավորումն ավարտվել է և երևում է հաղորդագրություն թեստավորվողի հավաքած միավորների վերաբերյալ (նկ.12):



Նկ. 12

Մեղմելով «հանձնվել» կոճակը, համակարգն ավտոմատ պատասխանում է ընթացիկ հարցին (Նկ. 13):



Նկ. 13

Ուսումնական հաստատությունների վարկանիշը չափվում է ոչ միայն դասավանդման ընդհանուր մակարդակով և ճանաչված դասավանդողներով, այլև սովորողների գիտելիքների վերահսկման համակարգի արդյունավետությամբ:

Մեր հեղինակած թեստավորման համակարգը հետապնդում է 2 նպատակ՝ ոչ միայն ուսուցիչն է ստուգում աշակերտի գիտելիքները,

այլ նաև աշակերտն ինքն է ստուգում իր գիտելիքները, հնարավորություններն ու կարողությունները (սա ուսուցանում թեստավորմամբ ճշտությամբ):

Գնահատման ավտոմատացված համակարգերը բազմազան են: Մակայն այդ համակարգերում հիմնականում տեղ են գտնում պարզագույն թեստերի ստեղծման ադապտիվ ալգորիթմներ: Այդպիսի համակարգերում ցանկալի է, որ լինեն գրաֆիկական և այլ պատկերազարդ հարցեր:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. *Խուրլարյան Ն., Հարությունյան Հ.* Организация тренинга в системах электронного обучения, Մխիթար Գոշ , Վանաձոր, 2010թ. N 3, էջ 162–164:
2. *Виштан О.В.* Критерии создания электронных учебных материалов. Педагогика. 2003. № 8.
3. *Герасимова Г.* Компьютерное тестирование на уроках информатики, Информатика и образование. 2006. № 9.

ИЗУЧЕНИЕ ВОЗМОЖНЫХ ФОРМАТОВ ТЕСТОВЫХ ЗАДАНИЙ И РАЗРАБОТКА АВТОМАТИЧЕСКОЙ СИСТЕМЫ КОНТРОЛЯ ЗНАНИЙ

Н.Н. Хубларян, Г.Т. Манукян

ВГУ, каф.ИЭММ, преп., ВГУ, отд. упр. и обслуж.эл.обуч.тех.,

n_khublaryan@mail. rugormail 93@mail.ru

АННОТАЦИЯ

В Армении набирает силу использование электронных технологий в процессе обучения, особенно в плане тестирования знаний. Эти технологии используются в тематических школьных, вступительных экзаменах, опросах при трудоустройстве и многом другом. Системы тестирования имеют разные алгоритмы. Сегодня распространены адаптивные алгоритмы. Тестовые вопросы могут быть разных форматов, что делает процесс тестирования интересным. Мы изучили различные форматы запросов и разработали нашу собственную систему.

Ключевые слова: тесты, обучение, электронное система, знание, проверка.

ФИЗИКА

РАДИОЛОКАЦИОННАЯ СТАНЦИЯ 10-И САНТИМЕТРОВОГО ДИАПАЗОНА ДЛИН ВОЛН

В.А. Варданян, А.К. Агаронян

*Российско-Армянский университет,
Ереванский научно-исследовательский институт средств связи
Научный руководитель к. т.н., доцент А.К. Агаронян*

v.vardanyan00@gmail.com, aharaharonyan@gmail.com

АННОТАЦИЯ

В данной работе предлагается линейная антенная решетка для кругового обзора с одной точкой возбуждения. В качестве излучателей данной решетки используются прямоугольные полосковые резонаторы. Это позволяет упростить конструкцию решетки, что приводит к уменьшению стоимости решетки. Представлены результаты численного моделирования микрополосковой антенной решетки вертикальной поляризации для систем ближней радиолокации сантиметровых волн.

Ключевые слова: сантиметровый диапазон, фазированная антенная решетка, диаграмма направленности, радиолокационная система ближнего действия.

Введение

Появление микрополосковых антенных устройств вызвано потребностью в легких, тонких, комфортных и дешевых антенных устройствах. Любое микрополосковое антенное устройство представляет собой лист

диэлектрика небольшой толщины с тонким медным покрытием с обеих сторон. На одной стороне расположены излучающие элементы, цепи питания, управления и согласования. Другая металлическая сторона антенной платы служит экраном. Подобные плоские антенные решетки используются в обзорных наземных радиолокаторах, в бортовых радиолокаторах с синтезированной апертурой для мониторинга земной поверхности.

В данной работе предлагается линейная антенная решетка для кругового обзора с 16-ю точками возбуждения. Это позволяет упростить конструкцию решетки, что приводит к уменьшению стоимости системы.

В связи с этим, для обеспечения высокой точности работы, нужно иметь достаточно узкий луч (в горизонтальной плоскости), по сравнению с вертикальной плоскостью. Для реализации данной решетки с вертикальной поляризацией было проведено исследование с следующими исходными данными (данные были определены и улучшены путем анализа параметров аналогичных систем): рабочая полоса частот 8.9-9.15 ГГц, ширина луча решетки по горизонтальной плоскости 1.5° , ширина луча решетки по вертикальной плоскости 20° , коэффициент усиления решетки 27 дБ, уровень боковых лепестков в горизонтальной плоскости < -19 дБ.

Теоретические расчеты параметров линейной антенной решетки

В качестве излучателя в данной линейной антенной решетке используется прямоугольный полосковый резонатор (рис.1). Материалом подложки служит RO4360G2, имеющий $\epsilon_r = 6.4$, ширина диэлектрика 0.81-3мм.




Рис. 1. Геометрический вид резонатора

Определение параметров данного резонатора на центральной частоте 9ГГц осуществляется следующим образом.

⁶<https://ria.ru/economy/20050507/39945565.html>(дата последнего обращения –03.05.2018)

⁷Артемьев М.А. Лягушка в кипящей воде/г.Независимая/ Доступ к ресурсу -http://www.ng.ru/courier/2010-01-18/10_taiwan.html(дата последнего обращения – 03.05.2018)

⁸*Мозаик П.М.* Тайвань: Экономические итоги президентства Чэнь Шуйбяня / МГОУ / Москва/2009//Доступ к ресурсу -<https://cyberleninka.ru/article/v/tayvan-ekonomicheskie-itogi-prezidentstva-chen-shuybyanya>(дата последнего обращения –03.05.2018)

На основе вышеперечисленных фактов мы приходим к выводу, что партия Гоминьдан сохраняет сопоставимое с ДПП влияние. Именно из-за того, что между Гоминьданом и ДПП наблюдается паритет, ни одна из партий не рискует, да и не стремится менять сложившийся статус-кво, несмотря на различия в идеологии. Красноречивым доказательством условного равенства противников служит статистика выборов последних 27 лет.

В 1991 году в результате политического кризиса Китайская Республика впервые избрала парламент по итогам всенародных выборов. Благодаря огромной популярности ее лидер Ли Дэньхуея, партии Гоминьдан удалось сохранить власть. Однако уже в 2000 году, на пост президента был избран кандидат от ДПП Чэнь Шуйбянь, который до этого был избран первым мэром Тайбея от ДПП. В следующем году ДПП выиграла выборы в Законодательный Юань. Удержавшись у власти два срока, в 2008 году Чэнь Шуйбянь уступил кандидату от Гоминьдана. ДПП так же уступила Гоминьдану на парламентских выборах 2008 года. На данный момент, по результатам президентских и парламентских выборов 2016 года, Китайскую Республику вновь возглавляет ДПП, во главе с президентом Цай Инвень.

Подводя итог, политическая элита Китайской Республики идеологически поляризована, одновременно между ними наблюдается паритет, поскольку ни одна из сторон не способна окончательно перетянуть на свою сторону большую часть избирателей. Однако не надо забывать, что на расстановку сил на политической арене Тайваня непрерывно влияет материковый Китай, отношение с которым во многом и определяет повестку обеих партий.

Так, с приходом к власти правительства Си Цзиньпина произошли существенными изменения в проводимой внешней политике КНР. Если раньше власти КНР старались не давить на Тайвань в военном отношении, тем более что и повода к этому у Пекинского правительства не было, то теперь материковый Китай стал активнее использовать свой военно-морс-

кой флот для демонстрации силы, путем проведения военно-морских учений у берегов КР.⁹ Это воздействие направлено не только на Тайвань, но и другие страны Азиатско-Тихоокеанского региона. Причина этого кроется не только в несговорчивости нового тайваньского правительства, но и в желании показать заокеанским гарантам КР и другим странам, таких как Япония, Южная Корея и Вьетнам, кто является истинным хозяином в Южно-китайском море. Это, в свою очередь привело к ответной реакции Тайваньской стороны, проявлением которой стали военные учения, главная цель которых показать, что ВС Тайваня вполне способны отразить вторжение, а так же, покупка новейшего вооружения у США.¹⁰

Впрочем, гарантом сохранения Китайской Республики, несмотря на все мероприятия по усилению собственных вооруженных сил, по сей день остается американский Военно-морской флот. Это связано с тем, что Тайваньский ВМФ, да и вооруженные силы в целом, хоть и оснащены достаточно современными образцами вооружения, но в реальности многократно уступают той же НОАК. Впрочем, некоторые политические аналитики считают, что тенденция экономического сближения рано или поздно приведет к сближению политическому, которое произойдет уже вне зависимости от правящей на Тайване политической силы или наличия кораблей ВМФ США в регионе. Разрыв экономических связей между материком и Тайванем в условиях современной глобальной экономики может привести к неминуемому недовольству местных, тайваньских, торгово-промышленных элит. Их интересы, судя по активному сотрудничеству с материком, невзирая на идеологический аспект, всегда учитывались в полной мере. Концепция «одна страна-две системы» прекрасно продемонстрировала нам свою жизнеспособность на примере Гонконга и Макао. В подобных условиях поляризация двух главных политических сил на Тайване вовсе не удивительна. И именно в этом причина многих проблем современного Тайваня.

⁹Мельничук С. Коммунизм победил/и.и Lenta.ru/ Доступ к ресурсу-
https://lenta.ru/articles/2018/03/06/vsem_kitai/(дата последнего обращения –03.05.2018)

¹⁰<https://russian.rt.com/world/article/404689-vashington-taivan-kitai-voorujenie>

Таким образом, национальная политическая элита Китайской Республики, разделена на две равные по влиянию политические силы. Несмотря на, в целом, прагматичную политику, без экономического повода, в виде многомиллионного товарооборота с материковым Китаем, каждая из партий вполне способна, наплевав на достижения прошлых администраций, поменять политический курс страны на 180°. Данное утверждение справедливо как к ДПП, так и к Гоминьдану. Именно этот поводок, неразрывно связавший экономику КНР и Тайваня, вместе с ВМФ США, сегодня выступает основным гарантом возможности продолжения межгосударственного диалога между обоими берегами Тайваньского залива.

ЛИТЕРАТУРА

1. Конституция Китайской Республики // Правительственное информационное бюро Китайской Республики // Тайбэй / 1998 // Перевод: Поляков В.П., Гудошников Л.М. «МК-Сервис», М. Доступ к ресурсу: http://grachev62.narod.ru/const_taiwan/content.html#introd (дата последнего обращения: 03.05.2018).
2. *Войтенко Э.М., Лексютина Я.В.* Тайвань между Китаем и Америкой / и.ж. Россия в Глобальной Политике / Доступ к ресурсу: <http://www.globalaffairs.ru/number/Taiwan-mezhdu-Kitaem-i-Amerikoi-15108> (дата последнего обращения: 03.05.2018).
3. *Мозаис П.М.* Тайвань: Экономические итоги президентства Чэнь Шуйбяня / МГОУ. М., 2009. Доступ к ресурсу: <https://cyberleninka.ru/article/v/taiwan-ekonomicheskie-itogi-prezidentstva-chen-shuybyanya> (дата последнего обращения: 03.05.2018). Официальный сайт президента Китайской республики (на английском) Доступ к ресурсу: <https://english.president.gov.tw/Page/94> (дата последнего обращения: 03.05.2018).
4. *Артемьев М.А.* Лягушка в кипящей воде/ г. Независимая/ Доступ к ресурсу: http://www.ng.ru/courier/2010-01-18/10_taiwan.html (дата последнего обращения: 03.05.2018).

5. Мельничук С. Коммунизм победил /и. и Lenta.ru / Доступ к ресурсу:
https://lenta.ru/articles/2018/03/06/vsem_kitai/
6. Большинство китайцев за переговоры между главами Тайваня и КНР /
И. о. РИА Новости / Доступ к ресурсу:
<https://ria.ru/economy/20050507/39945565.html>
(дата последнего обращения: 03.05.2018).

**POLITICAL ELITE OF THE REPUBLIC OF CHINA (TAIWAN):
GENERAL OVERVIEW AND CURRENT SITUATION**

O. Bardakchyan

Russian-Armenian University

hovobard@gmail.com

ABSTRACT

This study describes the path of formation of the modern political elite of the Republic of China (Taiwan). It also gives a general description of the modern political system of the country and the main political forces. The reasons and patterns of internal political processes in Taiwan are also considered.

Keywords: year, Republic of China, Taiwan, the Kuomintang Party, political.

КОНФЛИКТ БОЛЬШЕВИСТСКОЙ ВЛАСТИ И ЦЕРКВИ В ПЕРВЫЕ РЕВОЛЮЦИОННЫЕ ГОДЫ

Н.Э. Щедров

*Армавирский механико-технологический институт (филиал) ФГБОУ ВО
«Кубанский государственный технологический университет»*

shchedrov.ne@bk.ru

АННОТАЦИЯ

В статье автор акцентирует внимание на взаимоотношениях новой большевистской власти и православной церкви. Он рассматривает отношение большевистского руководства к религии, исследует проблему влияния политики большевиков на церковную и духовную жизнь России периода Гражданской войны. Автор пытается проследить изменения в данной политике, ее общую направленность, а также основные характеристики. В статье также исследуется специфика взаимоотношения большевиков и православной церкви, включая отношение большевиков к религиозному вопросу в целом.

Ключевые слова: церковь, православие, система ценностей, сакральный образ, вероучение.

Актуальность темы исследования определяется спецификой современного этапа исторического развития, который характеризуется возрождением традиционных ценностей, в том числе и религии. В современный период различные конфессии переживают «вторую жизнь». Они находят все больше последователей, в обществе усиливается интерес к сакральным аспектам существования человека, к духовному самосовершенствованию, к постижению вклада религии в национальную культурную традицию. Исходя из этого, значительно усиливается интерес к переломным моментам

человеческой истории, когда в кризисные периоды менялось мировоззрение людей и сталкивались различные мировоззренческие парадигмы. В современный период необходимо избежать таких столкновений и конфронтации, извлечь все те уроки из прошлого, которые помогут улучшить день сегодняшний.

В этой связи мировоззренческие конфликты в кризисные периоды истории вызывают особый интерес исследователей. В значительной мере данные обстоятельства относятся к периоду Гражданской войны в России, когда набирала силу тенденция ликвидации духовных достижений исторического прошлого, богоборчества, отрицания роли религии в жизни общества. Различные исследователи предпринимали попытки изучить данный непростой период в истории России с точки зрения борьбы новой большевистской власти с прежним религиозным мировоззрением. Среди них можно назвать таких авторов, как И.К. Смолич, С.В. Римский, Д.В. Поспеловский, Н.Ю. Беликова, В. Цыпин и др.

Ниспровержение религиозных символов в годы революции и Гражданской войны нередко имело чисто корыстную или криминальную подоплеку, но, несомненно, указывало на постепенный отход широких народных масс от религиозных ценностей и разрушение в их сознании сакрального образа самого вероучения, церковной организации и служителей церкви. Один из участников уже упомянутого собора – Товарищ Председателя Архиепископа Харьковского Антоний сообщал о следующем: «В начале нынешнего сентября в одном селе под г. Орлом; здесь был зверски убит уважаемый священник о. Григорий Рождественский со своим юношей-племянником на глазах жены; заграбив деньги, разбойники бежали, заслышав набат, а собравшиеся прихожане, увидев плавающего в своей крови убиенного пастыря, принялись растаскивать все оставшееся после грабителей имущество осиротевшей матушки: рожь, овес, яблоки – все, что попало под руки. Отсюда видно, что не одни только отщепенцы человеческого общества, но чуть не целые деревни могут постепенно обращаться в злодеев» [1, 201]. Конечно, это не целые деревни были населены

злодеями, в них жили обычные крестьяне, которые были не хуже и не лучше других, просто само значение священнослужителя и отправляемых им религиозных обрядов утратило для них свой сакральный смысл.

Церковь как могла противостояла постепенному разрушению религиозной основы общества. Помимо призывов к верующим одуматься и вернуться в лоно православия, одной из таких мер, призванных усилить ее авторитет, стало введение патриаршества.

«В то время, когда в Русском государстве не находится подобающего места православной вере, приходится думать... о создании такой церковной организации с патриархом во главе, при которой бы мы всегда чувствовали себя в России православно-русскими людьми. Нам нужен патриарх – носитель начал церковности, представитель Церкви, к авторитетному голосу которого прислушивались бы православные русские люди. Нашей Церкви нужен опытный кормчий среди страшных волн бушующего житейского моря» [1, с. 437]. Однако процессы распада традиционного сознания не удавалось остановить никакими организационными или ритуальными мерами, он продолжал идти к своему логическому завершению.

Значительная часть народных масс активно участвовала в мероприятиях большевиков и была проводником религиозной политики партии, направленной на разрушение православной церкви и традиционных религиозно-нравственных представлений. Служители культа воспринимались ею как враги советской власти, пособники белогвардейцев и вообще противники трудящихся масс, всякие соглашения с которыми были невозможными, а компромиссы в отношениях с ними недопустимыми. Эта часть населения принимала активное участие в разрушении храмов, преследовании священнослужителей и поддерживало борьбу большевиков с православной церковью. В своей деятельности она исходила из того, что ликвидация церковных институтов, разрушение системы религиозных ценностей приведет к освобождению человека труда от оков, навязанных ему царским режимом и традиционным государством.

Однако эта часть основных слоев населения России все же была относительно немногочисленна. Большинство же было тех, кто достаточно пассивно и без всякого энтузиазма относился к происходящей на их глазах

борьбе церкви и новой политической власти, практически не участвуя в ней. Эта часть населения была лишь пассивным участником этого противостояния и следовала за антирелигиозной кампанией без особой охоты, исходя только из политической необходимости и из соображений лояльности новому режиму.

Для них церковь всегда была не просто институтом самодержавного государства, подлежала разрушению, но и частью, причем неотъемлемой, их собственной жизни, общественного бытия. Церковь, в их представлениях, была тесно связана с повседневной жизнью и бытом. Ее обряды, ритуалы, праздники прочно вписывались в их картину мира и занимали в ней не столько священное, сакральное место, а бытовое, повседневное, дополняя народные традиции и обычаи. Особенно сильны были элементы религиозного сознания в крестьянской среде. Так, В.И. Ленин обращал внимание на следующий факт: «У нас в городах и фабрично-заводских местах... закон о полной свободе брака прививается хорошо, а в деревне это часто остается на бумаге. Там до сих пор преобладает церковный брак. Этим они обязаны влиянию священников, с этим злом труднее бороться, чем со старым законодательством» [2, с. 186]. Религиозные представления большей части населения страны имели скорее внешнюю обрядовую форму, без глубокой религиозности, хотя и занимали прочное место в их системе ценностей и были тесно связаны с восприятием окружающего мира и его повседневностью, собственным местом в нем.

В тезисах по агитации среди членов партии, изданных Агитпропом Краснодарского от парткома в 1920г., отмечалось следующее: «На местах наблюдаются случаи, когда даже ответственные партийные товарищи принимают участие в религиозных церемониях и обрядах. Малосознательные же коммунисты, в силу своих старых привычек или в угоду несознательным женщинам, венчаются по церковному обряду, совершают крещение своих детей, или же присутствуют на таких крещениях в качестве «кумовей» или «крестных отцов». Нередки такие случаи хождения партийных товарищей в церковь, участия на похоронах, соблюдения постов и пр., причем, присутствуя в церкви, эти товарищи выполняют разного рода магические фокусы, вроде коленопреклонения, держания свеч и т.п....

Участие партийных работников в каких-либо публичных религиозных церемониях и обрядах, с одной стороны, подрывает доверие всей партии в глазах трудящихся масс, а с другой, – это хождение членов в церковь, соблюдение религиозных обрядов дает повод обывательским массам пускать провокационные слухи о том, что коммунизм признает Бога и церковь с ее служителями. Это обстоятельство является одним из главных тормозов в деле борьбы партии с религиозными предрассудками и суевериями темных масс» [3]. Данные предрассудки плохо вписывались в новую картину мира всемерно формируемой новой большевистской властью. Проводимая большевиками системная модернизация общества затрагивала в том числе и его духовную составляющую, и сохранение прежних религиозных ценностей объявлялось антипартийным проступком, вредящим построению дела коммунизма в стране. Участники религиозных обрядов считались недостойными высокого звания коммуниста-ленинца [4, 5].

Таким образом, можно заключить, что большевистская партия стремилась противопоставить религии собственную систему ценностей, основанную на идеологии марксизма. Исходя из этого, совмещение членства в партии и одновременное исполнение религиозных обрядов признавалось недопустимым. К тем, кто отклонялся от общих партийных установок в отношении религии, применялись меры дисциплинарного характера. Помимо этого, среди населения велась разъяснительная работа, целью которой было разрушение прежнего религиозного сознания.

ЛИТЕРАТУРА

1. Священный Собор Православной Российской Церкви 1917–1918 гг. Т. 2. Деяния (XVII-XXX). М., 1994.
2. Ленин В.И. Полное собрание соч. Т. 37. М., 1974.
3. ГАКК. Ф. Р – 411. Оп.2. Д.376. Л.43.
4. Беликова Н.Ю. Влияние модернизационных процессов на религиозную жизнь общества в начале XX века (на материалах Юга России) // Известия высших учебных заведений. Северо-Кавказский регион. Серия: Общественные науки. 2013. №2(174). СС. 36-41.

5. *Беликова Н.Ю.* Православная церковь и государство на Юге России: (конец XIX-первая треть XX вв.): [монография] / Н.Ю. Беликова. Краснодар, 2004. 162 с.

THE CONFLICT OF THE BOLSHEVIK GOVERNMENT AND OF THE CHURCH IN THE EARLY REVOLUTIONARY YEARS

N. Schedrov

*Armavir Institute of Mechanics and Technology (branch) of FSBEI HE
«Kuban State Technological University»*

ABSTRACT

In the article the author focuses on the relationship between the new Bolshevik government and the Orthodox Church. He examines the attitude of the Bolshevik leadership to religion, examines the problem of the influence of the Bolshevik policy on the Church and spiritual life of Russia during the Civil war. The author tries to trace the changes in this policy, its General orientation, as well as the main characteristics. The article also examines the specifics of the relationship between the Bolsheviks and the Orthodox Church, including the attitude of the Bolsheviks to the religious issue as a whole.

Keywords: Church, Christianity, values, sacred way, a creed.

**ԱՂԻԲԵՋԱՆԱԿԱՆ ՊԱՏՄԱԲԱՆՆԵՐԻ
ԽԵՂԱԹՅՈՒՐՈՒՄՆԵՐԸ ԼՂԻՄ ԿԱԶՄԱՎՈՐՄԱՆ
ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ՀԱՐՑԻ ՇՈՒՐՁ**

Է.Է. Հայրապետյան

Արցախի Պետական համալսարան

ellada-hayrapetyan@mail.ru

ԱՄՓՈՓԱԳԻՐ

Հոդվածում փորձ է կատարվել յուրովի ներկայացնել ԼՂԻՄ-ի կազմավորման գործընթացը: Հատուկ ուշադրություն ենք դարձրել ԼՂԻՄ-ի տարածքային կորուստներին, որի հետևանքով նրա տարածքը կազմել էր ընդամենը 4431,7 քառ. կմ:

Փորձել ենք թեմային առնչվող մի խումբ հայ պատմաբանների տեսակետները ներկայացնելով բացահայտել ադրբեջանցի պատմաբանների խեղաթյուրումները ԼՂԻՄ-ի կազմավորման հարցի շուրջ: Այն միտքն ենք ընդգծել, որ Լեռնային Ղարաբաղի ինքնավարության խնդիրը ադրբեջանական իշխանություններին ձեռնտու որոշում չէր, ուստի տարածքային խեղումների ճանապարհով և Ադրբեջանի հետևողական քաղաքականության արդյունքում Ղարաբաղի լեռնային շրջանի արևմտյան մասը՝ Արաքսի ափից մինչև փոքր Կովկասյան լեռնաշղթայի հյուսիսային փեշերը կտրվեցին և ստեղծվեց «Քուրդիստանի գավառ», դրանով իսկ Արցախը անջատվեց մայր Հայաստանից:

Հոդվածում նշել ենք, որ չնայած ադրբեջանական իշխանությունների կողմից ծավալած հակահայկական և ազգային խտրականության քաղաքականությանը, այնուամենայնիվ արցախահայությունը

կարողացավ դիմակայել Ադրբեջանի սադրանքներին, և տասնյակ տարիների պայքարի արդյունքում անկախություն կերտեց:

Հիմնաբառեր: Լեռնային Ղարաբաղի Ինքնավար Մարզ, դեկրետ, ազգային-տարածքային կազմավորում, կեղծարարություն, տարածքային կորուստներ:

Ներածություն

Արցախ աշխարհը եղել է Մեծ Հայքի 10-րդ նահանգը, որը վաղնջական ժամանակներից սկսած բնակեցված է եղել հայերով: Մեր ժողովրդի պատմության բախտորոշ պահերին արցախցիները թշնամու դեմ պայքարի առաջին շարքերում՝ իրենց հայրենասիրությամբ ու արիությամբ նորանոր սխրանքների են կոչել սերունդներին: Արցախը միշտ մտահոգվել է Մայր Հայաստանի ճակատագրով և մասնակցել բոլոր վճռորոշ ճակատամարտերին՝ Ավարայրից մինչև Սարդարապատ:

Պատմությունը բարեհաճ չգտնվեց արցախահայության նկատմամբ 20-րդ դարում: ՌԿ(Բ)Կ Կենտկոմի Կովկասյան բյուրոն 1921թ. հուլիսի 5-ին ընդունեց ապօրինի որոշում՝ Լեռնային Ղարաբաղը թողնել Ադրբեջանի կազմում ինքնավար մարզի կարգավիճակով. պատճառաբանելով, որ այն տնտեսապես կապված է Ադրբեջանի հետ, ինչպես նաև հայերի և մահմեդականների միջև խաղաղություն պահպանելու անհրաժեշտությամբ: Այդ անարդարացի որոշումից հետո, 1923թ. վարչականորեն կազմվեց Լեռնային Ղարաբաղի ինքնավար մարզը: ԼՂԻՄ կազմավորման հենց սկզբից Ադրբեջանի ղեկավարությունը կոպտորեն ոտնահարել է հայ բնակչության իրավունքներն ու շահերը:

Վերոհիշյալ թեմային իրենց աշխատություններում որոշ չափով անդրադարձել են պատմաբաններ Բ.Ուլուբաբյանը[1], Կ. Խաչատրյանը[2], Վ. Բալայանը[3] և այլք: Ադրբեջանցի պատմաբաններն ևս՝ Իլգար Մամմադովը[4], Իգրար Ալիևը[5] և այլք, իրենց հերթին հնարավոր և անհնար միջոցներով փորձում են խեղաթյուրել դեպքերն ու իրադարձությունները: Թեման *արդիական* և հրատապ է, քանզի Ադրբեջանական իշանությունները ցայսօր փորձում են Արցախը ներկայացնել որպես «օկուպացված տարածք», տարբեր միջազգային ամբիոններից հայտարարում են, որ Արցախը և Երևանը ադրբեջանական տարածքներ են: Այստեղ մոռանում են մի անհերքելի փաստ. քաղաքական տարբեր խաղերի արդյունքում է, որ Արցախը նվիրաբերվեց Ադրբեջանին:

Վերցնելով այս թեման մեր առջև դրել ենք հետևյալ *նպատակը*՝ ներկայացնել ԼՂԻՄ-ի տարածքային կորուստները և այդ ուղղությամբ Ադրբեջանի իրականացրած հետևողական քաղաքականությունը: Եվ ամենակարևորը ցույց տալ, որ Արցախը պատմական հայկական տարածք է, և ադրբեջանական պատմաբանների աշխատությունները ոչ այլ ինչ են, եթե ոչ կեղծարարություն:

Թեմայի նպատակին հասնելու համար, մեր առջև դրել ենք հետևյալ *խնդիրները*

- Լուսաբանել ԼՂԻՄ-ի կազմավորման ընթացքը:
- Ադրբեջանական աղբյուրների ուումնասիրությամբ ներկայացնել նաև Ադրբեջանի դիրքորոշումը ԼՂԻՄ-ի նկատմամբ

ՀԻՄՆԱԿԱՆ ՆՅՈՒԹ

Առաջին համաշխարհային պատերազմի տարիներին Թուրքիայի համար իրական հնարավորություններ են ստեղծվում պանթյուրքիստական ծրագրերի իրագործման համար, որոնց առաջին թիրախը

դարձան Հարավային Կովկասը և Հյուսիսային Իրանը: Թուրքիան ձգտում էր Կովկասում մահմեդական պետություն ստեղծել, որը պետք է իր համար որպես անուն վերցնէր Պարսկաստանի հյուսիսային պատմական մարզի՝ Ադրբեջանի անվանումը[6]:

Այսպես՝ 1918թ. առաջանում է Ադրբեջան պետությունը: Այս արհեստածին պետությունը հիմնադրման առաջին օրերից տարածքային հավակնություններ հանդես բերեց հայկական մի շարք տարածքների՝ Զանգեզուրի, Նախիջևանի, Լեռնային Ղարաբաղի նկատմամբ: 1921թ հուլիսի 5-ի ՌԿ(Բ)Կ Կովբյուրոյի պլենումի ապօրինի որոշմամբ Լեռնային Ղարաբաղը բռնակցվեց Ադրբեջանին: Արցախահայությունը չընդունեց վերոհիշյալ ապօրինի որոշումը: Ողջ Արցախում ադրբեջանական իշխանությունների դեմ քաղաքացիական անհնազանդության շարժում սկսվեց: Լեռնային Ղարաբաղի հայության կամքը կոտրելու և Ադրբեջանին ենթարկեցնելու համար Բաքվից մի շարք ներկայացուցիչներ ուղարկվեցին երկրամաս:

Ասքանազ Մոավյանի՝(Լեռնային Ղարաբաղում ՀԽՍՀ արտակարգ լիազոր ներկայացուցիչ Ղարաբաղից Երևան վերադառնալուց հետո, Ադրբեջանի իշխանությունները Ղարաբաղի լիազոր նշանակեցին Ալիհեյդար Կարանին: Որպես երկրորդ լիազոր՝ Ղարաբաղ ուղարկվեց Ադրբեջանի նախարարների խորհրդի նախագահի տեղակալ և արհմիությունների հանրապետական խորհրդի նախագահ Լևոն Միրզոյանը: Նրանք Արցախի շրջաններում հրավիրեցին խորհուրդների շրջանային արտահերթ համագումարներ և փորձեցին կորզել Ադրբեջանի շահերից բխող որոշումներ: 1921թ. օգոստոսի 1-ին Լեռնային Ղարաբաղի Հաղորտի գյուղում տեղի ունեցավ Վարանդայի խորհուրդների արտահերթ համագումար, որտեղ, չնայած Լևոն Միրզոյանի ջանքերին, ադրբեջանական պատ որոշում չկայացվեց: 1921թ. օգոստոսի 8-ին Լ. Միրզոյանը, վերադառնալով Բաքու, Ադրբեջանի ղեկա-

վարությանը առաջարկեց Լեոնային Ղարաբաղին տալ ինքնավարություն[7]: Հարկ է նշել, որ այս առաջարկությունը արցախահայության համար նորություն չէր: Դեռևս 1921թ. հուլիսի 5-ի տխրահռչակ որոշմամբ Լեոնային Ղարաբաղի հայությանը վերապահվել էր որոշակի ինքնավարության կարգավիճակ: Դրա նպատակը մեկն էր՝ կոտրել Լեոնային Ղարաբաղի հայության ազգային ազատագրական շարժման թափը:

1921թ. հուլիսի 20-ին Ադրկոմկոմի Քաղբյուրոն և Կազմբյուրոն ստեղծում են մի հանձնաժողով, որը պետք է մշակեր Լեոնային Ղարաբաղի Սահմանադրությունը[8]:

1921թ. սեպտեմբերի 26-ին Ադրկոմկոմի Քաղբյուրոն և Կազմբյուրոն որոշում են. «Ինդրել Կովբյուրոյին՝ վերանայելու իր որոշումը Լեոնային Ղարաբաղն առանձնացնելու մասին, այսուհետ ինքնավարություն չհայտարարել» [9]:

Հայտնի չէ, այս լպիրշ որոշմանն ինչպես է վերաբերվել Կովկասյան Բյուրոն: Բայց ահա տեղում՝ Ադրբեջանում, այն գործողությունների ծրագիր էր դարձել և ոչ միայն ինքնավարության հարցը օրակարգից հանվեց, այլև իշխանությունները Լեոնային Ղարաբաղի շրջաններում լծվեցին հակահայկական արշավանքի, որից մարզը պետք է քրքրվեր ամենակարճ ժամանակում: 1921թ. հոկտեմբերի 21-ին հրավիրված Ղարաբաղի պատասխանատու աշխատողների կոնֆերանսում «Ղարաբաղի դրության մասին» զեկուցումով հանդես գալով՝ Ա. Կարանն (այսպես կոչված ղարաբաղյան գործով ստեղծված հատուկ հանձնաժողովի նախագահ) ընդունեց այսպիսի որոշում. «Ղարաբաղի աշխատողների կոնֆերանսը աննպատակահարմար է համարում Լեոնային Ղարաբաղի բաժանումն իբրև առանձին ինքնավար մարզի և գտնում է, որ բոլոր միջոցառումները, որոնք նշվում են վերը՝ բանաձևում, հենց հանդիսանում են ղարաբաղյան հարցի լուծում» [10]: Բա-

նաձևում առաջարկվում է «անխնա գնդակահարել» անհնազանդներին: «Ազգայնական հոգի և ազգայնական տրամադրություններ ունեցող բոլոր աշխատակիցները պետք է անհետաձգելիորեն դուրս շարտվեն ու փոխարինվեն ինտերնացիոնալիստ աշխատակիցներով» [11]:

Ազգայնական տվյալ դեպքում նշանակում էր Արցախի հայ, ինտերնացիոնալիստ՝ անպայման ադրբեջանցի:

Կոնֆերանսի նման դիրքորոշումը հնարավորություն է ստեղծում աշխատանքից հեռացնելու հայրենասեր, ժողովրդի հոգսերով ապրող հայ գործիչներին՝ նրանց փոխարինելով ադրբեջանցիներով կամ էլ, Ադրբեջանի կամքը արտահայտող հայ աշխատակիցներով:

1922թ. փետրվարին Թիֆլիսում տեղի ունեցած Անդրկովկասյան կոմունիստական կազմակերպությունների առաջին համագումարում Ադրբեջանի ներկայացուցիչ Կուլիևը, անդրադառնալով Լեռնային Ղարաբաղի ինքնավարության հարցերին, նշել է. «Ադրբեջանական Կենտկոմն էլ, որ Ղարաբաղի հարցի պարզաբանման համար հանձնաժողով էր ընտրել, շատ ճիշտ վարվեց, երբ ասում էր, Ղարաբաղին պետք չէ, ոչ մի ինքնավարություն: Այդ մոտեցումը ճիշտ էր, և այդպես պետք է մոտենալ, որպեսզի հաստատվի իսկական խաղաղություն և Ղարաբաղում, և Անդրկովկասում» [12]:

Ադրբեջանի ղեկավարությունը Նարիմանովի գլխավորությամբ տարբեր պատճառաբանություններով ձգձգում էր Լեռնային Ղարաբաղի ինքնավարության հռչակումը: Եվ այնուամենայնիվ 1923թ. հուլիսի 1-ին ԱդրԿ(բ)Կ կենտկոմի նախագահությունը ստիպված է լինում առաջարկել Ադրբեջանի Կենտգործկոմին հռչակել Լեռնային Ղարաբաղի ինքնավարությունը և ստեղծել «Ղարաբաղի ինքնավար մարզ՝ Խանքենդի կենտրոնով» [13]: Մարզի հեղկոմի նախագահ է նշանակվում Արմենակ Կարակոզովը, իսկ կուսամարզկոմի նախագահ՝ Սերո Մանուցյանը: Հռչակագրում հանձնարարվում է նշել, որ ինքնավարու-

թյան «սահմանները և այլնը կորոշվեն հատուկ հանձնաժողովի կողմից»: Վերջինս որոշելու էր. **ա)** Ինքնավար Ղարաբաղի սահմանները: **բ)** Քրդստանի տեղադրությունը: **գ)** Դաշտային Ղարաբաղի վարչական փոփոխությունները: Վերջապես հուլիսի 7-ին լույս է տեսնում «Լեռնային Ղարաբաղի ինքնավար մարզ» կազմավորելու մասին Կենտրոնականի դեկրետը [14]:

Այժմ տեսնենք թե ինչ տեսակետներ ունեն ադրբեջանցի որոշ պատմաբաններ վերոհիշյալ հարցի վերաբերյալ: Այսպես, ադրբեջանցի պատմաբան Իգրար Ալիևը գրել է, «Լեռնային Ղարաբաղի Ինքնավար Մարզի կազմավորումը ԱդրԽՍՀ-ի կազմում ունեցել է կարևոր նշանակություն հայ և ադրբեջանցի ժողովուրդների հետագա բարեկամության ամրապնդման գործում» [15]:

Ոչ մեկի համար, անշուշտ, գաղտնիք չէ, որ ադրբեջանցի պատմաբանները ձգտելով ստեղծել իրենց ժողովրդի պատմությունը մշտապես զբաղված են դեպքերի ու իրադարձությունների խեղաթյուրմամբ, հարևան ժողովուրդների պատմության նենգափոխմամբ: Ասվածի ապացույցներից մեկը Իլգար Մամմադովի և Թոֆիկ Մուսանի կողմից բերված անհիմն փաստարկներն են:

Վերոհիշյալ պատմաբանները անդրադառնալով հուլիսի 7-ի «Լեռնային Ղարաբաղի ինքնավար մարզ» կազմավորելու մասին Կենտրոնականի դեկրետին, գրում են, որ ի տարբերություն վերոհիշյալ դեկրետի, Հայաստանում ապրող 500 հազար ադրբեջանցիներին ինչպես ԽՍՀՄ իշխանությունների, այնպես էլ ՀԽՍՀ կառավարության կողմից մերժվում է տրամադրել նույնիսկ մշակութային ինքնավարություն: Սա ադրբեջանցիների իրավունքների ոտնահարում էր, որի հետևանքով նրանք բռնի կերպով տեղահանվում են Հայաստանի տարածքից [16]:

Վերոհիշյալ փաստից երևում է, որ ինքնավար մարզի կազմավորումը Ադրբեջանի կողմից հայերին արված «մարդասիրական ժեստ»

էր, և դեռ ավելին, հայերն են ոտնահարում ադրբեջանցիների իրավունքները: Այնուհետև շարունակելով իրենց միտքը այս հեղինակները գրում են, որ ԽՍՀՄ-ում ինքնավարությունները ստեղծվել են էթնիկական սկզբունքի հիման վրա, և որպես կանոն, կոչվել են այդ էթնոսների անունով: Քանի որ հայերը արդեն ինքնորոշվել էին Հայաստանում, ապա Ադրբեջանում հայերի համար ինքնավարություն ստեղծելը անհիմն էր: Այդ պատճառով ինքնավար շրջանը ստացել է ոչ թե էթնիկական, այլ աշխարհագրական անվանում: Այսպիսով, որպես վարչական միավոր ի հայտ է գալիս նախկինում գոյություն չունեցած «Լեռնային Ղարաբաղ» տերմինը [17]:

Այստեղ կարևոր է ներկայացնել հետևյալ փաստը. վերոնշյալ պատմաբանները գրում են, ԽՍՀՄ-ում ինքնավարությունները ստեղծվել են էթնիկական սկզբունքի հիման վրա, և որպես կանոն, կոչվել են այդ էթնոսների անունով: Բայց չմոռանանք, որ խորհրդային պետական կազմավորման գոյության առաջին 15-16 տարիների ընթացքում Ադրբեջանը ԽՍՀՄ-ի միակ հանրապետությունն էր, որի անվանումը անանցված չէր այն բնակեցրած ժողովրդի անունից: «Ադրբեջանցիների» որպես ազգության անվանումն առաջին անգամ գրանցում է ստացել միայն 1936թ. [18]: Կամ օրինակ՝ ադրբեջանցի պատմաբան Նիֆթալիևը ԼՂԻՄ-ի կազմավորման մասին հետևյալ մեկնաբանությունն է տալիս. «1923թ. հայերին հաջողվում է ադրբեջանական հողերի հաշվին ԱդրԽՍՀ կազմում ստեղծել իրենց երկրորդ ազգային-տարածքային կազմավորումը, Խորհրդային Հայաստանից հետո՝ Լեռնային Ղարաբաղի Ինքնավար մարզը»[19]:

Այսինքն՝ ստացվում է, որ Լեռնային Ղարաբաղի տարածքը հանդիսանում է Ադրբեջանի պատմական տարածք:

Ադրբեջանի Հանրապետության նախկին նախագահ Հ.Ալիևն էլ ասել է հետևյալը. «1923 թվականին Լեռնային Ղարաբաղին ինքնավար

րության տրամադրումը Ադրբեջանի համար պատուհաս է դարձել, իմացեք դա: Ճիշտ է, այդ ժամանակ այն ցանկանում էին տալ Հայաստանին: Ադրբեջանի ղեկավարները ձգտել են և վերջապես հասել են նրան, որ այն մնա Ադրբեջանի կազմում: Պետք է մնար, բայց ոչ ինքնավարության տեսքով» [20]:

Իր ելույթներից մեկի ժամանակ էլ Հեյդար Ալիևը ասել է. «1923թ. տրված ինքնավարությունը ռումբ էր, տեղադրված Ադրբեջանի ներսում, և այն ինչ-որ ժամանակ պետք է պայթեր» [21]:

Այժմ անդրադառնանք հուլիսի 7-ի դեկրետին: Խախտելով ՌԿ(Բ)Կ Կովբյուրոյի որոշումը՝ Ադրբեջանի Կենտգործկումը որոշեց մարզը ստեղծել «Լեռնային Ղարաբաղի հայկական մասից» [22]: Մինչդեռ որոշման մեջ հստակ նշված է. «Լեռնային Ղարաբաղը թողնել Ադրբեջանական ԽՍՀ սահմաններում՝ նրան տալով մարզային լայն ինքնավարություն՝ վարչական կենտրոն Շուշի քաղաքով» [23]: Այսինքն՝ լայն ինքնավարությունը պետք է տրվեր ոչ թե նրա մի մասին, այլ ողջ Լեռնային Ղարաբաղին:

Այդ առիթով պատմաբան Է. Իսմաիլովը գրում է. «Շուշան այնքան ակնհայտ ադրբեջանական քաղաք էր, որ ոչ մի կերպ չէր կարող դիտարկվել ոչ միայն որպես ինքնավարության կենտրոն, այլ նաև որպես նրա մաս»[24]:

Սակայն այսպիսի բացատրությունը օբյեկտիվ չէ: Շուշին եղել է, կա ու կլինի հայկական քաղաք . դա անվիճելի փաստ է:

Նույն օրը՝ հուլիսի 7-ին, հրավիրված «Ինքնավար Ղարաբաղի և Քրդստանի սահմանները որոշելու հանձնաժողովի» նիստում որոշվում է «Լեռնային Ղարաբաղի առանձնացումից (որպես ինքնավար մարզ) մնացած Ղարաբաղի դաշտային մասերից ստեղծել մարզային վարչություն՝ Ադդամ կենտրոնով»: Հանձնաժողովը որոշում է նաև

կազմավորել «Ինքնավար Քրդստան, որի կենտրոններն ու սահմանները որոշել ինքնավար Լեռնային Ղարաբաղի սահմանների հաստատումից հետո» [25]:

Ղարաբաղի լեռնային շրջանի արևմտյան մասը Արաքսի ավից մինչև փոքր Կովկասյան լեռնաշղթայի հյուսիսային փեշերը կտրեցին և ստեղծեցին «Քուրդիստանի գավառ», դրանով իսկ Արցախը անջատեցին մայր Հայաստանից: Ադրբեջանը շուտով վերացրեց Քուրդիստանի գավառը և ստեղծեց Քելբաջարի, Լաչինի, Կուբաթլիի և Ջանգելանի շրջանները[26]:

Սակայն ադրբեջանցիները չբավարարվեցին Արցախը Ադրբեջանին բռնակցելով: Նրանք լայն գաղափարաքաղաքական աշխատանքներ էին ծավալում բոլոր ուղղություններով, չեն խորշում ոչ մի միջոցից, որպեսզի ԼՂ-ը ներկայացնեն որպես ադրբեջանական տարածք:

Այսպես, ըստ Խավա Մամեդովայի, 1920-1921թթ. Հայաստանից Ադրբեջան է տեղափոխվում 850 հայ ընտանիք, որոնցից 765 ընտանիք տեղավորվում է Լեռնային Ղարաբաղում... ինչն էլ նպաստում է ԼՂ-ում հայ ազգաբնակչության թվաքանակի աճին: Այսպիսով, «Հայաստանը» որպես պաշտոնական եզրույթ փաստաթղթերի մեջ հայտնվում է 20-րդ դարասկզբին:[27] Ինչպես տեսնում ենք ադրբեջանցի հեղինակների կեղծարարությունները չափ ու սահման չեն ճանաչում և նրանք օգտագործում են ամեն պատեհ առիթ, իրենց «ստեղծագործությունները» ներկայացնելու միջազգային լսարանին:

1920-1930-ական թթ. ադրբեջանական իշխանությունների կողմից Ղարաբաղում իրականացված վարչատարածքային արհեստական վերաձևման արդյունքում ԼՂԻՄ-ից դուրս թողնվեցին և հարևան շրջաններին կցվեցին ինչպես բուն Լեռնային Ղարաբաղի զգալի հատվածներ (Վերին Խաչեն-Քարվաճառը, Գյուլիստանի հյուսիսային մասը՝ Շահումյանի շրջանը և Գետաշենի ենթաշրջանը, Դիզակի մի մասը՝ Ջաբրայիլը), այնպես էլ Հյուսիսային Արցախի և Գարդմանի հայաբնակ

շրջանները: Հայ ճարտարապետական մտքի գլուխգործոց Դադիվանքի համալիրն իր հարակից տարածքներով ևս անջատվեց ԼՂԻՄ-ից և սրվեց Քյալբազարի շրջանին[28]: 1927թ Խորհրդային Ադրբեջանի Գետաբեկի շրջանի հայ բնակչությամբ 10 բնակավայրեր փոխանցվեցին Շամխորի շրջանին: Վարչական այս փոփոխությունները նպատակ էին հետապնդում թույլ չտալու, որպեսզի հայ բնակչությունը կազմի մեծամասնություն որևէ շրջանում [29]: 1933թ. հունվարի 1-ի դրությամբ, ԼՂԻՄ-ի տարածքը կազմում էր 4431,7 քառ. կմ:

Այդուհանդերձ՝ ինքնավար մարզի կարգավիճակի շնորհիվ էր նաև, որ արցախահայությունը դիմակայեց Ադրբեջանի սադրանքների և ազգային խտրականության քաղաքականությանը, Արցախը չհայաթափվեց: Արցախահայությունը երբեք չհամակերպվեց օտարի լծի հետ և տասնյակ տարիների պայքարի արդյունքում անկախություն կերտեց:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. *Ուլուբարյան Բ.* Արցախի պատմությունը սկզբից մինչև մեր օրերը, Եր., 2011:
2. *Խաչատրյան Կ., Սուքիասյան Հ., Բաղայան Գ.* Խորհրդային Հայաստանի և ԼՂԻՄ-ի տարածքային կորուստները 1920–1930-ական թթ., Եր.ն, 2015:
3. *Բալայան Վ.* Արցախի պատմությունը հնադարից մինչև մեր օրերը, Եր., 2011:
4. *Маммадов И□, Мусаев Т□* Армяно-азербайджанский конфликт: ИСТОРИЯ, ПРАВО, ПОСРЕДНИЧЕСТВО, 2-е издание, переработанное и дополненное, Баку, 2005.
5. *Алиев И.* Нагорный Карабах: История. Факты. События, Баку, 1989.
6. *Бабаян Д.,* Геополитическая история Азербайджана, Степанакерт, 2012, стр. 39.

7. *Բաշաշյան Վ.* նշվ. աշխ., էջ 234:
8. К истории образования Нагорно–Карабахской Автономной Области Азербайджанской ССР 1918–1925 документы и материалы, Азербайджанское государственное издательство, Баку, 1989. С. 62.
9. Нагорный Карабах в международном праве и комментарии, Сост., отв. ред., авт. вступ. статей и коммент. д.ю.н., проф. Ю.Г. Барсегов, в 2-х т., т. 1, М., 2008. С. 645.
10. Նույն տեղում, էջ, 645:
11. *Բաշաշյան Վ.* նշվ. աշխ., էջ 235:
12. К истории образования Нагорно–Карабахской Автономной Области Азербайджанской ССР 1918–1925 документы и материалы, Азербайджанское государственное издательство, Баку, 1989. С. 93.
13. *Խաչատրյան Կ., Սուքիասյան Հ., Բաղդասարյան Գ.* Խորհրդային Հայաստանի և ԼՂԻՄ-ի տարածքային կորուստները 1920-1930-ական թթ., Երևան, 2015, էջ 124:
14. *Алиев И.* Нагорный Карабах: История. Факты. События, Баку, 1989. С. 103.
15. *Маммадов И□, Мусаев Т□* Армяно-азербайджанский конфликт: ИСТОРИЯ, ПРАВО, ПОСРЕДНИЧЕСТВО, 2-е издание, переработанное и дополненное, Баку, 2005. С. 35.
16. *Маммадов И□, Мусаев Т□*, указ. работа. С. 36.
17. *Бабаян Д.*, указ. работа. С. 50.
18. *Нифталиев И.* Азербайджанская ССР в экспансионистских планах армян (20-е годы XX века), Баку, 2009. С. 158.
19. *Փաշաշյան Հ.* Ղարաբաղյան հիմնախնդրի քաղաքական փաստարկները ԼՂԻՄ կազմավորման եվ ԱդրԽՍՀ կազմից դուրսբերման շրջանի փաստաթղթերում (1923-1989թթ.), «21-րդ ԴԱԸ», թիվ 4 (56), 2014, Եր., էջ 33:
20. *Дадаян С.* Политическая история Арцах-Карабаха от Хамсы до Автономии. факты и вымыслы, Степанакерт, 2017. С. 380.
21. *Փաշաշյան Հ.*, նշվ. աշխ., էջ 32:

22. Нагорный Карабах в 1918–23 гг. Сборник документов и материалов. Изд. АН Армении, Ер., 1992. С. 650.
23. *Исмаилов Э.* Арцахский стон по поводу советской истории. «Карабах»: контексте конфликта. С-Пб. С. 281.
24. К истории образования Нагорно-Карабахской Автономной Области Азербайджанской ССР 1918–1925 документы и материалы, Азербайджанское государственное издательство, Баку, 1989. С. 96.
25. *Բախաբախյան Վ.*, նշվ. աշխ., էջ 239:
26. *Мамедова Х.* Армянский сепаратизм в Карабахской Области Азербайджана в XX веке, Международный научный журнал «Право и Политология», Кишинэу, 2012, № 20. С. 54.
27. *Խաչատրյան Վ., Սուքիասյան Հ., Բաղդասարյան Գ.*, նշվ. աշխ., էջ 142:
28. *Խաչատրյան Վ., Աբրահամյան Հ.* Հայտնիության պայքարը ԼՂԻՄ-ը Խորհրդային Հայաստանի հետ միավորելու համար: Փաստաթղթերի և նյութերի ժողովածու, Եր., 2011, էջ 10:

ИСКАЖЕНИЯ АЗЕРБАЙДЖАНСКИХ ИСТОРИКОВ ВОКРУГ ПРОЦЕССА ОБРАЗОВАНИЯ НКАО

Э.Э. Айрапетян

Арцахский Государственный университет

ellada-hayrapetyan@mail.ru

АННОТАЦИЯ

В статье пытались своеобразно представить процесс образования НКАО. Особое внимание уделили территориальным потерям НКАО, в результате которых ее площадь составила всего лишь 4431,7 кв. км.

Мы пытались, представляя точки зрения армянских историков по этой теме, разоблачить фальсификации азербайджанских историков по отношению воп-

роса об образовании НКАО. Выделили ту мысль, что проблема автономии Нагорного Карабаха была не выгодным решением для азербайджанских властей, поэтому путем территориальных искажений и в результате последовательной политики Азербайджана, западная часть горного района Карабаха-от реки Аракс до северных склонов Малого Кавказского хребта, была отрезана и создана «провинция Курдистан», этим и Арцах был разъединён от матери Армении.

В статье упоминалось, что, несмотря на антиармянскую и этническую дискриминационную политику азербайджанских властей, арцахским армянам удалось противостоять азербайджанским провокациям, и в результате борьбы они создали независимость.

Ключевые слова: Нагорно-Карабахская автономная область, декрет, национальное-территориальное образование, фальсификация, территориальные потери.

ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՌԿ/Բ/Կ ԿՈՎԿԱՍՅԱՆ
ԲՅՈՒՐՈՅԻ ՊԼԵՆՈՒՄԻ 1921 թ. ՀՈՒԼԻՄԻ 4-Ի ԵՎ 5-Ի
ՈՐՈՇՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ
ՊԱՏՄԱԿԱՆ ՓԱՍՏԵՐԻ ՇՈՒՐՋ

Մ.Ա. Սարդարյան

Արցախի Պետական համալսարան

merisardaryan1997@mail.ru

ԱՍՓՈՓՈՒՄ

Հոդվածում առաջադրվել է այն տեսակետը, որ Հայաստանի Հանրապետության անկախության հռչակումից հետո, հայ ժողովրդի ամենաարդիական, արտաքին ու ներքին քաղաքականության անկյունաքարը հանդիսացող հարցը շարունակում է մնալ արցախյան հիմնախնդիրը: Նախորդ դարաշրջանի քաղաքական մութ գործընթացների արդյունքում, առանց որևէ լուրջ հիմնավորման Արցախը բռնակցվեց Ադրբեջանին: Ինչն էլ քաղաքական մեծ հարված էր ուղղված Հայաստանին:

Մեր նպատակն է լուսաբանել պատմական իրադարձությունների այն ընթացքը որը հանգեցրեց 1921թ. հուլիսի 5-ի որոշմանը: Այն իր մեջ ներառում է բազմաթիվ խճճված հարցեր, որոնք տարբեր լուսաբանումներով են ներկայացվում քաղաքական և իրավական հարթակներում: Ինչն էլ այսօր ադրբեջանական կողմին թույլ է տալիս շահարկման նյութ դարձնել այդ որոշումը հանդես գալ պահանջատերի կեցվածքով: Քնության արդյունքում առաջադրված պատմական

փաստերն ու վերոնշյալ որոշման իրավական կողմը բացառում են Ադրբեջանի հավակնություններն ու տարածքային պահանջները Լեռնային Ղարաբաղի նկատմամբ:

Հիմնաբառեր: Լեռնային Ղարաբաղ, Խորհրդային Ադրբեջան, Խորհրդային Հայաստան, ՌԿ(Բ)Կ կովկասյան բյուրո, Ն. Նարիմանով:

Ներածություն

Հայաստանի Հանրապետության անկախության հռչակումից հետո, հայ ժողովրդի ամենաարդիական, կենսական նշանակություն ունեցող, և՛ արտաքին, և՛ ներքին քաղաքականության անկյունաքարը հանդիսացող հարցը շարունակում է մնալ արցախյան հիմնախնդիրը: 20-րդ դարի 20-ական թթ. այսրկովկասյան հանրապետությունների միջև ծավալված քաղաքական գործընթացները, որոնք, եթե մի կողմից ուղղված էին տեղական վարչակարգերի վերափոխմանը, ապա մյուս կողմից նրանց միջև առկա տարածքային խնդիրները հաճախ էին վերածվում քաղաքական և ռազմական առճակատումների:

Այսրկովկասում երևան եկած նոր վարչաքաղաքական միավորը՝ 1918թ. հռչակված Արևելակովկասյան մուսուլմանական հանրապետությունը (հետագայում՝ Ադրբեջան) տարածքային հավակնություններ սկսեց ցուցաբերել մի շարք տարածքների, այդ թվում նաև Լեռնային Ղարաբաղի տարածքի նկատմամբ: 1917թ. փետրվարին Ռուսաստանում ցարական ինքնակալության տապալումից հետո Լեռնային Ղարաբաղը փաստացի դուրս էր մնացել նախկին կայսրության Ելիզավետպոլի նահանգի կազմից (նրա կազմում էր 1868թ.□) և հավակնում էր դառնալ առանձին վարչաքաղաքական միավոր: Սակայն քաղաքական մութ գործընթացների արդյունքում, առանց որևէ լուրջ հիմնավորման Արցախը բռնակցվեց Ադրբեջանին: Դա քաղաքական

ապտակ էր ուղղված Հայաստանին, որտեղ ակնհայտ դարձավ, որ մեծ պետությունների կողմից մշակված քաղաքական ծրագրերում կոխկրտվում և ոտնահարվում են փոքր պետությունների շահերը: Արցախյան հիմնախնդրի առաջացման նախապատմությունն իր մեջ ներառում է բազմաթիվ խճճված հարցեր, որոնք շատ անգամ տարբեր լուսաբանումներով են ներկայացվում քաղաքական և իրավական հարթակներում: Մեր նպատակն է լուսաբանել պատմական իրադարձությունների այն ընթացքը, որը հանգեցրեց 1921թ. հուլիսի 5-ի որոշմանը: Ինչն էլ այսօր ադրբեջանական կողմին թույլ է տալիս շահարկման նյութ դարձնել այդ որոշումը, խեղաթյուրելով պատմությունը՝ հանդես գալ պահանջատերի կեցվածքով :

Քաղաքական գործընթացները անդրկովկասյան տարածաշրջանում

1918 թ. հուլիսի 22-26-ին Շուշիում հրավիրված երկրամասի հայության 1-ին համագումարում Ղարաբաղը հռչակվեց վարչատարածքային անկախ միավոր, ընտրվեց Ազգային խորհուրդ և ժողովրդական կառավարություն: 1920թ. ապրիլի 23-29-ին տեղի ունեցած Ղարաբաղի հայության 9-րդ համագումարը երկրամասը հայտարարեց Հայաստանի անբաժանելի մաս: Սակայն նույն պահին տարածաշրջանում ընթացող իրադարձությունները կտրուկ փոխեցին ռազմաքաղաքական իրադրությունը: 1920թ. ապրիլի 28-ին Ադրբեջանում հաստատվեց խորհրդային կարգեր: Արցախահայության պայքարը թևակոխեց մի նոր շրջան: Այս անգամ Ադրբեջանը փորձեց խորհրդային Ռուսաստանի աջակցությամբ տիրանալ Լեռնային Ղարաբաղին: Խորհրդային Ադրբեջանի կառավարությունը և 11-րդ կարմիր բանակի հրամանատարությունը Հայաստանի հանրապետությանը վերջնագիր ներկայացրին անհապաղ մաքրելու Լեռնային Ղարաբաղի տարածքը [1]:

Արցախահայության 10-րդ համագումարում Լեռնային Ղարաբաղում հաստատվեցին խորհրդային կարգեր: Այս հանգամանքը Ադրբեջանի խորհրդային կառավարության ղեկավարները օգտագործեցին իրենց օգտին՝ ձեռնամուխ լինելով Արցախը Ադրբեջանին բռնակցելու սև գործին: Ստեղծվել էր պատեհ առիթ Ադրբեջանը «խորհրդային» էր, իսկ Հայաստանը «միջազգային իմպերիալիզմի գործակալ»: Իսկ միջազգային իմպերիալիզմի դեմ կռվում էր խորհրդային կարմիր բանակը:

Արցախի հարցի շուրջ վիճաբանությունները նոր ընթացք ստացան Հայաստանում Խորհրդային կարգերի ընդունումից հետո: Բոլշևիկյան Ռուսաստանի և Քեմալական Թուրքիայի ճնշման տակ 1920թ. նոյեմբերի 29-ին Հայաստանում ևս հաստատվեցին խորհրդային կարգեր: Նարիմանովի և նրա հովանավորների համար բարենպաստ պայմաններ ստեղծվեց Նախիջևանը և Լեռնային Ղարաբաղը կլանելու, և Ադրբեջանին միացնելու համար: Հայաստանում Խորհրդային կարգեր հաստատելու կապակցությամբ 1920թ. դեկտեմբերի 1-ին Ադրբեջանի կառավարությունը ընդունեց հռչակագիր, որով ԱԽՍՀ անունից հայ ժողովրդին հայտարարվեց Ադրբեջանի հեղկումի որոշումը: Որում ասվում էր՝ «Ադրբեջանի բանվորագյուղացիական կառավարությունը ստանալով ապստամբած գյուղացիների անունից հղված լուրը ՀԽՍՀ-ի հռչակման մասին, ողջունում է եղբայրական ժողովրդի հաղթանակը: Այսօրվանից վերացված են համարվում սահմանային վեճերը Հայաստանի և Ադրբեջանի միջև: Լեռնային Ղարաբաղին տրվում է ազատ ինքնորոշվելու իրավունք, իսկ Ջանգեզուրը, և Նախիջևանը համարվում են ՀՍՀ-ի անբաժանելի մասը: Կեցցե Խորհրդային Հայաստանի և Ադրբեջանի բանվորների ու գյուղացիների եղբայրությունն ու միությունը»[2]:

Դեպքերին հաջորդած իրողությունների քննությունից պարզ է դառնում, որ Նարիմանովն այդ հռչակագրի բովանդակությունը համաձայնեցրել էր Կրեմլի տերերի հետ: Դրանով բոլշևիկյան իշխանությունները

նպատակ ունեին դուրսացնել խորհրդային կարգերի հաստատումը Հայաստանում, վերականգնել հայ ժողովրդի հավատը ռուսների նկատմամբ և Թուրքիային պահել իրենց ազդեցության ուղեծրում:

Այս պայմաններում Խորհրդային ղեկավարությունը գիտակցում էր, որ նման որոշումը կրքեր կբորբոքեր Թուրքիայում, նորից տեղի տալով Անկարայի հորդորներին: Այնուհետև Ղարաբաղը և Նախիջևանը բռնակցելով Ադրբեջանին, Խորհրդային Ռուսաստանը քաղաքական սեթևեթանքներով, Թուրքիային պարտավորության տակ կթողներ և իրենից կախվածության մեջ կպահեր:

Խորհրդային Ռուսաստանը հույս ուներ Թուրքիային դարձնել Մուսուլմանական Արևելքում Մոցիալիզմի ջահակիրը: Իսկ ինչ վերաբերվում է Հայաստանին, ապա Խորհրդային իշանություններն այլևս նպատակներ չունեին վերջինիս հետ կապված: Ուստի այս պայմաններում Խորհրդային Ռուսաստանն իր քաղաքական ու տնտեսական նպատակների համար պետք է Թուրքիային պահեր իր տեսադաշտում: 1920թ. դեկտեմբերի 23-ին Չիչերինի Լենինին ուղարկած հեռագրում նշված էր՝ «Եթե թուրքերին մեզանից մղենք, նրանք կնետվեն Անտանտի գիրկը, և կհայտնվեն հակաբոլշևիկյան քաղաքականության ոլորտում: Նման պայմաններում մեզ համար չափազանց դժվար կլինի պահել Բաքուն» [3]: Իսկ Բաքվի նավթից հրաժարվել՝ նրանք չէին պատրաստվում:

Այս դեպքերի առթիվ ՀԽՍԽՀ արտգործժողկոմ Ալ. Բեկզադյանը նշել է, որ երբ մենք մատնացույց արինք հայ ժողովրդի ծանր վիճակը և կոմունիստական կուսակցության հեղինակության հնարավոր կորուստը հայ աշխատավորների աչքերում, Լենինից ստացանք հետևյալ պատասխանը. «Մենք ժամանակավորապես ստիպված ենք հայ աշխատավորների շահերը զոհաբերել հանուն համաշխարհային հեղափոխության: Այն ինչ կարող ենք անել հայերի համար, դա պարենով և մթերքով ապահովելն է և միաժամանակ Թուրքերին համաձայնողական դիրքորոշում պարտադրելու համար, Հայաստանի տարածքում

հնարավորինս շատ գորքեր տեղաբաշխելը: Բայց ընկերներ հիշե՛ք, մենք չենք պատրաստվում հայերի համար որևէ մեկի հետ կռվել, մանավանդ Քեմալի»[4]: Այսպիսով Լենինը համաշխարհային սոցիալիստական հեղափոխության մոլուցքով տարված, պատրաստ էր ոտնատակ տալու Հայաստանը: Իսկ Թուրքիային սիրաշահելու համար նա սկսեց Հայաստանի քարտեզի բզկտման գործընթացը: Տեղին է հիշատակել ռուս ակադեմիկոս Մ. Իգոլկինի այն խոսքը, որ «հեղափոխական» Մ. Քեմալը ընկերական խնդրեց Վ. Ի. Լենինից եղբայրական Ադրբեջանին նվիրաբերել հայկական տարածքների մի շարք: Ու Լենինը չկարողացավ մերժել Անտանտի և անգլիական իմպերիալիզմի դեմ պայքարող այդ հերոսին [5]:

Լեոնային Ղարաբաղի բռնակցման գործընթացը Ադրբեջանին

1921թ. մարտի 16-ին Մոսկվայում կնքված ռուս-թուրքական պայմանագրով Նախիջանն Ադրբեջանին պարզելուց հետո առկախ էր մնացել Ղարաբաղի հարցը: Հայաստանում իրավիճակը զսպելու համար՝ այնտեղ Կովկասյան բյուրոն 1921թ. հունիսի 3-ին ընդունեց որոշում, որով Հայաստանին հանձնարարվեց ընդունել հռչակագիր՝ Ղարաբաղը ներառելու Խորհրդային Հայաստանի սահմանների մեջ [6]:

Այսինքն այդ որոշումը կայացվել է երկու հանրապետությունների պայմանավորվածության հիման վրա: Հռչակագրի կապակցությամբ Լեոնային Ղարաբաղում ստեղծվեց արտակարգ լիազոր մարմին Ա.Մռավյանի գլխավորությամբ: Ա.Մռավյանը և Ադրբեջանի ռազմածովային ժողկոմ Ալիհեյդար Կարանը Թիֆլիսից Լեոնային Ղարաբաղ ուղևորվեցին, որպեսզի մարզը Հայաստանին տալու գործը կարգավորեն: Սակայն երբ հասան Եվլախ, Կարանը հրամայեց թե իրենց հրամայված է գնալ Բաքու, քանի որ հարցը նոր պարզաբանման կա-

րիք ունի: Պարզվում է այն հանգամանքը, որ Նարիմանովն ու գործակիցները հրաժարվել են տված համաձայնությունից և պահանջում են, որ Անդրերկրկոմը վերստին անդրադառնա Ղարաբաղի խնդրին [7]:

Ադրբեջանական կողմն այս անգամ վստահ էր, որ կրկին անգամ անդրադառնալով այս խնդրին, Խորհրդային Ռուսաստանի միջատությամբ կարողանալու է Հայաստանից տարածքներ կորզել: Ու եթե Ադրբեջանն այդ պահին չունենար հզոր դաշնակից, ինչպիսին Խորհրդային Ռուսաստանն էր, ապա դժվար թե համարձակվեր նորից բարձրացնել այդ հարցը:

Կովկասյան բյուրոյի նիստը սկսվեց 1921թ. հուլիսի 2-ին: Լեռնային Ղարաբաղի պատկանելիության հարցը քննության դրվեց Կովկասյան բյուրոյի հուլիսի 4-ի նիստում: Անցկացված քվեարկության ձայների մեծամասնության հիման վրա, որոշվեց «Լեռնային Ղարաբաղը մտցնել ՀՄԽՀ կազմ» [8]: Այդ որոշմանը դեմ արտահայտվեց Ն. Նարիմանովը, որը պահանջեց, որ հարցը փոխադրվի ՌԿ(Բ)Կ Կենտկոմ, այն տրամաբանությամբ, որ այն լուրջ տարաձայնություններ է առաջացրել, ուստի պետք է տեղափոխել ՌԿԿ վերջնական որոշմանը [9]:

Հաջորդ օրը՝ հուլիսի 5-ին բյուրոն նույն կազմով ու Ստալինի մասնակցությամբ նորից անդրադարձավ Լեռնային Ղարաբաղի հարցին: Առանց քվեարկության դնելու որոշվեց. «Ելնելով մուսուլմանների և հայերի միջև ազգային խաղաղության և Վերին և Ներքին Ղարաբաղների տնտեսական կապի անհրաժեշտությունից, Ադրբեջանի հետ նրա մշտական կապից՝ Լեռնային Ղարաբաղը թողնել ԱդրԽՍՀ սահմաններում՝ նրան տրամադրելով մարզային լայն ինքնավարություն...» [10]:

Ադրբեջանական պատմագրությունը փորձելով «փաստերով» ներկայացնել իր հավակնությունները Լեռնային Ղարաբաղի նկատմամբ կառչում է վերոնշյալ փաստաթղթերում տեղ գտած «մտցնել» և

«թողնել» բառերից: Վերջիններս պնդում են որ՝ Ղարաբաղը Ադրբեջանին պատկանելու հիմնական ապացույցը կապված է «Թողնել» բառի հետ: Քանի որ «թողնել» կարելի է միայն այն ինչն ի սկզբանե պատկանել է իրենց: Իսկ «մտցնելու» պարագայում ընդհակառակը: ԵՎ ըստ նրանց հենց այս փաստաթուղթն էլ ապացուցում է այն, որ «Լեռնային Ղարաբաղը միշտ պատկանել է Ադրբեջանին»:

Ադրբեջանական պատմագրությունը ռուսերեն ընդհամենը երկու բառի «включить» և «оставить» բառախաղի միջոցով փորձում է խեղաթյուրել պատմական ամբողջ անցյալը: Մեր կարծիքով, փաստաթղթերի հեղինակների կողմից պատրաստված ծուղակի նպատակը Այսրկովկասում ծավալված նորաստեղծ պետության՝ Ադրբեջանի տարածքային հավակնություններին համոզիչ տեսք տալն էր:

Կովբյուրոյի որուշումը միակ փաստաթուղթն է, որով Ղարաբաղը ինքնավարության կարգավիճակով հայտնվել է ԱդրԽՍՀ սահմաններում[11]: Այլ իրավական հիմքեր չկան: Այն օրինական չէր, քանի որ երրորդ երկրի՝ Ռուսաստանի կուսակցական մարմինը իրավասու չի եղել մի երկրի տարածքը մեկ ուրիշին հանձնելու: Այս ամենից բխում է հետևյալը, որ Լեռնային Ղարաբաղը ոչ դե-յուրե, ոչ դե-ֆակտո, ոչ պատմականորեն, ոչ էլ աշխարհագրորեն երբևիցե Ադրբեջանի մաս չի կազմել:

Իսկ Նարիմանովի ու մյուս քաղաքական գործիչների կողմից առաջադրված «տնտեսական կապի» գործոնով վերջիններս փորձում էին ապացուցել, որ ԼՂ-ը սերտորեն կապված է Դաշտային Ղարաբաղի և Բաքվի հետ, ու առանց Ադրբեջանի չի կարող գոյատևել: Բայց հետագա տարածաշրջանային զարգացումները միանշանակ ցույց տվեցին, որ դա չհիմնավորված բառակապակցություն է և ընդհակառակը Ադրբեջանի համար էր տնտեսապես շահեկան ամեն գնով իր կազմում ներառել Լեռնային Ղարաբաղը : Քանի որ՝ Ադրբեջանում ապրող մահմե-

դական բնակչության հիմնական զբաղմունքը քոչվոր անասնապահությունն էր, որն առանց Լեռնային Ղարաբաղի ալպիական արոտավայրերի անհեռակար վախճան կունենար: Նորօրյա Ադրբեջանի վերջին տասնամյակների անասնապահությունը, հատկապես ոչխարաբուծությունը բնութագրող վիճակագրական տվյալները այդ ամենի խոստուն վկայությունն են: Բացի դրանից Ադրբեջանի թուրքերի հիմնական զբաղմունքը քոչվորական անասնապահությունն էր, ուստի զարգացման ուղին բռնած արդյունաբերական Բաքվի պարենավորման համար անհրաժեշտ էր ունենալ կայուն գյուղատնտեսական համակարգ ունեցող երկրամաս: Որպես այդպիսին հանդիսանում էր Լեռնային Ղարաբաղը:

Լեռնային Ղարաբաղից սկիզբ առնող 17 գետերի և գետակների ջրերը հոսում են Կուր-Արաքսյան միջագետքի ադրբեջանաբնակ շրջանները, առանց որի ամռանն այդ շրջաններում ապրելն անհնարին է: 1920-ական թվականներից ԼՂԻՄ հարակից ադրբեջանական շրջաններում մեծ թափով ջրանցքներ էին կառուցվում: Նմանօրինակ քաղաքակնության արդյունքում՝ 1960-ական թվականներից Ադդամի շրջանում մշակովի հողատարածքների 51-70%-ը ջրարբի էին: Իսկ Միր-Բաշիրի շրջանում 1980-ական թվականներին այդ թիվը հասել էր 75,8%-ի: Ադրբեջանական շրջանները նման հաջողություններ արձանագրել են ԼՂԻՄ ջրային պաշարների հաշվին: 1980-ական թվականներին Սարսանգի ջրամբարից մշակվող 128 հզ.հա գյուղատնտեսական նշանակության հողահանդակներից 110 հզ.հա բաժին էր հասնում Ադրբեջանի շրջաններին: Չնայած այն հանգամանքին, որ ԼՂԻՄ ղեկավարությունը փորձել էր այդ ջրերն օգտագործել Մարտունու շրջանի հողատարածքները մշակելու համար, բայց Ադրբեջանի իշխանությունները մշտապես արգելել են [12]:

Այսպիսով Նարիմանովի կողմից մոգոնված «տնտեսական կապի» գործոնի մասին տեսակետը թվում է թե հեշտությամբ մարսվեց

Կրեմլի տերերի կողմից: Ու Նրանց կողմից էլ Այսրկովկասի տարած-
քային պատկանելիության հարցը լուծվեց երկակի ստանդարտների
միջոցով: Եթե Լեոնային Ղարաբաղը տնտեսական գործոնի պատրվա-
կով բռնակցվեց Ադրբեջանին, ապա Նախիջևանի հարցը լուծվեց էթ-
նիկ սկզբունքի հայեցակետով: Երկու դեպքում էլ պատճառը մեկն էր.
ինչպես Նախիջևանը, այնպես էլ Լեոնային Ղարաբաղը, բոլշևիկների
կողմից գոհաբերվեցին պանթուրքիստական ծրագրերին:

Այս առիթով հայտնի է ռուս մեծ գրող Ալեքսանդր Սոլժենիցինի
խոսքը «Իլիչն առաջինն է սահմանների հարցը համարել «նույնիսկ
տասներորդական»: Այսպես են Ղարաբաղը կտրել միացրել Ադրբեջա-
նին, ի՞նչ տարբերություն թե որտեղ, այն ժամանակ հարկավոր էր սի-
րաշահել սովետների սրտակից բարեկամին՝ Թուրքիային» [13]:

Այսպիսով հայկական կողմից ձեռնարկվելիք հետագա քայլերը
սահմանափակված էին՝ Ադրբեջանը հայտարարել էր, որ եթե «Հայաս-
տանը Ղարաբաղը պահանջի, ապա ինքը նավթ բաց չի թողնի»[14]:
Թվում է թե հայկական դիվանագիտությունը չկարողացավ լուծել իր
առջև դրված խնդիրը, ու տեղի տվեց ադրբեջանական դիվանագիտու-
թյանը, սակայն պետք է փաստել, որ դիվանագիտությունն ընդամենը
գործնականում իրագործում է այն, ինչը որոշված է լինում ընտրված
ուղեգծում և մշակված քաղաքական ծրագրերում: Խորհրդային Ռու-
սաստանի տնտեսական ու քաղաքական ծրագրերը պարզ էին և հս-
տակ՝ պատրաստ հակադրվելու բոլոր իրավական ու բարոյական նոր-
մերին: Իսկ Ադրբեջանի «նավթային դիվանագիտությունը» թիկունքում
ունենալով Թուրքիային կարողացավ իրավիճակը պահել իր վերահս-
կողության տակ: Ինչ վերաբերում է Հայաստանին ապա այս պարագա-
յում նա անգոր էր պայքարելու, քանի որ թե՛ ռազմական, թե՛ տնտեսա-
կան առումով պատրաստ չէր Խորհրդային Ռուսաստանի հետ հարա-
բերությունները սրելու: Վերջինիս կողմից թույլ տված պատմական

այդ սխալի արդյունքում անդրկովկասյան տարածաշրջանում հան-
ձինս Ղարաբաղի առաջացավ մի հրե տակառ, որն ամեն հարմար ա-
ռիթի պատրաստ էր պայթելու:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. *Բալայան Վ.* Արցախի պատմություն, Երևան, 2011, էջ 227:
2. К истории образования Нагорно – Карабахской автономной области Азербайджанской ССР 1918 – 1925, Документы и материалы, Б.,1989 ст. 44-45.
3. *Ուլուրարյան Բ.* Արցախյան գոյապայքարը, Երևան 1994, էջ 133:
4. ՀՀ Գիտությունների ազգային ակադեմիա, Պատմության ինստի-
տուտ, Հայոց Պատմություն, հատոր IV, Գիրք առաջին, Նորագույն
Ժամանակաշրջան (1918-1945թթ.), ՀՀ ԳԱԱ Պատմության ինստի-
տուտ, 2010, էջ 325-326:
5. *Иголкин А.* Московский договор с Турцией. Взгляд из России через 77 лет. // Армянский вестник, 1999, №1-2; <http://www.hayastan.ru>
6. *Ուլուրարյան Բ.* Արցախի պատմությունը սկզբից մինչև մեր օրերը,
Երևան 1994, էջ 242:
7. Նույն տեղում էջ 243:
8. К истории образования Нагорно – Карабахской автономной области Азербайджанской ССР 1918 – 1925, Документы и материалы, ст. 59.
9. Нагорный Карабах в 1918-1923гг. сборник документов и материалов, Ереван, 1992, стр. 649-650.
10. К истории образования Нагорно – Карабахской автономной области Азербайджанской ССР 1918 – 1925, Документы и материалы, ст. 59.
11. *Մաննիսյան Ալ.* Ղարաբաղյան հիմնախնդիր, փաստարկներ և
փաստաթղթեր, Երևան 2005, էջ 14:
12. *Бабаян Д.* Гидрополитика азербайджано-карабахского конфликта, Москва-Ереван, 2019 ст. 62–63.

13. *Барсегян Х.* Истина дороже... к проблеме Нагорного Карабаха-Арцаха, Ереван 1989, ст.66.
14. Հայուժրշան պայքարը ԼՂԻՄ-ը Խորհրդային Հայաստանի հետ միավորելու համար, Փաստաթղթերի և նյութերի ժողովածու, Երևան 2011, էջ 9:

**АНАЛИЗ ВОКРУГ ИСТОРИЧЕСКИХ ФАКТОВ,
КАСАЕМЫХ РЕШЕНИЙ ПЛЕНУМА КАВКАЗСКОГО БЮРО
РОССИЙСКОЙ КОММУНИСТИЧЕСКОЙ (БОЛЬШЕВИСТСКОЙ)
ПАРТИИ 4-ОГО И 5-ОГО ИЮЛЯ 1921 Г.**

М.А. Сардарян

Арцахский Государственный университет

merisardaryan1997@mail.ru

АННОТАЦИЯ

В статье представлена идея того, что после декларации независимости РА арцахская проблема продолжает оставаться жизненно важным вопросом, который имеет фундаментальную роль во внешней и внутренней политике Армении. В работе были исследованы скрытые политические процессы прошлого столетия, в ходе которых без всякого серьезного обоснования Арцах был присоединен к Азербайджану, что, в свою очередь, было серьезным ударом для Армении. Наша цель раскрыть предысторию возникновения Арцахской проблемы, ход тех событий, который привел к решению 5 июля 1921 года. Решение содержит в себе множество сложных вопросов, которым даются разные объяснения на политических и правовых платформах. Азербайджанская сторона, неоднократно используя решение 5 июля 1921 года, выступает в роли требователя. Предъявленные в ходе исследования исторические факты и правовая сторона вышеупомянутого решения исключают претензии и территориальные требования Азербайджана к Нагорному Карабаху.

Ключевые слова: Нагорный Карабах, Советский Азербайджан, Советская Армения, Кавбюро РКП(б).

**ԹԵՈՂՈՐ ՌՈՒԶՎԵԼՏԻ ՄԵԾ ՄԱՀԱԿԻ ՄԱՍՈՆԱԿԱՆ
ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ**

Մ. Միմոնյան

Վանաձորի պետական համալսարան

mar-simon@mail.ru

ԱՄՓՈՓՈՒՄ

Այսպիսով պետք է նշել, որ Թեոդոր Ռուզվելտի նախագահության օրոք ձեռնարկվեցին քայլեր ԱՄՆ դերը համաշխարհային ասպարեզում մեծացնելու համար: Դրան էր միտված նրա կողմից արտաքին քաղաքականության ասպարեզում իրականացրած փոփոխությունները, որը հայտնի է մեծ մահակի քաղաքականությունն անունով:

Հիմնաբառեր՝ Թեոդոր Ռուզվելտ, ԱՄՆ, Պանամա, ռուս-ճապոնական պատերազմ, մեծ մահակ:

Թեոդոր Ռուզվելտը ծնվել է 1858 թվականի հոկտեմբերի 27-ին Նյու Յորքում: Նա կրթություն է ստացել Հարվարդի համալսարանում: 1895 թվականին նշանակվել է Նյու Յորքի ոստիկանության շերիֆ, իսկ 1897 թվականին՝ ԱՄՆ ռազմածովային նախարարի տեղակալ: 1898 թվականին մասնակցել է իսպանա-ամերիկյան պատերազմին, պարգևատրվել Պատվո մեդալով: 1900 թվականի նախագահական ընտրությունների արդյունքում ընտրվել է փոխնախագահ, իսկ 1901 թվականի սեպտեմբերին նախագահ Ու. Մաք-Քլինլիի մահից հետո ստանձնել Սպիտակ տան ղեկավարի պաշտոնը [1]:

Թեոդոր Ռուզվելտը բարձրատիճան մասուն էր: Մինչև մասուն ձեռնադրվելը եղել է Դելտա Կապպա Էպսիլոն գաղտնի ընկերության անդամ: Մասուն ձեռնադրվել է 1901 թվականի հունվարի 2-ին՝ Նյու Յորքի նահանգի Օյսթեր Բեյի Մաթինեքոք թիվ 806 օթյակում, որտեղ հաջորդ աստիճանները ստացել է մարտի 27-ին և ապրիլի 24-ին: 1902 թվականի նոյեմբերի 5-ին նա այցելեց Փենսիլվանիայի Մեծ օթյակը, որը նշում էր Ջորջ Վաշինգտոնի՝ մասուն ձեռնադրվելու 150-ամյակը:

Թեոդոր Ռուզվելտը ակտիվ արտաքին քաղաքականություն էր վարում, որի կապակցությամբ ասում էր. «Միշտ մեղմ խոսիր, բայց թիկունքում մահակ պահիր»։ Նրա քաղաքականությունը հայտնի է «մեծ մահակի քաղաքականություն» անունով:

Նախագահ դառնալուց հետո Ռուզվելտը «հանգիստ հեղափոխություն» արեց Ամերիկայի արտաքին քաղաքականության գաղափարական հիմքերում: ԱՄՆ-ի հարավամերիկյան քաղաքականությունը տեղի էր ունենում «Մոնրոյի դոկտրինայի» դրոշի ներքո: Նախագահ Մոնրոն 1823 թվականին խոստացավ, որ ԱՄՆ, տիրապետելով Լատինական Ամերիկային, չի հավակնում աշխարհի այլ մասերում եվրոպական երկրների գործերին միջամտել: Ռուզվելտն ամբողջությամբ պահպանեց նրա ոգին, որով ԱՄՆ պատասխանատու էր երկու տասնյակ լատինամերիկյան երկրների «կարգի» համար: Ռուզվելտը «Մոնրոյի դոկտրինան» էապես «հարստացրեց» սեփական մեկնաբանությամբ, որը հայտնի է «Ռուզվելտի հավելում» անվամբ: Նա հայտարարեց, որ ԱՄՆ միջամտությունը Լատինական Ամերիկայի երկրների ներքին գործերին կհամարվի օրինական և արդարացված, եթե այդ պետություններն ի վիճակի չեն լինի հաղթահարել ներքին խնդիրները: Այս ամենը նա հայտարարեց մայիսի 20-ին: Իսկ դեկտեմբերի 6-ին Կոնգրեսին հղած ուղերձներում նախագահը հայտարարեց. «Ցանկացած երկիր, ժողովուրդ, ով իրեն լավ կպահի, կարող է ակնկալել մեր անկեղծ բարեկամությունը» :

Թեոդոր Ռուզվելտի լատինամերիկյան քաղաքականության գլխավոր իրադարձությունը հանդիսանում էր Կոլումբիայից Պանամայի անջատումը և նրա տարածքում շինարարության իրականացում՝ ջրանցք կառուցելու համար, որը կապվում էր Ատլանտյան և Խաղաղ օվկիանոսների հետ: Ռուզվելտի պատկերացումներում գերակշռում էր ռազմական դրդապատճառները, քանի որ կար հնարավորություն ռազմածովային ուժերը մի տարածաշրջանից մյուսն արագընթաց տեղափոխելու համար: Այս հարցի վերաբերյալ անհրաժեշտ էր կարգավորել հարաբերությունները Անգլիայի հետ [2]: Մեծ ուշադրություն դարձվեց 1850 թվականին ստորագրված Քլեյտոն-Բուվեր պայմանագրի փոփոխման և ԱՄՆ ու Մեծ Բրիտանիային առաջարկվող ջրանցքի կառուցման համար հավասար իրավունքներ տրամադրելու վրա: 1901 թվականի նոյեմբերին կնքվեց երկրորդ պայմանագիրը. այսպես կոչված «Հեյ-Պաունսոֆտի», որով Անգլիան հրաժարվում էր ապագա ջրանցքի կառուցման համար իր իրավունքներից: Այսպիսով մնում էր Կոլումբիայի համոզել, որ նրա Պանամա նահանգը լավագույն վայրն է ամերիկյան ջրանցքի շինարարության համար:

Հետագայում Թեոդոր Ռուզվելտը գրում էր, որ պանամական նախագիծը «Ձեռնարկվել է հասարակության և կառավարության էթիկայի բարձրագույն, ամենապարզ, արժանի չափանիշներին համապատասխան»: Սա ակնհայտ սուտ էր: 1902 թվականին ԱՄՆ կոգրեսը 40 միլիոն դոլար հատկացրեց շինարարության բաժնետոմսերի ձեռքբերման համար, պայմանով, որ նախագահ Ռուզվելտը կստանա իրավունք Կոլումբիայի տարածքում ջրանցքի նկատմամբ: Ստորագրվեց ԱՄՆ պետքարտուղար Ջոն Հեյի և Կոլումբիայի գործերի ժամանակավոր հրամանատար Թոմաս Հերրանի միջև Հեյ-Հերրան պայմանագիրը: Սրանով նախատեսվում էր 10 միլիոն դոլար տրամադրել և տարեկան 250 հազար դոլար որպես վարձավճար: Այսինքն Կոլումբիան ջրանցքի կառուցման տարածքը անժամկետ վարձակալությամբ

հանձնվում էր ԱՄՆ-ին: Ռուզվելտը Բոգոտայում իր դեսպանին հրամայեց հայտարարել, որ «պայմանագրի որևէ կետի ցանկացած փոփոխություն կդիտվի որպես Կոլումբիայի կառավարության կողմից իրական դավաճանություն»»: Կոլումբիան 1903 թվականի օգոստոսի 12-ին չեղյալ հայտարարեց ԱՄՆ-ի հետ կնքված պայմանագիրը, որը կնքվել էր 1903 հունվարի 22-ին: Սակայն պայմանագիրը վավերացվել էր 1903 թվականի մարտի 14-ին ԱՄՆ Սենատի կողմից [3]:

Այս ընթացքում Ռուզվելտը հայտարարում էր. «Չեմ կարող թույլ տալ, որ բանդիտների ինչ-որ շարկա թալանի քեի Սեմին»»: Իսկ 1903 թվականի հոկտեմբերի 10-ին Ռուզվելտը գրում էր, որ «Ես հիացած կլինեմ, եթե Պանաման դառնա անկախ պետություն»»: Ռազմական նախարար Ռութին հանձնարարվեց «ստեղծել տարածքների քարտեզներ և տեղեկություններ հավաքել Հարավային Ամերիկայի այն տարածքների վերաբերյալ, որոնք հատուկ հետաքրքրություն կներկայացնեն Մեքսիկական ծոցում կամ Կարբյան ծովում մարտերի դեպքում»:

1903 թվականի աշնանը վերջնականապես փլուզվեց միջազգային իրավունքի տեսքով ժամանակավոր խոչընդոտները: Կոնգրեսին ուղղված ուղերձում Ռուզվելտը գրում էր. «Մենք պետք է սկսենք կառուցել ջրանցքը, առանց Կոլումբիայի հետ հետագա բանակցություններ վարելու ... դա պահանջում է մեր ազգի շահը»»: 1903 թվականի հոկտեմբերի 9-ին Բունաու-Վարիլլան նախագահ Թեոդոր Ռուզվելտին և Հեյին հայտնեց, որ հնարավոր է, որ Կոլումբիայից անջատվելու նպատակով պանամական ապստամբները խռովություն բարձրացնեն: Ավելի ուշ հայտնվեց ավելի անկեղծ խոստովանություն. «Եթե նրանք չապստամբեին, ես Կոնգրեսին առաջարկություն կներկայացնեի ռազմական ուժերի օգնությամբ պարանոցը բնագրավելու մասին, և ես արդեն գրել եմ նման ուղերձի առաջին տարբերակը» : Բայց նրանք «ապստամբեցին»:

Պանամացիների ապստամբությունը, ովքեր ֆինանսավորվում և պատարաստվում էին ԱՄՆ կողմից, նախագահի կողմից անվանվեց <<առավել արդար և արժանապատիվ հեղափոխություն>> : Գաղտնի հանդիպում տեղի ունեցավ Ռուզվելտի և ամերիկյան պանամական երկաթուղային ընկերության աշխատակից Մանուել Ամադորի միջև: Տեղական կայազորի զինվորներից յուրաքանչյուրին գնում էին 50 դոլարով: 1903 թվականի նոյեմբերի 3-ին Պանամայում հրշեջ ջոկատը սկսեց զենքեր բաժանել, իսկ տեղի ունեցողով հետաքրքրվող երկու գեներալի արգելափակեցին ոստիկանության բաժանմունքում [4]: Մինչ այս Մանուել Ամադոր Գերերոյին էր հանձնվել սահմանադրության նախագիծը, Պանամայի անկախության հռչակագիրը և Բունաու-Վարիլլայի որպես ԱՄՆ դեսպան Պանամայում նշանակելու վերաբերյալ տեքստը: Վերջինիս կինը Ամադորի մեկնելուց հետո ողջ գիշեր արեց Պանամայի դրոշի էսքիզները: Հաջորդ օրը՝ առավոտյան Ամադորը հայտնում էր, որ <<աշխարհը ցնցված է մեր հերոսությունից, որ Կոլումբիայի երեկվա ծառաները դարձան ազատ քաղաքացիներ>>: ԱՄՆ անմիջապես ճանաչեց Պանամայի անկախությունը: Դեռևս նոյեմբերի 2-ին ամերիկյան ռազմանավերը փակեցին ծովային ուղիները կոլումբիական գործերի շարժումը արգելակելու և ապստամբությունը ճնշելու համար: Պատճառաբանվեց այդ ամենը, որ «պատահականորեն են» հայտնվել ռազմանավերը Կոլումբիայի նավահանգստում: Այսպես իրականացվեց մի գործողություն, որը նախագահ Ռուզվելտը անվանում էր «ամենակարևոր գործը», որ նա կատարել է արտաքին քաղաքականության մեջ:

1903 թվականի նոյեմբերի 6-ին Ֆիլիս Բունաու-Վարիլլան ստորագրեց Հեյ-Բունաու-Վարիլլայի պայմանագիրը, որով ԱՄՆ-ին շնորհվեց Պանամայի ջրանցքի գոտին, այն կառուցելու և անժամակետ կառավարելու ու նրա պաշտպանության իրավունքը: Ամերիկյան

<<The New York Times>> թերթը ԱՄՆ-ի տրամադրած օգնությունը Բուսու-Վարիլլային անվանեց <<դաժան նվաճման գործողություն>>: ԱՄՆ Պանամային վճարեց 10 միլիոն դոլար, իսկ ամեն հաջորդող տարվա ընթացքում 250 հազար դոլար: 1904 թվականի մայիսի 6-ին նախագահ Թեոդոր Ռուզվելտը Ջոն Ֆինդլի Ուոլմսին, որը նախկինում եղել էր Իլինոյա նահանգի կենտրոնական երկաթուղու գլխավոր ինժեները, նշանակեց Պանամայի ջրանցքի ծրագրի գլխավոր ինժեներ: Նա 1905 թվականին հրաժարվեց այդ նշանակումից՝ վախենալով երկրում առկա համաճարակից: Նրան հաջորդեց Ջոն Ֆրենկ Ստիվենսը, ով կառուցել էր Հյուսիսային մեծ երկաթուղին:

1904 թվականի նոյեմբերին կառավարման երկրորդ ժամկետը ստանձնելուց հետո Ռուզվելտը շարունակեց գործել փառասիրական ուղղությամբ:

1904 թվականի ապրիլի 4-ին Կոլումբիա օկրուգի Փենթալփա թիվ 23 օթյակը նրան ընտրել է պատվավոր անդամ: Որպես բարձրաստիճան մասոն Թ. Ռուզվելտը ներկա է գտնվել մասոնների հանդիպումների և քննարկումների նույնիսկ արտերկրում: Մասնակցել է մասոնական և մի շարք հաստատությունների և կառույցների ակնունաքարի տեղադրման արարողությունների:

Արտաքին քաղաքականությունում Ռուզվելտի հաջորդ ձեռնարկումը ռուս-ճապոնական պատերազմին միջամտելն էր: Ռուս-ճապոնական պատերազմում ցանկացած կողմի հաղթանակը սպառնում էր ԱՄՆ-ին: Ճապոնիայի հաղթանակը սպառնում էր ԱՄՆ չինական շուկա դուրս գալու կորուստով, Խաղաղ օվկիանոսում առանցքային դիրքերի կորուստով: Ռուզվելտը ցանկանում էր, որ Ռուսաստանը շարունակի Ճապոնիային զսպել Արևելյան Ասիայում և միաժամանակ ձգտում էր կանխել Չինաստանում Ռուսաստանի ազդեցության ամրապնդումը և այնտեղ եվրոպական ուժերի ազդեցության գոտիների ամրապնդումը [5]:

Ռուզվելտը դեմ էր միջազգային կոնգրեսի հրավիրմանը պատերազմի դադրեցման համար, որի դեպքում Ամերիկյան կհայտնվի եվրոպական մրցակցության խառնաշփոթում: Մնում էր միայն ռուս-ճապոնական բանակցությունների կազմակերպման գործն իրականացնել անձամբ: Միջնորդներն էին ԱՄՆ-ում ճապոնիայի դեսպան Տակահիրո և բարոն Կանեկոն : Ռուսկան կառավարության հետ բանակցություններում Ռուզվելտը ապավինում էր կայզր Վիլհելմի և Ռուսաստանում ԱՄՆ դեսպան Ջորջ Մեյերի աջակցությունը: 1905 թվականի մայիսի 31-ին խաղաղության նախաձեռնությամբ հանդես գալու համար հարմար պահ ստեղծվեց: Այդ օրը Ռուզվելտը ճապոնիայի արտաքին գործերի նախարար Կոմուրայից ստացավ կաբելահեռագիր, որը պարունակում էր խաղաղության համաժողովին համաձայնվելու վերաբերյալ բովանդակություն: Նիկոլայ II նույնպես համաձայն էր համաժողով անցկացնել՝ պայմանով, որ միջնորդները չմասնակցեն իր աշխատանքին, իսկ ճապոնիայի պահանջները հայտնի դառնան ավելի վաղ: 1905 թվականի հունիսի 10-ին Ռուզվելտը հանդես եկավ <<համարձակ առաջարկով>> նրանց պաշտոնապես հրավիրելով բանակցային սեղանի մոտ: Միայն տարիներ անց հայտնի դարձավ Ռուզվելտի գաղտնի հանդիպումները ճապոնացիների հետ:

Ռուզվելտը ցանկանում էր հանդիպումներ անցկացնել Հաագայում կամ Ժնևում, սակայն պատերազմող կողմերը նախընտրում էին Վաշինգտոնը, թեև հետագայում փոխեցին իրենց կարծիքը հոգուտ ծովափնյա ամերիկյան քաղաք Պորտսմութի: Գաղտնի նամակագրությունում Ռուզվելտը չէր թաքցնում, որ Միացյալ Նահանգների համակրանքը ճապոնացիների կողմն է: <<Վիտտը, և առաջին հերթին, թագավորը պետք է հստակ հասկանան, որ այս պատերազմում պարտված են, խաղաղությունը պետք է ստորագրվի այն հստակ գիտակցմամբ, որ ճապոնացիներն են հաղթողները>>՝ Գերմանիայի դեսպանին ուղղված նամակում ասում էր Ռուզվելտը:

Նիկոլայ II սխալվեց, երբ խնդրեց Ռուզվելտին նախապես ուսումնասիրել ճապոնական առաջարկները և համոզել նրանց վերանայելու ծայրահեղ պահանջները:

Երբ թվում էր, թե կոնֆերանսը գնում է լիակատար փակուղի՝ Սախալինի և տույժերի վերաբերյալ վեճի պատճառով, Ռուզվելտը քայլ արեց, որը պսակվեց հաշտեցման ջանքերով: Նիկոլայ II-ին ուղղված ուղերձում նկարագրեց այն, թե որն է ըստ նրա լավագույն փոխզիջումը. ճապոնիան հրաժարվում էր Խաղաղ օվկիանոսում ռուսական ռազմածովային ուժերի սահմանափակման պահանջից, իսկ Ռուսաստանը հրաժարվելու էր հարավային Սախալինից և համաձայնվելու էր ռազմական տուգանք վճարել: <<Եթե խաղաղությունն այս պահին չկնքվի ... Ռուսաստանը կկորցնի Արևելյան Սիբիրի նահանգները>>:

Ամենակարևորը օգոստոսի 27-29 նախագահի գաղտնի գործողությունն էր, երբ ռուսական պատվիրակությունը, հետևելով ընտրված մարտավարությանը, ցուցադրաբար փաթեթավորեց ճամպրուկները: Ռուզվելտն անցավ կոպիտ ճնշման, եթե ճապոնական կողմը զիջումներ չկատարեր, ձախողումից չէին խուսափի: Բարոն Կանեկոն Ռուզվելտին հայտնեց լուրերը. <<Մեր կայսրը որոշեց հետևել քաղաքականության այն գծին, որը Դուք առաջարկում էիք ինձ ուղղված ձեր նամակում՝ փոխանցված մեր կառավարության կաբելով>>: Երբ պայամանգիրը ստորագրվեց, Ռուզվելտը ճապոնական կայսրին ուղարկեց <<սրտանց շնորհավորանքներ իմաստության և առատաձեռնության կապակցությամբ, որը դրսևորեց նա և ճապոնացի ժողովուրդը>>:

Լոջը գրում էր. <<Մենք՝ գոյություն ունեցող մեծագույն բարոյական և ֆիզիկական ուժ ենք, և խաղաղությունը երկրի վրա կախված է մեզանից>>:

Ամերիկայի հեղինակությունն ամրապնդեց Նոբելյան կոմիտեի

որոշումը՝ Ռուզվելտին խաղաղության մրցանակ շնորհելու կապակցությամբ:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. *Уткин А.И.* Теодор Рузвельт. Политический портрет, М., 1989г. СС. 100–130.
2. *Մովսիսյան Ֆ.Վ.* Մասսոնները և ամերիկյան հեղափոխությունը, Եր., 2015թ., էջ 499–500:
3. История США (1870-1918), Т.2, под ред. Г.П. Куропятник, И. А. Белявская, Москва 1985г. СС. 296–309.
4. <http://padaread.com/?book=69953&pg=566>
5. *Белявская И.А.* Теодор Рузвельт и общественно-политическая жизнь США, М. 1978г. СС. 167–195.

МАСОНСКАЯ ПОЛИТИКА БОЛЬШОГО ДУБИНА ТЕОДОРА РУЗВЕЛЬТА

М. Симонян

Ванадзорский государственный университет

mar-simon@mail.ru

АННОТАЦИЯ

Под председательством Теодора Рузвельта были предприняты шаги для повышения роли США на мировой арене. Для этого он сделал изменения в области внешней политики, которая известна как политика большого дубина.

Ключевые слова: Теодор Рузвельт, США, Панама, русско-японская война, большой дубина.

УГОЛОВНОЕ ПРАВО

НЕКОТОРЫЕ ВОПРОСЫ, КАСАЮЩИЕСЯ УГОЛОВНОЙ ОТВЕТСТВЕННОСТИ ЛИЦ, СОВЕРШИВШИХ ПРЕСТУПЛЕНИЕ В СОСТОЯНИИ АЛКОГОЛЬНОГО И НАРКОТИЧЕСКОГО ОПЬЯНЕНИЯ

Н.Ю. Зограбян, А.Ш. Варданян, И.Л. Искандарян

*Российско-Армянский университет
Институт права и политики*

Naira2004@inbox.ru, Hamik1992@mail.ru

АННОТАЦИЯ

В статье произведен анализ уголовного законодательства в области обстоятельства, отягчающего наказание, как совершение преступления в состоянии опьянения. Рассмотрены разные точки зрения относительно понятия алкогольное опьянение и его значение для квалификации преступлений и уголовной ответственности. В статье рассмотрены положения ряда зарубежных уголовных законодательств: РА, РФ, Швейцарии, Испании, ФРГ и т.д.

Ключевые слова: алкогольное опьянение, наркотическое опьянение, вменяемость, невменяемость, ответственность.

В современном армянском и российском уголовном праве большое теоретическое и практическое значение имеет изучение вопросов уголовной ответственности лиц, совершивших общественно опасное деяние в

состоянии опьянения. Положение об ответственности за совершение преступления в состоянии алкогольного опьянения в российском уголовном законодательстве нашло свое конкретное разрешение не сразу. По существу длительное время уголовная ответственность была предусмотрена за совершение преступного деяния в состоянии алкогольного опьянения, которое по усмотрению суда могло быть признано отягчающим обстоятельством. В настоящее время российский законодатель относится к вышеназванному обстоятельству индифферентно, считая опьянение нейтральным фактором. Оно не смягчает и не отягчает ответственности. Может быть, следовало умолчать об этом, как умалчивают некоторые зарубежные уголовные кодексы (ФРГ, Франция). Думается, что данная норма включена в общепрофилактических целях. Веками сложившееся снисходительное отношение к состоянию опьянения, как некоему извиняющему фактору, не смогла преодолеть даже многолетняя практика применения УК РСФСР 1960г., который относил опьянение к отягчающим обстоятельствам.

Новый УК Армении 2003г. в п.14 ч.1 ст. 63 предусматривает наличие алкогольного опьянения в числе обстоятельств, отягчающих ответственность и наказание.

Вместе с тем, согласно ст. 27 УК РА 2003г. и ст. 23 УК России 1996 г., уголовная ответственность наступает за совершение преступления не только в состоянии алкогольного опьянения, но также вызванного употреблением наркотических средств и одурманивающих веществ, что является новизной для уголовного законодательства, требующей ее осмысления как теорией, так и практикой.

В связи с этим представляется целесообразным в первую очередь раскрыть смысл, вкладываемый законодателем в понятие «алкогольное опьянение». Так как именно в данном состоянии лица чаще всего совершают самые различные общественно опасные деяния, что имеет принципиальное значение не только для привлечения субъекта преступления к уголовной ответственности, но и тогда, когда она отсутствует, если речь

идет о патологическом опьянении, которое необходимо отличать от физиологического (простого) опьянения¹.

В состоянии физиологического опьянения полностью не искажается восприятие окружающего мира и объективной реальности, так как происходит лишь некоторое временное нарушение психической деятельности, которое прямо противоположно патологическому опьянению. Следовательно, при физиологическом опьянении, хотя и ослабляется функционирование тормозных процессов, происходящих в организме, и теряется контроль над своим поведением, однако у пьяного субъекта сохраняется непосредственный контакт не только с окружающей средой, но и его действия и поступки, как у любого нормального и трезвого человека, носят мотивированный характер².

И, поэтому считаем, что при совершении преступления лицом в состоянии физиологического алкогольного опьянения присутствует основание уголовной ответственности и лицо является вменяемым.

Смысл рассматриваемой статьи заключается в том, что опьянение признаётся нейтральным обстоятельством по отношению к вменяемости лица; оно не признаётся способным оказывать на неё влияние. В связи с этим лица, совершившие преступления в состоянии опьянения, несут ответственность на общих основаниях. Положения ст. 27 УК РА (ст. 23 УК РФ) не следует понимать как влекущие однозначное признание лица вменяемым в момент совершения преступления. Лицо, находящееся в момент совершения преступления в состоянии опьянения, может страдать иным расстройством психики и вследствие этого быть невменяемым³.

Особо следует обратить внимание, что при любой степени опьянения, даже при тяжелой, как отмечается в юридической литературе, и с этим следует согласиться, отсутствует медицинский критерий невменяемости, т. е. какое-либо психическое расстройство. Наряду с этим, при

¹Бейсенов Б.С. Алкоголизм: уголовно-правовые и криминологические проблемы. М., 1985. С. 34.

²Лейкина Н.С. К вопросу об основании ответственности за преступления, совершенные в состоянии алкогольного опьянения // Вестник ЛГУ. 1958, №11, С. 18.

³Зограбян Н.Ю. К вопросу об уголовной ответственности за совершение преступления в состоянии опьянения // Правосудие. 2009, № 2(2), С. 60.

физиологическом опьянении любой степени, как правило, отсутствует и юридический критерий невменяемости, так как опьянение не приводит к полному отсутствию контроля над сознанием и возможности руководить своими действиями⁴.

Существенное значение имеет четкое разграничение тяжелой степени физиологического опьянения от патологического, поскольку для патологического опьянения характерно внезапное помрачение сознания, бред, галлюцинации. Такое состояние может быть вызвано даже малой дозой алкоголя. Начинается и прекращается патологическое опьянение внезапно.

В психиатрии патологическое опьянение относится к группе острых кратковременно протекающих психических расстройств. Совершаемые в состоянии патологического опьянения преступные действия не являются реакцией на какие-либо имеющие место реальные события⁵. Такое поведение лица, находящегося в состоянии патологического опьянения, объясняется, прежде всего, болезненным искаженным восприятием окружающей среды, в которой находится данное лицо, немотивированным и довольно часто агрессивным поведением. В данном состоянии признаются невменяемыми, если имеет место совокупность медицинского и юридического критериев. В этом случае лицо не признается субъектом преступления.

В этом отношении небезынтересно законодательное урегулирование алкогольного опьянения в УК Германии. В частности, ст.20 УК Германии допускает возможность исключения вменяемости лица, находящегося в состоянии алкогольного опьянения (речь идет о физиологическом опьянении), и использует три конструкции. 1-ое правило, предусматривает уголовную ответственность. 2-ое правило, состояние алкогольного опьянения приравнивается к невменяемости. 3-ое правило, ответственность за пьянство, в условиях дорожного движения⁶. На наш взгляд недопустимо

⁴Смирнов В.Г. Основания уголовной ответственности и наказания за преступление, совершенное в состоянии опьянения / / Вестник ЛГУ 1964, №11, С. 33.

⁵Калашиник Я. М. Судебная психиатрия. М., 1961. С. 279; Судебная психиатрия. Учебник для вузов. Б.В.Шостакович, Москва: «Зерцало», 1997. С. 231-239

⁶Жалинский А.Э. Современное немецкое уголовное право. М., 2004. С.224.

отразить данное положение в УК РА и УК РФ, поскольку слишком широкое использование такой возможности привело бы к пагубным последствиям. И поэтому, считаем целесообразным закрепить в ст.27 УК РА (ст.23 УК РФ) следующее положение: если лицо посредством опьянения намеренно приводит себя в такое состояние с целью облегчить совершение преступления, то оно подлежит уголовной ответственности.

Рассмотрим следующий вопрос: как же быть с лицом, которое с целью совершения преступления привело себя в состояние невменяемости (например, с помощью алкогольного или наркотического опьянения)? Как отмечалось в литературе, любая степень опьянения не имеет никакого отношения к вменяемости, в законе говорится лишь о том, что состояние опьянения не освобождает от ответственности. Представляется, что данный вопрос должен быть решен путем включения в закон специальной нормы, которая бы предусматривала исключение применения положений о невменяемости, если лицо привело в состояние расстройства свое сознание любым способом с намерением совершить преступление. Такого или аналогичного содержания нормы имеются, например, в уголовных кодексах Польши, Швейцарии⁷. В случае принятия подобной нормы каждый раз необходимо было бы устанавливать, что речь идет о предумышленном преступлении, совершить которое лицо решило, находясь в здравом рассудке.

Крайне дискуссионным является вопрос относительно уголовно-правовой оценки алкогольного опьянения тяжелой степени. Предлагается, по меньшей мере четыре подхода к ответственности лиц, совершивших преступление в состоянии такого опьянения:

1. Такие лица являются невменяемыми и не должны нести уголовную ответственность.

2. Такие лица являются невменяемыми, но должны нести уголовную ответственность в целях общего предупреждения или за добровольное доведение себя до состояния опьянения, повлекшего совершение преступления.

⁷УК Швейцарии. М.: «Зерцало», 2003. С. 8.

3. Опынение является «аномалией психики», основанием для признания лица ограниченно вменяемым.

4. Такие лица являются вменяемыми и должны нести уголовную ответственность. Законодатель под опынением понимает не только состояние, вызванное употреблением алкоголя, но и потреблением наркотических средств или одурманивающих веществ. Последние виды опынения, как мы уже отмечали, представляют собой новшество для российского и армянского уголовного законодательства и имеют принципиальное отличие, с точки зрения медицины, от алкогольного опынения.

Строго говоря, с медицинской точки зрения, эти состояния не тождественны. Они различаются в проекте УК РФ 1992г., различаются в УК Испании 1995г. (ст.21)⁸, в УК Республики Узбекистан 1994г. (ст.19). Считаем некорректным применение термина «опынение» к состоянию, вызванному потреблением наркотических средств или одурманивающих веществ.

Предлагаем изложить статью 27 УК РА (ст. 23 УК РФ) в следующей редакции: Лицо, совершившее преступление в состоянии алкогольного опынения, наркотической интоксикации или (под действием одурманивающих веществ) состоянии интоксикации, вызванной другими одурманивающими веществами, подлежит уголовной ответственности.

Состояние наркотического опынения обычно наступает при употреблении лицом или воздействии на организм наркотических средств, которые могут являться как лекарственными, так и нелекарственными. Согласно ФЗ «О наркотических средствах и психотропных веществах» от 10 декабря 1997 г. под наркотическими средствами понимаются вещества синтетического или естественного происхождения, а также препараты и растения, включенные в Перечень наркотических средств, психотропных веществ и т. п., которые подлежат контролю в России в соответствии с законодательством Российской Федерации и международными договорами⁹.

⁸УК Испании употребляет следующие термины «алкогольное отравление, действие токсических или одурманивающих наркотических средств, психотропных веществ.

⁹Криминальный вестник 1998. № 3-4.

Наркотическое опьянение имеет свои особенности, в отличие от алкогольного, и по внешним проявлениям чаще всего может быть определено как эйфорическое. Оно также характеризуется вялостью и сонливостью, часто бессмысленным выражением лица, монотонной и неясной речью. Сам субъект становится вялым и малоподвижным, отгороженным от окружающего. Нередко наркотическое опьянение сопровождается галлюцинаторными переживаниями¹⁰.

Следует также отметить, что, как и при алкогольном опьянении, осознанность своего поведения и контролируемость поступков у лица, находящегося в данном состоянии, сохраняется.

При этом лицо, совершившее преступление в состоянии наркотического опьянения, как мы уже неоднократно отмечали, в связи с указанием закона (ст. 27 УК РА и ст. 23 УК РФ) не освобождается от уголовной ответственности. Оно в данном случае является субъектом преступления, как и при физиологическом алкогольном опьянении.

Суд на основании ст. 26 УК РА (ст. 22 УК РФ) может учесть это обстоятельство при назначении наказания, в случае отнесения опьянения к психической аномалии. Однако специфика данной психической аномалии состоит в том, что она развивается вследствие асоциального поведения лица, выражающегося в пьянстве. Именно, поэтому суды не склонны смягчать наказание наркоманам и алкоголикам. Более того, Пленум Верховного Суда РФ в Постановлении от 29.10.2009г. №21 «О практике назначения судами уголовного наказания»¹¹ рекомендовал судам учитывать при назначении наказания состояние опьянения субъекта в момент совершения преступления, вызванное употреблением алкоголя, наркотических средств или других одурманивающих веществ, при оценке данных, характеризующих личность виновного, несмотря на то, что состояние опьянения не включено в перечень обстоятельств, отягчающих наказание (ст. 63 УК РФ). Это привело к тому, что суды стали расширительно толковать перечень отягчающих обстоятельств. Не совсем оправдан одинаковый

¹⁰ Судебная психиатрия. М., 1986. С. 245; Дунаевский В.В., Стяжкин В.Д. Наркомания и токсикомания. Л. 1991. С. 109-110.

¹¹ Бюллетень Верховного Суда РФ. 1999. N 8. С. 2.

подход к столь различным ситуациям, когда, наряду с постоянным злоупотреблением алкоголем, встречаются случаи совершения преступления в результате единичного употребления алкогольных и наркотических средств. Из рекомендации Верховного Суда вытекает, что единичные и многократные случаи приравниваются к общим.

В зарубежной уголовной науке встречается термин «недобровольное опьянение». Например, в законе Великобритании мало внимания обращается на заявления индивидов о том, что они выпили с целью «избавиться от собственных комплексов». Выглядит неуместным утверждение, что индивид не совершил бы преступление, если бы не употребил алкоголь; считается, что он полностью несет ответственность за поведение в момент совершения правонарушения. Тем не менее, закон применим в случаях, когда степень интоксикации индивида настолько выражена, что у него отсутствует необходимое душевное состояние по отношению к указанному преступлению (*mens rea* – виновная воля) или если имеет место состояние автоматизма. Вопрос не в том, способен ли был обвиняемый к формированию *mens rea*, а в том, была ли она фактически сформирована¹².

Чаще всего к недобровольному опьянению относятся случаи, когда опьянение вызывается неосознанно, т.е. не самим обвиняемым, а третьими лицами. Опьянение также может быть признано недобровольным, если оно вызвано лекарственными препаратами, принимаемыми по предписанию врача и в назначенных дозировках, либо лекарственными препаратами, которые обычно не вызывают непрогнозируемого поведения или агрессивности, независимо от того, принимаются ли они в нормальном или избыточном количестве (например, седативные препараты, такие как бензодиазепины).

Российский и армянский законодатель не учитывают факт недобровольного, принудительного опьянения.

Некоторые ученые, в частности, В.Г. Павлов считают, что если алкогольное, наркотическое и токсическое опьянение наступило в результате насильственного, т.е. физического принуждения, произошедшего про-

¹²*Intoxication and legal defences* © 2005 The Royal College of Psychiatrists.

тив воли лица, то в некоторых случаях, при отсутствии вины в его действиях, может иметь место освобождение от уголовной ответственности¹³.

На практике встречаются случаи, когда принудительно отпаивают человека с целью подавления его воли, сопротивления, вызывая тем самым решимость совершить преступление, поскольку как мы уже отмечали выше, осознанность поведения и контролируемость поступков у лица в состоянии алкогольного и наркотического опьянения ниже, чем в нормальном состоянии.

Следует отметить, что вопросы уголовной ответственности за совершение преступления в состоянии наркотического, как и алкогольного опьянения, вызванного насильственным, против воли лица, потреблением наркотических средств, действующим УК РА и УК РФ не регламентированы и во избежание в дальнейшем нарушения принципа справедливости предлагаем ввести в ст.62 УК РА (ст.61 УК РФ) в числе обстоятельств, смягчающих наказание «совершение преступления, в состоянии алкогольного, наркотического и одурманивающего опьянения, вызванного насильственным, против воли лица потреблением вышеназванных средств». Хотя перечень обстоятельств, смягчающих ответственность и наказание неисчерпывающий, тем не менее считаем целесообразным включение данного обстоятельства в вышеназванную статью, для устранения субъективного подхода в определении того или иного обстоятельства, смягчающим наказание.

Заключение

Предлагаем внести следующие законодательные изменения и дополнения.

1. Ст. 27 УК РА (ст. 23 УК РФ) изложить в следующей редакции:

а) Лицо, совершившее преступление в состоянии алкогольного опьянения, наркотической интоксикации или в состоянии интоксикации, вызванной другими одурманивающими веществами, подлежит уголовной ответственности.

б) Если лицо посредством опьянения намеренно приводит себя в

¹³Павлов В.Г. Субъект преступления. Санкт-Петербург, 2001. С.180.

невменяемое состояние с целью облегчить совершение преступления, то оно подлежит уголовной ответственности.

2. Предлагаем предусмотреть в ст. 62 УК РА (ст. 61 УК РФ) в числе обстоятельств, смягчающих наказание «совершение преступления, в состоянии алкогольного, наркотического и одурманивающего опьянения, вызванного насильственным, против воли лица потреблением вышеназванных средств».

3. Предлагаем, исходя из статистики, свидетельствуемой о повышении количества преступлений, совершаемых в состоянии алкогольного и наркотического опьянения, пойти по пути законодателя Армении и предусмотреть в ст.63 УК РФ в числе обстоятельств, отягчающих наказание «Совершение преступления в состоянии алкогольного и наркотического опьянения».

ЛИТЕРАТУРА

1. *Бейсенов Б.С.* Алкоголизм: уголовно-правовые и криминологические проблемы. М., 1985. С. 34
2. *Лейкина Н.С.* К вопросу об основании ответственности за преступления, совершенные в состоянии алкогольного опьянения // Вестник ЛГУ. 1958, №11, С. 18
3. *Зограбян Н.Ю.* К вопросу об уголовной ответственности за совершение преступления в состоянии опьянения // Правосудие. 2009, №2(2), С.60
4. *Смирнов Б.Г.* Основания уголовной ответственности и наказания за преступление, совершенное в состоянии опьянения // Вестник ЛГУ 1964, №11, С.33
5. *Калашиник Я.М.* Судебная психиатрия. М., 1961. С. 279; Судебная психиатрия. Учебник для вузов. Б.В. Шостакович, Москва: «Зерцало», 1997. СС 231-239
6. *Жалинский А.Э.* Современное немецкое уголовное право. М., 2004. С. 224
7. *УК Швейцарии.* М: «Зерцало», 2003. С. 8

8. *УК Испании* употребляет следующие термины «алкогольное отравление, действие токсических или одурманивающих наркотических средств, психотропных веществ».
9. *Криминальный вестник* 1998 № 3-4
10. *Судебная психиатрия*. М., 1986. С. 245; Дунаевский В.В., Стяжкин Б.Д.. Наркомания и токсикомания. Л. 1991. СС 109-110
11. *Бюллетень Верховного Суда РФ* 1999. № 8. С. 2
12. *Intoxication and legal defences 2005 The Royal College of Psychiatrists*
13. Павлов В.Г. Субъект преступления. Санкт-Петербург, 2001. С. 180

**SOME ISSUES CONCERNING CRIMINAL RESPONSIBILITY
OF PERSONS WHO HAVE COMMITTED CRIME IN THE STATE
OF ALCOHOL AND DRUG INTOXICATION**

N. Zohrabyan, H. Vardanyan

*Russian-Armenian University
Institute Law and Politic*

Naira2004@inbox.ru, Hamik1992@mail.ru

ABSTRACT

The article analyses the criminal legislation in the application of such circumstance aggravating punishment as crime in a state of intoxication. Different point of view on a concept to state of intoxication of crimes and criminal liability are considered. In the article we describe foreign criminal legislation; Republic of Armenia, Russian Federation, Germany, Switzerland etc.

Keywords: alcohol intoxication, drug intoxication, insanity, sanity, responsibility

ՈՐՈՇ ՀԱՐՑԵՐ, ՎԵՐԱԲԵՐՎՈՂԱՅՆ ԱՆՁԱՆՑ ՔՐԵԱԿԱՆ
ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆԸ, ՈՎՔԵՐ ՀԱՆՑԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆ ԵՆ
ԿԱՏԱՐԵԼ ՈԳԵԼԻՑ ԽՄԻՉՔԻ ԵՎ ԹՄՐԱՆՑՈՒԹԵՐԻ
ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՏԱԿ

Ն. Զոհրաբյան, Հ. Վարդանյան

*Հայ-Ռուսական Համալսարան
Իրավունքի և Քաղաքականության Ինստիտուտ*

Naira2004@inbox.ru, Hamik1992@mail.ru

ԱՍՓՈՓՈՒՄ

Սույն հոդվածում վերլուծություն է կատարվել անձի պատասխանատվությունը ծանրացնելու վերաբերյալ, երբ կատարվել է հանցագործություն ոգելից խմիչքի ազդեցության տակ: Հեղինակնուսումնասիրել է տարբեր կարծիքներ «ալկոհոլային թունավորում» եզրույթի վերաբերյալ և վերջինիս նշանակությունը հանցագործությունների որակավորման համար: Նաև հոդվածում նախատեսված են որոշ պետությունների դրույթներ, որոնք են՝ Ռուսաստանի Դաշնության, Հայաստանի Հանրապետության, Շվեյցարիայի, Գերմանիայի և այլ երկրների քրեական օրենսդրությունները:

Հիմնաբառեր՝ ոգելից խմիչք, պատասխանատվություն, մեղսունակություն, անմեղսունակություն, թմրամիջոցներով թունավորում:

**ԽՈՒԼԻԳԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԴՐԱ ՈՐԱԿՄԱՆ
ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ**

Չ.Ա. Թադևոսյան, Հ.Ա. Ադասարյան

Հայ-Ռուսական Համալսարան

Crimlaw.rau@mail.ru, hovhannes022@mail.ru

ԱՄՓՈՓՈՒՄ

Մույն աշխատանքում ուսումնասիրվել է խուլիգանություն հանցակազմը, ինչպես նաև խուլիգանության քրեաիրավական բնութագիրը և ծանրացնող հանգամանքները: Հատկապես կուսումնասիրենք խուլիգանության հանցակազմի տարրերը(օբյեկտ, օբյեկտիվ կողմ, սուբյեկտ և սուբյեկտիվ կողմ), հստակ ներկայացնելով դրանց որակման առանձնահատկությունները:

Հիմնաբառեր՝ խուլիգանություն, հասարակական կարգ, կոպիտ խախտում, բացահայտ անհարգալից վերաբերմունք, ցինիզմ:

Թեմայի արդիականությունը: Խուլիգանությունը հանրորեն առավել վտանգավորություն ներկայացնող արարք է, որն էական վնաս է պատճառում ինչպես պետության և հասարակության շահերին, այնպես էլ քաղաքացիների իրավունքներին և օրինական շահերին: Հետևաբար, խուլիգանության դեմ պայքարը եղել ու մնում է իրավապահ մարմինների առաջնահերթ խնդիրներից մեկը, որի լուծման արդյունավետությունը պայմանավորված է մի շարք գործոններով, այդ թվում՝ քրեական օրենսդրության կատարելագործմամբ և դրա կիրառման միատեսակ պրակտիկայի ձևավորմամբ:

Խուլիզանությունը դիտավորությամբ հասարակական կարգը կոպիտ կերպով խախտելն է, որն արտահայտվել է հասարակության նկատմամբ բացահայտ անհարգալից վերաբերմունքով¹: Խուլիզանության հանցակազմի նման սահմանումը, միաժամանակ, և հանդիսանում է տվյալ հանցակազմի հասարակ տեսակը և սահմանված է ՀՀ քրեական օրենսգրքի 258-րդ հոդվածի 1-ին մասով: Ընդհանրապես, թեկուզ և նեղ իմաստով, հասարակական կարգը չի կարելի նույնացվել հասարակական վայրի հետ, այն ընդունելի չէ, թե տեսական, թե գործնական առումով: Խուլիզանության համար քրեական պատասխանատվության պարտադիր պայմանը հասարակական կարգն է, ոչ թե հասարակական վայրը²: Խուլիզանությունը դասվում է հասարակական կարգի և բարոյականության դեմ ուղղված հանցագործությունների թվին, և այն մեծ վտանգավորություն է ներկայացնում: Իրավակիրառ մարմինների կողմից, գործնականում, հասարակական կարգը երբեմն շփոթվում է հասարակական վայրում կարգ ու կանոնի հետ, որը հանգեցնում է այն սխալ հետևության, որ խուլիզանությունը կարող է կատարվել միայն հասարակական վայրում՝ հրապարակում, փողոցում, ստադիոնում, տրանսպորտում, կինոթատրոնում և այլ մարդաշատ տեղերում, և պարտադիր՝ մարդկանց ներկայությամբ: Սակայն, հասարակական կարգը կարող է խախտվել թե՛ հասարակական վայրում, թե՛ նրանից դուրս՝ ոչ հասարակական վայրում, թե՛ մարդկանց ներկայացմամբ, թե՛ նրանց բացակայության դեպքում:

Հետազոտության նպատակը և խնդիրները: Սույն հետազոտության նպատակներն են՝

• Հստակեցնել խուլիզանություն հանցագործությունը և դրա տեսակները

¹ՀՀ քրեական օրենսգրքի, <<Խուլիզանություն>>, հոդ. 258-րդ, Երևան, 2018 թվական, էջ 147-148

²Տե՛ս Ա. Թամազյան, <<Խուլիզանության քրեաիրավական բնութագիրը, որակման հիմնախնդիրները և սահմանազատումը>>

Այս նպատակներին հետամուտ լինելով, ներկայացնել հետևյալ խնդիրները՝

• Ուսումնասիրել խուլիզանության զարգացման պատմությունը, քրեաիրավական բնութագիրը և ծանրացնող հանգամանքները

Հետազոտման օբյեկտը և առարկան: Հետազոտության օբյեկտը խուլիզանությունը որպես հասարակական կարգի, հասարակության դեմ ուղղված հանցագործություն, դրա քրեաիրավական կարգավորումները:

Հետազոտության առարկա են հանդիսանում խուլիզանության հանցագործության էությունը, դրա տեսակները և քրեաիրավական բնութագիրը:

Խուլիզանությունը համարվում է հասարակական կարգի դեմ ուղղված ամենավտանգավոր հանցագործություններից մեկը: <<Խուլիզան>> բառը առաջացել է ինչ-որ հանցագործ ընտանիքի ազգանունից: Այդ ազգանունով ընտանիքը XVIII դարում ապրելիս է եղել Լոնդոնում և նրա ընտանիքի անդամները աչքի են ընկել զայրացուցիչ և տարօրինակ վարքագծով³: 1833թ.-ի Ռուսական կայսրության քրեական օրենսգրքում պարունակվում էին օրենքներ և սահմանվում պատասխանատվություն հարբեցողության, անազնիվության, ինչպես նաև այլ անկարգությունների համար: Այս գործողությունները առաջին հերթին կատարվել են հասարակության առջև, և խախտել են հասարակական կարգը⁴:

Որոշ գիտնականներ նշում են, որ խուլիզան բառը ի հայտ է եկել ռուսերեն <<խուլա>> բառից, որը նշանակում է հայհոյել, դատապարտել: Չնայած այն կարծիքի բացակայությանը, թե ինչպես և որտեղ է առաջացել <<խուլիզանություն>> հասկացությունը, կարող ենք հստակ

³Տե՛ս Ա.Թ. Թովմասյան <<Խուլիզանությունը և դրա պատժելիությունը>>, Երևան., 1968թ., էջ 8

⁴Տե՛ս 1833թ. Ռուսական կայսրության օրենքների ժողովածու, քրեական իրավունքի կանոնագիրք, էջ 141

նշել որ ցանկացած իմաստով այն ունեցել է բացասական հասկացություն: Առաջին պաշտոնական հիշատակումը կապված է Սանկտ-Պետերբուրգի քաղաքապետ Վոլի հրամանով, որը 1892թ.-ին հրամայեց քաղաքի ոստիկաններին քայլեր ձեռնարկել մայրաքաղաքի անկարգություն անողների դեմ, որի տակ թաքնված էին փողոցային բռնավարողների խումբը: Ոստիկանությունը շարժվեց տվյալ հրամանով և վտարեց քաղաքի խուլիգաններին: Այսպես խուլիգան բառը ներխուժեց ոչ միայն քաղաքային, այլ նաև գյուղական բնակչության բառապաշարի մեջ, և այդ ժամանակից խուլիգան սկսեցին անվանել այն մարդկանց ովքեր վիճում էին մարդկանց գյուղական և աշխատանքային կյանքի հետ⁵:

Հայկական ՍՍՀ-ում <<խուլիգան>>, <<խուլիգանություն>> տերմինները առաջին անգամ գործածվեցին 1927թ.-ի քրեական օրենսգրքում: Մինչ այդ եղած օրենսդրական և ենթաօրենսդրական ակտերում այդ տերմինների փոխարեն, որպես կանոն, գործածվում էին <<սրիկա>>, <<սրիկայություն>> անհաջող տերմինները: ՀԽՍՀ քրեական օրենսգրքի 176-րդ հոդվածը խուլիգանությունը որակում էր այսպես. <<Խուլիգանությունը, այսինքն անպատկառ և աննպատակ արարքները, որոնք զուգորդված են քաղաքացիների և հասարակության նկատմամբ բացահայտ անհարգանքով>>: Հայկական ՍՍՀ քրեական օրենսգրքում այն նախատեսված է 222-րդ հոդվածում, ՌՄՖՍՀ-ի քրեական օրենսգրքում՝ 206-րդ հոդվածում:

Նշենք նաև որ 1961 թվականի քրեական օրենսգրքի 222-րդ հոդվածում բացակայում էր չորրորդ մասը, իսկ զենքի և դրա կիրառման մասին խոսվում էր երրորդ մասում: ՀՀ քրեական օրենսգրքի 258-րդ հոդվածը ունի չորրորդ մաս, որում միանշանակ ասված էտույն հոդվա-

⁵Люблинский П. Хулиганство и его социально-бытовые корни // Хулиганство и хулиганы. М., 1929. С. 38 (Цит. по: Козаченко И.Я. Воплощение ленинских идей в советском уголовном законодательстве о необходимости эффективной борьбы с хулиганством: (Сравнительно-исторический анализ)//Межвуз. сб. науч. тр./СвЮИ. Свердловск, 1977. Вып. 54. С. 37).

ծի առաջին կամ երկրորդ, կամ երրորդ մասով նախատեսված արարքը, որը կատարվել է զենքի կամ որպես զենք օգտագործվող առարկաների գործադրմամբ⁶: Սովետական գործող քրեական օրենքների և առաջին հերթին ՍՍՀՄ Գերագույն սովետի նախագահության 1966թ. հուլիսի 26-ի <<Խուլիգանության համար պատասխանատվությունը ուժեղացնելու մասին>> հրամանագրի ձևակերպմամբ խուլիգանություն է համարվում դիտավորությամբ կատարվող ամեն մի արարք, որով կոպիտ կերպով խախտվում է հասարակական կարգը և բացահայտ անհարգալից վերաբերմունք արտահայտում հասարակության նկատմամբ⁷:

Խուլիգանության հիմնական անմիջական օբյեկտը հասարակական կարգն է, իսկ լրացուցիչ օբյեկտ են հանդիսանում անձի անձեռնամխելիությունը, պատիվն ու արժանապատվությունը, առողջությունը, քաղաքացիների ու կազմակերպությունների գույքային շահերը: Խուլիգանության ժամանակ ամենից առաջ հանցագործության օբյեկտ են հանդիսանում պետության մեջ հաստատված հասարակական կարգը: Խուլիգանությունը խախտում է երկրում հաստատված և տիրապետող իրավակակարգը և հասարակական անդորրությունը: Այն խախտում է համակեցության սահմանված կանոնները: Խուլիգանության օբյեկտը հասարակական կարգն է, ինչպես նաև օրենքով պահպանվող քաղաքացիների իրավունքներն ու շահերը⁸: ՌԴ նոր քրեական օրենսգրքի մեկնաբանությունների հեղինակները նշում են, որ հասարակական կարգ են համարում ապահով հասարակական հարաբերությունները, ձեռնարկությունների, կազմակերպությունների անվտանգ աշխատանքը, անձի ֆիզիկական և բարոյական անձեռնամխելիությունը, իսկ հասարակական անվտանգությունը որպես ներքին

⁶ ՀՀ նախկին քրեական օրենսգրքը, հոդված 222-րդ, մաս 3-րդ

⁷Տե՛ս Саркисов Г.С. Предупреждение нарушений общественного порядка. Ереван, 1972. С. 118.

⁸Տե՛ս Փաստաբանների միջազգային միություն(ՀՀ քրեական օրենսգրքի մեկնաբանություններ, Երևան 2004թ.), էջ 534

և արտաքին պաշտպանվածություն⁹: Վ.Ի. Ռադչենկոն, որպես հասարակական կարգ նշում էր հասարակական հարաբերություններ մարդկանց միջև, ապահովելով հասարակական հանգստություն, անձի և սեփականության անձեռնախելիություն¹⁰:

Խուլիգանության հիմնական հանցակազմն ունի մեկ, իսկ որակյալ հանցակազմը՝ երկու օբյեկտ: Մասնավորապես, հասարակական կարգը կոպիտ կերպով խախտելը, որն արտահայտվել է հասարակության նկատմամբ բացահայտ անհարգալից վերաբերմունքով, ենթակա է որակման որպես հասարակ խուլիգանություն, մինչդեռ նույն արարքը, որը գուցորդվում է անձի առողջությանը, գույքային իրավունքներին և այլին վնաս պատճառելով, ենթակա է որակման խուլիգանության որակյալ հանցակազմով:

Նշեմ որ, վճռաբեկ դատարանը արձանագրում է, որ հասարակական կարգը ընկալվում է երկու իմաստով՝ լայն և նեղ¹¹:

Լայն իմաստով հասարակական կարգը հասարակության մեջ առկա սոցիալական կապերի և հարաբերությունների համակցությունն է, որը ձևավորվում է սոցիալական, իրավական և բարոյական նորմերի գործողության արդյունքում, և յուրաքանչյուր հանցագործություն, զանցանք կամ այլ իրավախախտում այս կամ այն չափով հանգեցնում է դրա խախտման:

Խուլիգանության հիմնական հանցակազմի անմիջական օբյեկտն այն հասարակական հարաբերություններն են, որոնք կազմում են նեղ իմաստով հասարակական կարգի բովանդակությունը:

Հասարակական կարգը իրենից ներկայացնում է որոշակի հասարակական հարաբերությունների այնպիսի դրվածք, նախ և առաջ, կենսագործունեության սոցիալական և մշակութային ոլորտներում, որը

⁹Տե՛ս Վ. Ի. Ռադչենկոյի «Комментарий к Уголовному кодексу Российской Федерации (постатейный)» 2-е изд. испр. И доп./Под ред. А.И.Чучаева. М., 2010. С. 7-8

¹⁰Տե՛ս Վ. Ի. Ռադչենկոյի «Научно-практическое пособие по применению УК РФ / Под ред. В. М. Лебедева. М., 2005. С. 739

¹¹Տե՛ս Հայաստանի Հանրապետության վճռաբեկ քրեական դատարանի որոշում գործ թիվ ԱՎԴ/0014/01/11

հիմնվում է մարդկային համակեցության կանոնների պահպանման վրա:

Նեղ իմաստով հասարակական կարգն ընկալվում է որպես հասարակական նշանակության վայրերում, այն է՝

1) տրանսպորտային միջոցների կայանատեղիներում, 2) օդանավակայաններում, 3) շուկաներում, 4) պուրակներում, 5) այգիներում, 6) կինոթատրոններում, 7) ցուցասրահներում, 8) մարզադաշտերում, 9) փողոցներում, 10) հիմնարկ-ձեռնարկություններում, 11) ուսումնական հաստատություններում, 12) հասարակական տրանսպորտում, 13) հասարակական սննդի սպասարկման վայրերում, 14) հասարակական նշանակության այլ վայրերում այնպիսի իրադրության առկայություն, որի պայմաններում ապահովված է քաղաքացիների արժանավայել վարքագիծը, կազմակերպությունների, հիմնարկների և հասարակական նշանակության այլ օբյեկտների բնականոն աշխատանքը, ինչպես նաև այդ վայրերում գտնվող անձի (անձանց) ֆիզիկական և հոգեկան անձեռնմխելիությունը: Օբյեկտիվ կողմից արարքը բնութագրվում է ակտիվ գործողություններով, որոնք դրսևորվում են՝

1. Բացահայտ անհարգալից վերաբերմունքով հասարակության նկատմամբ,

2. Անձի նկատմամբ բռնություն գործադրելով կամ բռնության սպառնալիքով

3. Ուրիշի գույքը ոչնչացնելով կամ վնասելով

ՀՀ Վճռաբեկ դատարանը հարկ է համարում ընդգծել, որ ՀՀ քրեական օրենսգրքի 258-րդ հոդվածի 1-ին մասի վերլուծությունից երևում է նաև, որ կոպիտ խախտումը կատարվում է հասարակության նկատմամբ բացահայտ անհարգալից վերաբերմունք դրսևորելու նպատակով: Այլ խոսքով՝ խուլիգանության հանցակազմի օբյեկտիվ կողմը բնութագրվում է հետևյալ երկու հատկանիշների միաժամանակյա առկայությամբ՝ հասարակական կարգի կոպիտ խախտում և հասարակության նկատմամբ բացահայտ անհարգալից վերաբերմունքի դրսևո-

րում: Վճռաբեկ դատարանը հարկ է համարում ընդգծել, որ հասարակության նկատմամբ բացահայտ անհարգալից վերաբերմունքի դրսևորման եղանակները տարբեր են՝ արարք, խոսք, ժեստ, մարմնաշարժում և այլն: Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ խախտումը որպես կոպիտ գնահատելիս անհրաժեշտ է ելնել հասարակական կարգի վրա այդ խախտման ունեցած ազդեցությունից: Այս կապակցությամբ Վճռաբեկ դատարանը հարկ է համարում ընդգծել, որ հասարակական կարգը կոպիտ կերպով կարող է խախտվել ցանկացած արարքի կատարման պարագայում, մինչդեռ խուլիգանության առկայության մասին է վկայում այնպիսի արարքի կատարումը, որը միտված է հասարակական կարգը կոպիտ կերպով խախտելուն և որպես այդպիսին, հանդիսացել է խուլիգանություն կատարող անձի դիտավորության մեջ ընդգրկված նպատակի իրականացման միջոց: Հիմք ընդունելով սույն որոշումը՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ յուրաքանչյուր դեպքում արարքը խուլիգանություն որակելու համար, ի թիվս սույն որոշման մեջ նշված այլ հանգամանքների, անհրաժեշտ է քննության առնել նաև այն, թե արդյոք այդ արարքի հետևանքով հասարակության անդամներին լուրջ անհանգստություն է պատճառվել: Այս կապակցությամբ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ հասարակության անդամներին լուրջ անհանգստություն պատճառելու հանգամանքի առկայությունը յուրաքանչյուր դեպքում անհրաժեշտ է գնահատել՝ ելնելով նեղ իմաստով հասարակական կարգի նկատմամբ դրա ուղղվածությունից: Այլ խոսքով՝ հասարակության անդամներին լուրջ անհանգստություն պատճառելու հանգամանքն առկա է, եթե հանցավորի արարքի հետևանքով խախտվում է հասարակական նշանակության վայրերում գտնվող անձի (անձանց) ֆիզիկական և հոգեկան անձեռնմխելիությունը, կամ էականորեն խաթարվում է կազմակերպությունների, հիմնարկների և հասարակական նշանակության այլ օբյեկտների բնականոն աշխատանքը:

Խուլիգանությունը կարող է կատարվել միայն ուղղակի դիտավորությամբ: Դա նշանակում է, որ մեղավոր անձը ոչ միայն գիտակցում

է, որ իր գործողություններով խախտում է հասարակական կարգն ու բացահայտ անհարգալից վերաբերմունք դրսևորում հանրության հանդեպ, այլև ցանկանում է կատարել այդ գործողությունները: Սակայն կան գիտնականներ, որոնք գտնում են, որ խուլիզանությունը կարող է կատարվել նաև անուղղակի դիտավորությամբ, Օրինակ ըստ Ն.Ֆ. Կուզնեցովը նշում է, որ խուլիզանությունը լինում է ուղղակի և անուղղակի դիտավորությամբ: Լ.Վ.Սերոբյուկը նշում է, որ խուլիզանությունը կարող է լինել ուղղակի կամ անուղղակի դիտավորությամբ կախված հասարակական վտանգավոր հետևանքներից, եթե սուբյեկտը ցանկանում է ծեծկռտուք¹²: Ինչպես նաև խուլիզանությունը անուղղակի դիտավորությամբ կատարված հանգամանքին անդրադարձել է նաև Ա. Թամազյանը, իր «Խուլիզանության քրեաիրավական բնութագիրը, որակման հիմնախնդիրները և սահմանազատումը» գրքում¹³:

Քանի որ խուլիզանության սուբյեկտիվ կողմի պարտադիր հատկանիշ է բացահայտ անհարգալից վերաբերմունքի դրսևորումը հասարակության նկատմամբ, որը ի դեպ, խուլիզանության իմաստն է: Խուլիզանության համար որպես շարժառիթ կարող են հանդիսանալ վրեժը, խանդը, սեռական կրքերին հագուրդ տալու ձգտումը և այլն: Խուլիզանական արարքը կարող է կատարվել միայն խուլիզանական մղումներից ելնելով: Իսկ արարքը համարվում է խուլիզանական մղումներով կատարված, եթե այն կատարվում է հասարակության և բարոյականության նորմերի նկատմամբ անթաքույց արհամարհանքի հողի վրա, երբ մեղավոր անձի վարքը հանդիսանում է բացահայտ մարտահրավեր՝ ուղղված հասարակական կարգի դեմ նթելադրված է լինում շրջապատին հակադրվելու, վերջինիս հանդեպ արհամարհական վերաբերմունք ցուցաբերելու ցանկությամբ: Հետևաբար, եթե մեղավոր անձի գործողությունները կատարվել են ոչ խուլիզանական

¹²Энциклопедия уголовного права. Т.21. Преступления против общественной безопасности и общественного порядка. Издание профессора Малинина-СПб ГКА, СПб., 2013.

¹³Տե՛ս Ա. Թամազյան, «Խուլիզանության քրեաիրավական բնութագիրը, որակման հիմնախնդիրները և սահմանազատումը»

մղումներով և չեն զուգորդվել հասարակական կարգի կոպիտ խախտմամբ, դրանք չեն կարող որակվել որպես խուլիգանություն¹⁴: Սուբյեկտիվ կողմի բովանդակությունն են կազմում մեղքը, շարժառիթը և նպատակը: Սուբյեկտիվ կողմի պարտադիր հատկանիշ են կազմում կամքը և գիտակցությունը: Խուլիգանը ձգտում է իրեն հակադրել հասարակությանը, ցույց տալ, որ ինքը հաշվի չի առնում հասարակության շահերը: Սակայն չի կարելի խուլիգանությունը, որպես հանցագործություն, նույնացնել խուլիգանական շարժառիթների հետ, ինչը առկա է ինում, օրինակ, խուլիգանական դրդումներով կատարված սպանության ժամանակ: Խուլիգանությունը առաջին հերթին դրսևորվում է այնպիսի գործողություններով, որոնցով կոպիտ կերպով խախտվում է հասարակական կարգը:

Սուբյեկտը 14 տարին լրացած, ֆիզիկական, մեղսունակ անձն է:

Քրեական օրենսգրքի հոդված 258-ի երրորդ մասում նախատեսված են հոդվածի երկրորդ մասով նախատեսված խուլիգանության հանցակազմի ծանրացնող հանգամանքները: Դրանք են՝

- Մի խումբ անձանց կամ կազմակերպված խմբի կողմից կատարելը,
- Չուգորդվել է իշխանության ներկայացուցչին կամ հասարակական կարգի պահպանության պարտականություն իրականացնող մարմնի կամ հասարակական կարգի խախտումը խափանող անձին դիմադրություն ցույց տալով,
- Չուգորդվել է անձի առողջությանը միջին ծանրության վնաս պատճառելով
- Չուգորդվել է բացառիկ զինիզմով¹⁵:

¹⁴Տե՛ս Հայաստանի Հանրապետության վճռաբեկ քրեական դատարանի որոշում գործ թիվ ԱՎԴ/0014/01/11

¹⁵Տե՛ս ՀՀ քրեական իրավունք, հատուկ մաս, 258-րդ հոդվածի 3-րդ մաս, ԵՊՀ հրատարակչություն 2012թ.

Հանցանքը համարվում է կազմակերպված խմբի կողմից կատարված, եթե դա կատարվել է այնպիսի անձանց կայուն խմբի կողմից, ովքեր նախապես միավորվել են մեկ կամ մի քանի հանցանքներ կատարելու համար:

Բացառիկ զինիցմ հասկացության տակ մտնում են խուլիգանական այնպիսի գործողությունները, որոնք վկայում են քաղաքացիների նկատմամբ հանցագործի դրսևորած ծաղրուծանակի, հանցագործի անամոթ վարքի մասին, այլ կերպ ասած՝ դրանք այնպիսի գործողություններն են, որոնք խորապես վիրավում են մարդկանցբարոյական զգացումները և նսեմացնում նրանց մարդկային արժանապատվությունը¹⁶:

Խուլիգանության առանձնապես որակյալ տեսակը սահմանված է ՀՀ քրեական օրենսգրքի 258-րդ հոդվածի 4-րդ մասով, այն է, ՀՀ քրեական օրենսգրքի 258-րդ հոդվածի 2-րդ կամ 3-րդ մասով նախատեսված արարքը, որը կատարվել է զենքի կամ որպես զենք օգտագործվող առարկաների գործադրմամբ (<<Չենքի մասին>> ՀՀ օրենք):

Սույն աշխատանքում ներկայացված տեղեկությունները ընդհանուր մանրամասնում են խուլիգանության հանցակազմի էությունը, նրա քրեաիրավական բնութագիրը, ինչպես նաև խուլիգանության ծանրացնող հանգամանքները:

Ամփոփելով սույն աշխատանքը կարելի է հակիրճ եզրահանգել, որ՝

1. ՀՀ քր. օր.-ի 11-րդ գլխում հասարակական կարգի և բարոյականության դեմ ուղղված հանցագործություններից խուլիգանությունը ամենավտանգավորներից է, և ընդհանրական է համարվում այն, որ օբյեկտիվ կողմը արտահայտվում է հասարակական կարգի կոպիտ խախտմամբ, որը արտահայտվում է հասարակության նկատմամբ բացահայտ անհարգալից վերաբերմունքով:

¹⁶Տե՛ս Ա.Թ. Թովմասյան, <<Խուլիգանությունը և դրա պատժելիությունը>>

2. Սուբյեկտիվ կողմից խուլիգանությունը կատարվում է միայն ուղղակի դիտավորությամբ, երբ հանցավորը գիտակցում է, որ իր արարքները կոպիտ կերպով խախտում են հասարակական կարգը, և որ դրանք բացահայտ անհարգալից վերաբերմունք են դրսևորում հասարակության նկատմամբ, և ցանկանում է կատարել այդ արարքները: Իսկ գույքը ոչնչացնելով կամ վնասելով զուգորդված խուլիգանությունը, կատարվում է ինչպես ուղղակի, այնպես էլ անուղղակի դիտավորությամբ:

3. Իսկ հիմնական անմիջական օբյեկտը դա հասարակական կարգն է, իսկ լրացուցիչ օբյեկտ են հանդիսանում անձի անձեռնամխելիությունը, պատիվն ու առողջությունը, քաղաքացիների ու կազմակերպությունների գույքային շահերը:

Առաջարկում ենք կատարել հետևյալ փոփոխությունները՝

1) Առաջարկում են ավելացնել որպես ծանրացնող հանգամանք, կրոնական շարժառիթներով կատարված խուլիգանություն: Նախ պետք է անդրադարձնալ այն հանգամանքին, որ շարժառիթը հանդիսանում է հանցակազմի սուբյեկտիվ կողմի տարր, որի բացահայտումը օգնում է բացահայտել և հասկանալ ամբողջ հանցագործության սխեման: Այնուհետև պետք է նշենք, պարզելով որ ենթադրյալ հանցագործություն կատարած անձինք ունենալով որոշակի կրոնական հայացքներ, նրանց կողմից տվյալ հանցագործության կատարման դիտավորությունը պարզելը դառնում է ավելի հեշտ: Մասնավորապես վերջին ժամանակներում տարբեր աղաղների լայն տարածումը, և կրոնական կազմակերպությունների միջև հակասությունները ծնում են կրոնական շարժառիթով կատարվող հանցագործություններ:

2) Հաշվի առնելով խուլիգանության առաջին և երկրորդ մասերի ոչ բարձր հանրային վտանգավորությունը, ինչպես նաև մարդասիրության սկզբունքը, ինչպես նաև ՀՀ քաղաքականության ուղվածությունը ՀՀ քրեական պատժատեսակների մեղմացման հետ կապված, առաջարկում ենք խուլիգանության հանցակազմի 1-ին և 2-րդ մասերը

դարձնել վարչական, այսինքն ենթարկել վարչական պատասխանատվության, ապաքրեականացնելով ՀՀ քրեական օրենսգրքից, իսկ ինչ վերաբերում է ՀՀ քրեական օրենսգրքի 258-րդ հոդվածի 3-րդ և 4-րդ մասերին, դրանք իրենց բովանդակությամբ պետք է դառնան տվյալ հանցակազմի հիմնական մաս: Միևնույն ժամանակ ցանկանում եմ անդրադառնալ նաև ՀՀ քրեական օրենսգրքի նոր նախագծին, որտեղ որ բացակայում է տվյալ հանցակազմը: Վերոնշյալ առաջարկներից ելնելով գտնում ենք, որ ոչ թե ամբողջությամբ պետք է հանվի տվյալ հանցակազմը, այլ կատարվի վերոգրյալ, առաջարկված փոփոխությունները: Տվյալ հանցակազմի տարածվածությունը և վտանգավորությունը, որոնց մասին են վկայում մի շարք քրեական գործեր, հիմնավորումն է այն բանի, որ ոչ մի իրավական հիմնավորում չունի տվյալ հանցակազմի ապաքրեականացումը նոր քրեական օրենսգրքի նախագծով:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. ՀՀ քրեական օրենսգիրք, ընդունված 2003թ.-ի ապրիլի 18-ին:
2. Հայկական ԽՍՀ քրեական օրենսգիրք, Երևան, ընդունված է 1961թ-ին:
3. 1833թ. Ռուսական կայսրության օրենքների ժողովածու, քրեական իրավունքի կանոնագիրք, Իսայևա Թ.Ս., Վլադիվոստոկ:
4. *Саркисов Г.С.* Предупреждение нарушений общественного порядка. Ер., 1972. С. 118.
5. *Թամազյան Ա.* <<Խուլիգանության քրեաիրավական բնութագիրը, որակման հիմնախնդիրները և սահմանազատումը>>:
6. *Թովմասյան Ա.Թ.* <<Խուլիգանությունը և դրա պատժելիությունը>>. Երևան., 1968թվական:
7. Հայաստանի Հանրապետության Վճռաբեկ քրեական դատարանի որոշում գործ թիվ ԱՎԴ/0014/01/11
8. Զենքի մասին ՀՀ օրենք, ընդունված է ԱԺ կողմից 1998 թվականի հուլիսի 3-ին

9. Փաստաբանների միջազգային միություն (ՀՀ քրեական օրենսգրքի մեկնաբանություններ, Երևան 2004թ.), էջ 534
10. Комментарий к Уголовному кодексу Российской Федерации (постатейный) 2-е изд. испр. И доп. / Под ред. А.И. Чучаева. М., 2010. СС. 7–8.
11. Научно-практическое пособие по применению УК РФ / Под ред. В.М. Лебедева. М., 2005. С. 739
12. *Люблинский П.* Хулиганство и его социально-бытовые корни // Хулиганство и хулиганы. М., 1929. С. 38 (Цит. по: Козаченко И.Я. Воплощение ленинских идей в советском уголовном законодательстве о необходимости эффективной борьбы с хулиганством: (Сравнительно-исторический анализ) // Межвуз. сб. науч. тр./СвЮ И. Свердловск, 1977. Вып. 54. С. 37).
13. Энциклопедия уголовного права. Т. 21. Преступления против общественной безопасности и общественного порядка. Издание профессора Малинина-СПб ГКА, СПб., 2013.

ՄՈՐ ԿՈՂՄԻՑ ՆՈՐԱԾԻՆ ԵՐԵԽԱՅԻ ՍՊԱՆՈՒԹՅԱՆ ՈՐԱԿՄԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Մ.Ա.Սահակյան, Հ.Գ.Անդրեասյան

Հայ-Ռուսական Համալսարան

ԱՄՓՈՓՈՒՄ

Գիտական հետազոտության մեջ ուսումնասիրվել է մոր կողմից նորածին երեխայի սպանության որակման առանձնահատկությունները, մեկնաբանվել է հանցակազմի օբյեկտը, օբյեկտիվ կողմը, սուբյեկտը, սուբյեկտիվ կողմը: Հետազոտության մեջ կատարվել են նաև համեմատություններ Ռուսաստանի Դաշնության քրեական օրենսգրքի համապատասխանի հոդվածի դիսպոզիցիայի հետ :

Հիմնաբառեր՝ մանկասպանություն, հոգեճնշող վիճակ, հոգեկան խանգարում, ծննդաբերություն, նորածին :

Նյութը և մեթոդները

Հետազոտության արդիականությունը պայմանավորված է այն հանգամանքով, որ արդի ժամանակաշրջանում Հայաստանի Հանրապետությունում ընթանում են լայնածավալ դատախրավական բարեփոխումներ, կապված կյանքի անվտանգությունն ապահովող հասարակական հարաբերությունների հետ, որոնց հիմքում ընկած է մարդու կյանքի իրավունքը:

Հետազոտության ընթացքում կիրառվել են պատմահամեմատական, դիալեկտիկայի և վերլուծության մեթոդները:

Մոր կողմից նորածին երեխայի սպանությունը տեղ է գտել ՀՀ քրեական օրենսգրքի 106-րդ հոդվածում:

Հայաստանում այն միջտ եղել է դատապարտելի, առանձին ժամանակներում այդ արարքը կատարողները ենթարկվել են մահապատժի, իսկ ներկայիս գործող քրեական օրենսգրքի 106-րդ հոդվածի համաձայն, նորածին երեխայի սպանությունն է համարվում մոր կողմից ծննդաբերության ժամանակ կամ դրանից անմիջապես հետո, ինչպես նաև հոգեճնշող վիճակում կամ մեղսունակությունը չբացատրող հոգեկան խանգարման վիճակում նորածին երեխայի սպանությունը:

Հայ հին ու միջնադարյան քրեական իրավունքում մանկասպանությունը համարվել է հանցավոր արարք, որի համար ևս նախատեսված է եղել քրեական պատիժ՝ մահապատժի տեսքով:

Միջին դարերից մինչև 18-րդ դարի վերջերը կանոնական օրենսգրքերում մանկասպանությունը դասվում էր առավել ծանր հանցագործությունների շարքին:

Մանկասպանության համար մահապատժը վերացվեց միայն 1778թ. Շվեյցարիայում:

ՀՀ քրեական օրենսգրքի 106 հոդվածը պատասխանատվություն է նախատեսում մոր կողմից նորածին երեխայի սպանության համար: Եվ այստեղ, նպատակարմար է նշել, որ չնայած «մանկասպանության» և «մոր կողմից նորածին երեխայի սպանություն» հասկացությունները հաճախ նույնացվում են, սակայն բովանդակային առումով դրանք տարբեր են: Մանկասպանությունն ավելի լայն հասկացություն է և, միայն նեղ իմաստով է, որ մանկասպանություն ասելով նկատի է առնվում մոր կողմից նորածին երեխայի սպանությունը: Իսկ դա նշանակում է, որ սույն հոդվածով արարքը կարող է որակվել բացառապես

մոր կողմից նորածին երեխայի սպանություն, մանկասպանության մյուս դեպքերը սույն հոդվածով որակման ենթակա չեն¹:

Քննարկվող հանցագործության սուբյեկտը հատուկ է: Ինչպես սպանության մյուս դեպքերում, այստեղ էլ հանցագործության սուբյեկտը 14 տարին լրացած ֆիզիկական մեղսունակ անձն է: Այն անձինք, որոնք տվյալ հանցագործության մեջ հանդես են գալիս, որպես համակատարողներ, պատասխանատվության են ենթարկվում քրեական օրենսգրքի 104-րդ հոդվածի համապատասխան կետով:

Իրավական տեսանկյունից թվում է, թե սուբյեկտի հարցի լուծումը դյուրին է, Բայց գիտության զարգացմանը զուգահեռ, տվյալ հանցագործության սուբյեկտի հետ կապված կարող են որոշ խնդիրներ առաջանալ: Օրինակ՝ կնոջ արգանդի մեջ կարող է լինել ոչ իր երեխան: Խոսքը բնականաբար փոխնակ մայրերի մասին է ²:

Քննարկվող հարցի վերաբերյալ հետազոտողների մեծամասնության կարծիքով, համաձայն ՌԴ քրեական օրենսգրքի 22-րդ հոդվածի, գործ ունենք հոգեկան խանգարման հետ: Բայց ըստ ՀՀ քր. օր-ի 106-րդ հոդվածի հոգեկան խանգարումը հանդիսանում է վերոնշյալ հոդվածի բաղկացուցիչ մաս, այդ իսկ պատճառով այս հարցի հետ կապված դատարանը միաժամանակ իրավունք ունի պատժի հետ միասին նշանակել նաև բժշկական բնույթի հարկադրանքի միջոցներ³:

Մոր կողմից նորածին երեխայի սպանության կատարմանը մասնակցություն ունեցած անձինք պատասխանատվություն են կրում հանցակցության համար և պետք է կարողանալ հստակ տարբերակել

¹ Տե՛ս Աբրահամյան Վ., Մոր կողմից նորածին երեխայի սպանություն, Երևան 2011, էջ 20:

² Տե՛ս Энциклопедия уголовного права, Т. 13, Преступления против жизни и здоровья, Издание профессора Малинина, Санкт-Петербург 2013, стр. 651.

³ Տե՛ս ЭНЦИКЛОПЕДИЯ УГОЛОВНОГО ПРАВА Т. 13 Преступления против жизни и здоровья Издание профессора Малинина Санкт-Петербург 2013 С. 537

այդ արարքի օբյեկտիվ և սուբյեկտիվ կողմերի առանձնահատկությունները, արտաքինից ինչ-որ չափով նմանվող մեկ այլ հանցավոր արարքի՝ ՀՀ քրեական օրենսգրքի հոդված 122-ում նախատեսված հանցագործությունից:

Այսպիսով, հանցագործությունը ինքնուրույն որակելու համար անհրաժեշտ է հասկանալ, որ կինը ծննդաբերության ժամանակ կարող է հայտնվել ծանր հոգեբանական, ֆիզիկական վիճակում, միայն դա կարող է համարվել մեղմացնող հանգամանքներում կամ արտոնյալ պայմաններում կատարված հանցագործություն, քանի որ երեխայի կյանքի դեմ ուղղված ոչ բոլոր ոտնձգությունները կարող են համարվել մեղմացնող հանգամանքներում կատարված արարք⁴:

Տվյալ հանցագործության սուբյեկտիվ կողմը բնութագրվում է մեղքի դիտավորյալ ձևով, որը կարող է լինել ինչպես ուղղակի, անպես էլ անուղղակի: Այսինքն երեխայի սպանությունը պետք է լինի սուբյեկտի խանգարումների կամ հոգեճնշող վիճակի արդյունք:

Ի դեպ, երեխայի մահը ցանկանալը կամ գիտակցաբար թույլ տալը պետք է լինի հիշատակված խանգարումների, հոգեճնշող վիճակի ազդեցության արդյունք: Հակառակ դեպքում, եթե նորածին երեխայի սպանությունը կատարվում է նախապես ծրագրավորված դիտավորությամբ, ընտանիքի անդամների փոխադարձ համաձայնությամբ կամ այլ իրավիճակում, որը հիմք չի տալիս ենթադրելու, որ այն տեղի է ունեցել կնոջ առանձնահատուկ հոգեվիճակի ազդեցության հետևանքով, արարքը կապված գործի կոնկրետ հանգամանքներից, պետք է որակվի ՀՀ քր. օր.-ի հոդված 104-ի առաջին կամ երկրորդ մասով:

Հանցագործության անմիջական օբյեկտը նորածին երեխայի կյանքն է:

⁴ Ст' u Бородин С .В., Ответственность за убийство квалификация и наказание по российскому праву, С. 46-47.

Քննարկվող հանցակազմի հաջորդ տարրը օբյեկտիվ կողմն է, որը դրսևորվում է մոր կողմից նորածին երեխային սպանելու մեջ: Այն կարող է իրականացվել ինչպես ակտիվ գործողություններով (օրինակ, երեխային խեղդելը, մահացու հարված հասցնելը), այնպես էլ անգործությամբ (օրինակ, կերակրելուց հրաժարվելը, անօգնական թողնելը և այլն) : Դա նշանակում է, որ այստեղ գործ ունենք ակտիվ և պասիվ մանկասպանության հետ: Ակտիվ մանկասպանության ժամանակ մայրը իրականացնում է այս կամ այն ակտիվ գործողությունը, որի արդյունքում վրա է հասնում նորածնի մահը: Պասիվ մանկասպանության դեպքում, մայրը նորածնին դիտավորյալ թողնում է առանց օգնության ու խնամքի: Նա ոչինչ չի ձեռնարկում նորածնին սպանելու համար, բայց և չի խոչնդոտում վերջինիս մահվան վրա հասնելուն:⁵

Այս հանցակազմի օբյեկտիվ կողմի պարտադիր հատկանիշ է հանրորեն վտանգավոր հետևանքների առաջանալը: Օբյեկտիվ կողմից ֆակուլտատիվ հատկանիշների բացահայտումը ևս կարևոր նշանակություն ունի մոր կողմից նորածին երեխայի սպանության հանցակազմը վերլուծելիս:

Համաձայն ՀՀ քր. օր.-ի 37-րդ հոդվածի հանցակցություն է համարվում, երկու կամ ավելի անձանց դիտավորյալ համատեղ մասնակցությունը, դիտավորյալ հանցագործությանը: Օրենսգրքի 38-հոդվածով նախատեսված են հանցակիցների տեսակները, կատարողի հետ մեկտեղ հանցակիցներ են համարվում կազմակերպիչը, դրդիչը և օժանդակողը: ՀՀ քր. օր.-ի 106 հոդվածով նախատեսված սպանությունը հանցակցությամբ կարող է կատարվել հետևյալ ձևերով՝

1. Մոր կողմից՝ այլ անձանց հետ համակատարողությամբ
2. Մայրը՝ որպես կատարող, մյուսները հանցակիցներ

⁵ Տե՛ս Т.Б. Долголенко Преступления против жизни и здоровья, Красноярск 2013, с.52

3. Մայրը՝ հանցակից, մեկ ուրիշը կատարող

Այսինքն մոր կողմից նորածին երեխայի սպանության հանցակազմը բացառապես տարածվում է երեխայի մոր վրա, մյուս հանցակիցները քրեական պատասխանատվության պետք է ենթարկվեն դիտավորյալ սպանության համար:

Առավել հաճախ, այս հատկանիշները ֆակուլտատիվից դառնում են պատառիչ, եթե մատնանշված են օրենքում: Այս դեպքում վերջիններս սովորաբար ձևակերպվում են որպես հանցակազմը որակյալ դարձնող հանգամանքներ: Ֆակուլտատիվ հատկանիշներից ժամանակը դառնում է հանցակազմի պարտադիր հատկանիշ և դրսևորվում է այնքանով, որքանով մոր կողմից նորածնի երեխայի սպանություն հանցակազմով արարքը որակելու համար ընդունված է նորածնության քսանութօրյա ժամկետը, որի անցման դեպքում արարքը ՀՀ քր. օր.-ի 106 հոդվածով որակման ենթակա չէ: Բացի այդ, քննարկվող հոդվածի դիսպոզիցիայում նշված է <<ծննդաբերության ժամանակ, կամ դրանից անմիջապես հետո>> ժամանակահատվածը, ինչը փաստում է այն մասին, որ ժամանակը ուղղակիորեն կապված է սույն հանցակազմի հետ և այս պարագայում հանդես է գալիս որպես օբյեկտիվ կողմի պարտադիր հատկանիշ:

Հանցակազմի օբյեկտիվ կողմի ֆակուլտատիվ հատկանիշներից է նաև հանցագործության կատարման վայրը: Ռուս հեղինակների կողմից կատարված հետազոտությունները ցույց են տալիս, որ դրանք մեծամասամբ կատարվում են գյուղական վայրերում:

Կցանկանանք անդրադառնալ փոխնակ մայրերին, որոնք դոնորական սաղմը կրում են իրենց արգանդում, և որից ծնված երեխան չի կրում նրա գենոտիպը: Կան երկրներ, որտեղ այս ինստիտուտը անթույրատելի է համարվում՝ օրինակ Ավստրիայում, Գերմանիայում, Նորվեգիայում և այլն:

Ընդանրացնելով կարող ենք ասել, որ բոլոր դեպքերում, որոնց մասին մենք նշվեցինք, ենթակա են որակման ՀՀ քր. օր-ի 106-րդ հոդվածով: Արարքի որակման վրա չեն կարող ազդել շարժառիթներն ու նպատակները:

ՀՀ քր. օր-ի 106-րդ հոդվածը սահմանում է մոր կողմից նորածին երեխայի սպանության երեք տեսակ.

1.Մոր կողմից ծննդաբերության ժամանակ կամ դրանից անմիջապես հետո նորածին երեխայի սպանությունը.

Խոսքը ոչ միայն այն տեսակի մասին է, երբ երեխան արդեն իսկ ծնվել է, այլ երբ երեխան մորից վերջնականապես չի անջատվել՝ ծննդաբերության փուլում գտնվող երեխան:

Մոր կողմից ծննդաբերության ժամանակ կամ դրանից անմիջապես հետո նորածին երեխայի սպանությունը համարվում է արտոնյալ հիմք, ընդունելով այն փաստը, որ ծննդաբերության ժամանակ կինը գտնվում է հատուկ հոգեֆիզիկական վիճակում, կապված ծննդաբերական պրոցեսի դժվարություններով, որտեղ նա կարող է զգալ հոգեկան և ֆիզիկական տառապանքներ, և դադարել իր իսկ գործողությունները ղեկավարելու ունակությունից:

Մոր կողմից ծննդաբերության ժամանակ կամ դրանից անմիջապես հետո նորածին երեխայի սպանությունը նշանակում է, որ այն կատարվում է կենդանածնության փաստն արձանագրելուց հետո, հարաբերականորեն կարճ ժամանակահատվածում: Այստեղ, հետևաբար, պետք է օգտագործվի նորածնության ընթացքի որոշման դատաբժշկական չափանիշը: Դատական բժշկության մեջ, երեխան համարվում է նորածին՝ կենդանի ծնվելուց հետո մեկ օրվա ընթացքում:

Այսպիսով, տվյալ դեպքում ծննդկան կնոջ որոշակի հոգեֆիզիոլոգիական վիճակը կարող է պատասխանատվությունը մեղմացնող հանգամանք համարվել, եթե նորածնի սպանությունը տեղի է ունեցել

անմիջականորեն ծննդաբերության ժամանակ կամ դրանից անմիջապես հետո մեկ օրվա ընթացքում:

Այսպիսով՝ կարելի է ենթադրել, որ օրենսդիրը նման արարքը դասել է մեղմացնող հանգամանքներում կատարված սպանությունների շարքին, հիմքը ընդունելով կնոջ հոգեֆիզիկական առումով <<անառողջ>>, <<հիվանդագին>> վիճակը:

2. Սոր կողմից նորածին երեխայի սպանությունը հոգեճնշող վիճակում:

Հոգեճնշող վիճակ հասկացությունը չունի հստակ մեկնաբանություն, տարբեր հեղինակներ այն յուրովի և տարբեր են մեկնաբանում, բայց ամփոփելով կարծիքները կարող ենք հանգել հետևության, որ հոգեճնշող վիճակ կարող է ծագել մինչ ծննդաբերությունը, ծննդաբերության ժամանակ կամ դրանից անմիջապես հետո: Այստեղ ներկայացվում է կնոջ բարոյահոգեբանական վիճակը, որը հաճախ կարող է բերել անցանկալի հետևանքներ:

Նորածին երեխայի մոր մոտ հոգեճնշող վիճակ կարող է ծագել տարբեր պատճառներով: Օրինակներ, հոր կողմից երեխայից հրաժարվելը, բարեկամների կողմից ծաղրանքի ենթարկվելը, հոր կողմից նյութական օգնություն ցույց չտալը, անբարենպաստ կենցաղային պայմանները, երեխայի հոր մահվան մասին լուրն իմանալը, ամուսնական անհավատարմությունը, ինչպես նաև երեխան ուրիշ հորից լինելու մասին ակնարկները և այլն:

Նման պայմաններում գտնվող կանայք շատ հաճախ պարսավանքից խուսափելու միակ ելքը գտնում են նորածնին սպանելու մեջ: Որպես կանոն սպանությունից հետո մայրը փորձում է արագ թաքցնել երեխայի դին: Սա խոսում է այն մասին, որ նա արդեն իսկ կորցել է իր գործողությունները ադեկվատ գնահատելու կարողությունը, առաջացել է նրա մոտ հիստերոտիպ երևույթներ, ինչը խոսում է կնոջ հոգեկան կարճաժամկետ խանգարման մասին:

Հանցագործության տվյալ տեսակը կնոջ մոտ առաջացնում է էմոցիոնալ լարվածություն և նրա մոտ շատ հաճախ թուլանում է իրավիճակը աղեկվատ գնահատելու, ստեղծված դրությունում ճիշտ կողմնորոշվելու և խելամիտ վարք դսևորելու կարողությունը: Սակայն, կարծում ենք, որ արարքը հոգեճնշող վիճակում կատարված որակելու համար անհրաժեշտ է պարզել, որ իսկապես կինը գտնվել է նման վիճակում և անմիջական կապ գոյություն ունի հոգեճնշող վիճակի, հղիության, ծննդաբերության, երեխայի և մոր ճակատագրի միջև: Կարևոր է հաստատել, որ հենց նման հոգեճնշող վիճակն է հիմք հանդիսացել նորածնի սպանության համար, այլ ոչ թե որևէ մեկ այլ հանգամանքի:

Բայց կարող են լինել իրավիճակներ, երբ նորածին երեխայի սպանությունն տվյալ դեպքում կատարվի աֆեկտի վիճակում, որի առաջացման պատճառները կարող են տարբեր լինել՝ կապված արտաքին մի շարք գործոններից, երրորդ անձանց գործողությունների և այլնի հետ: Եվ մի շարք գործոնների անդունքում տեղի է ունենում բացասական հույզերի կուտակում, որն էլ նպաստում է կնոջ գրգռված վարքագծի դրսևորմանն ու հանգեցնում նորածնի սպանությանը:

3. Մոր կողմից նորածին երեխայի սպանությունը մեղսունակությունը չբացառող հոգեկան խանգարման վիճակում.

Կարծում ենք այստեղ խոսք է գնում սահմանափակ մեղսունակության մասին, որը կարող է արտահայտվել փսիխոզների ձևով:

ՀՀ Քրեական օրենսգրքի 26-րդ հոդվածի համաձայն, մեղսունակ անձը, ով հանցանքը կատարելիս հոգեկան խանգարման հետևանքով չէր կարող ամբողջությամբ գիտակցել իր գործողության (անգործության) փաստացի բնույթն ու հասարակական վտանգավորությունը կամ ղեկավարել դա, ենթակա է քրեական պատասխանատվության: Սահմանափակ մեղսունակությունը, որպես մեղմացնող հան-

գամանք, հաշվի է առնվում պատիժ նշանակելիս և կարող է հիմք դառնալ պատժի հետ միաժամանակ բժշկական բնույթի հարկադրանքի միջոց նշանակելու համար:

Օրենսդիրը նշված հոդվածով սահմանափակ մեղսունակությունը հիվանդություն չի համարում այն դիտելով մեղսունակության բաղկացուցիչ մաս: Օրենսդիրը, որպես մեղմացնող հանգամանք դիտել է իրավաբանական հասկացությունը (սահմանափակ մեղսունակությունը), այլ ոչ թե հոգեկան անոմալիաները, այսինքն, այն փաստացի հանգամանքները, որոնք հանդես են գալիս որպես սահմանափակ մեղսունակություն, քանի որ, ոչ բոլոր հոգեկան անոմալիաներն են, որոնք դիտվում են, որպես պատասխանատվությունը մեղմացնող հանգամանք: Այսինքն, միայն սույն հոդվածում է խոսվում սահմանափակ մեղսունակության մասին, ուրիշ ոչ մի հոդվածում այդ մասին նշում չկա⁶:

Սահմանափակ մեղսունակության բժշկական չափանիշը կայանում է նրանում, որ հանցագործության կատարման ժամանակ անձը տառապում է որոշակի հոգեկան խանգարմամբ, իսկ իրավաբանական չափանիշը այն է, որ անձը չի կարող ամբողջությամբ գիտակցել իր արարքի փաստացի բնույթն ու հասարակական վտանգավորությունը (ինտելեկտուալ չափանիշ) կամ ամողջությամբ ղեկավարել դրանք (կամային չափանիշ): Օրենսդիրը որպես մեղմացնող հանգամանք դիտել է իրավաբանական հասկացությունը (սահմանափակ մեղսունակությունը), այլ ոչ թե հոգեկան անոմալիաները, այսինքն, այն փաստացի հանգամանքները որոնք հանդես են գալիս որպես սահմանափակ մեղսունակություն, քանի որ, ոչ բոլոր հոգեկան անոմալիաներն են, որոնք դիտվում են որպես պատասխանատվությունը մեղմացնող հանգամանք: Դրանց թվին կարող են դասվել էպիլեպսիան, պսիխոպատիան, օլիգոֆրենիան (մտավոր հետամնացությունը) և այլն:

⁶ Տե՛ս Արբահամյան Կ., նշված աշխատություն, էջ 77:

Հարկ ենք համարում նշել նաև, որ մոր կողմից երկու և ավելի նորածին երեխաների (երկվորյակների, եովորյակների և այլն) սպանությունը ևս պետք է որակվի քր. օր-ի 106-րդ հոդվածով:

Ուսումնասիրելով գործող քրեական օրենսգիրքը և նոր քր. օր-ի նախագիծը, կարող ենք ասել, որ մոր կողմից նորածին երեխայի սպանությունը վերանվանվել է ծննդկանի կողմից երեխայի սպանություն, ինչը ևս ընդունելի է, քանի որ երեխային կարող է ծննդաբերել ոչ մայրը, խոսքը վերաբերում է փոխնակ մորը:

Առաջարկություն 1

Առաջարկում ենք, որ մեր Հանրապետությունում օրենսդիրը կատարի փոփոխություն և նման հանցագործության դեպքում քրեական պատասխանատվություն նախատեսվի 14-ի փոխարեն 16 տարեկանից:

Կարծում ենք 14 տարին լրացած անձի մոտ դեռևս չի ձևավորվել արժեքային համակարգ, նրա մոտ կարող է առավել հեշտ ձևավորվել բացասական հուզական դիրքորոշում և կարող է հեշտությամբ առաջանալ՝ տազնապ, դեպրեսիա, աֆեկտիվություն և ռիզիդություն: Կարծում ենք 14 տարին լրացած անձը դեռ չի հասել մտավոր այնպիսի զարգացման աստիճանին, որ կարողանա գիտակցել իր կատարած հանցագործության ամբողջ էությունը:

Նշենք, որ Ռուսաստանի Դաշնության քրեական օրենսգիրքը վերլուծվող հանցագործության սուբյեկտ համարում է 16 տարին լրացած անձին:

Կարծում ենք, որ նպատակահարմար է ու արդարացված, որ մոր կողմից նորածին սպանելու հանցակազմի սուբյեկտ համարել այն անձին, որի 16 տարին լրացել է հանցանքը կատարելու պահին:

ՊԱՏԻԺԸ ՊԱՅՄԱՆԱԿԱՆՈՐԵՆ ՉԿԻՐԱՌԵԼՈՒ
ՔՐԵԱԻՐԱՎԱԿԱՆ ԷՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԿԻՐԱՌՄԱՆ
ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏՈՒԹՅՈՒՆԸ

Ս.Ս. Սուքիասյան

*Հայ-ռուսական համալսարան
Քրեական իրավունքի և դատավարության ամբիոն*

Sako_sukiasyan@mail.ru

ԱՄՓՈՓՈՒՄ

Գիտական հետազոտության մեջ թեմայի էությունը հասկանալու համար նախ խորը վերլուծության ենք ենթարկել այնպիսի արդիական և գործնական մակարդակով կիրառվող ինստիտուտ, որի էության վերաբերյալ հղումներ են կատարվել հանրաճանաչ գիտնականների աշխատություններին: Վերլուծության է ենթարկվել գիտնականների դիրքորոշումները պատիժը պայմանականորեն չկիրառելու վերաբերյալ և հանգել ենք որոշակի հետևությունների: Մինևույն ժամանակ կատարվել է իրավա-համեմատական հետազոտություն գործող քրեական օրենսգրքի և քրեական օրենսգրքի նախագծի միջև:

Հիմնաբառեր՝ դատապարտյալի ուղղում, անձը բնութագրող հատկանիշներ, պատժի նպատակներ, դատապարտյալի վերասոցիալականացում:

Ներածություն

Պատիժը պայմանականորեն չկիրառելու ինստիտուտի արդիականությունը պայմանավորված է հանցանք կատարած անձի հանդեպ

մարդասիրության դրսևորման, դրանով իսկ պետական հարկադրանքի միջոցները խնայելով, դատապարտյալի գիտակցական համակարգի վրա ներգործելով, որպեսզի դատապարտյալը փոխի իր վերաբերմունքը օրենքների և հասարակական համակեցության կանոնների հանդեպ: Պատիժը պայմանականորեն չկիրառելու էության վերաբերյալ նշվել են հանրաճանաչ գիտնականների դիրքորոշումները: Հատկապես հետաքրքիր էր այն, որ որոշ գիտնականներ այս ինստիտուտը դիտում են որպես պատժի տեսակ, իսկ մյուսները՝ պատժից ազատման կարգ: Չնայած արտահայտված վիճահարույց մոտեցումներին, առավել խելամիտ է պատիժը պայմանականորեն չկիրառելը դիտել որպես պատժից ազատման ձև: Հետազոտության մեջ անդրադարձել ենք վճռաբեկ դատարանի գործով որոշմանը պատիժը պայմանականորեն չկիրառելու ինստիտուտի հիմքերի վերաբերյալ և քրեական օրենսգրքի ու քրեական օրենսգրքի նախագծի միջև տարբերակիչ առանձնահատկություններին:

Նյութը և մեթոդները

Պատիժը պայմանականորեն չկիրառելու ինստիտուտի ճիշտ ընկալումը ունի ոչ միայն տեսական, այլ նաև գործնական նշանակություն: Կարծում ենք, որ պատիժը պայմանականորեն չկիրառելու ճշգրիտ սահմանումը թույլ կտա բացահայտել ինստիտուտի էությունը, սահմանել կիրառման հիմքերը, պայմանը կամ պայմանները, որոնք պետք է պահպանի դատապարտյալը փորձաշրջանի ընթացքում:

ՀՀ քրեական օրենսգրքի 70-րդ հոդվածը սահմանում է, եթե դատարանը կալանքի, ազատագրկման, կարգապահական գումարտակում պահելու ձևով պատիժ նշանակելով, հանգում է այն հետևության, որ անձի ուղղելը հնարավոր է առանց պատիժ կրելու, ապա կարող է որոշում կայացնել այդ պատիժը պայմանականորեն չկիրառելու մա-

սին: ՀՀ դատական պրակտիկայում պատիժը պայմանականորեն չկիրառելու վերաբերյալ դատավճիռների մեծ թիվը վկայում է պատիժ նշանակելու մարդասիրության դրսևորման մասին:

Պատիժը պայմանականորեն չկիրառելու էության վերաբերյալ հանրաճանաչ գիտնականներն արտահայտել են իրենց դիրքորոշումները:

Պրոֆեսոր Դ.Վ. Րիվմանը համարում է, որ պայմանական դատապարտումը քրեական պատժի հատուկ տեսակ է, որին բնորոշ է պատժի բոլոր տարբերակիչ առանձնահատկությունները, որը ընդունակ է կատարել և կատարում է իր առջև դրված խնդիրները պատժել և վերադաստիարակել հանցագործին, ինչպես նաև ետ պահել անձին հանցանք կատարելուց [1]:

Կարծում ենք, որ պայմանական դատապարտումը պատժի հասկացության ներքո խոսելը այդքան էլ ընդունելի չէ, քանզի պայմանական դատապարտումը ի տարբերություն պատժի չի առաջացնում յուրահատուկ իրավական հետևանք՝ դատվածություն:

Պրոֆեսոր Շ.Դ. Շարգորոդսկին համարում էր պայմանական դատապարտումը պատժից ազատման յուրահատուկ կարգ է: Բանը նրանում է, որ դատարանը դատավճիռը չի կայացնում, եթե դատապարտյալը մինչև համապատասխան ժամկետը լրանալը չի կատարում նոր, բայց ոչ ծանր կամ առանձնապես ծանր հանցագործություն [2]:

Կարծում ենք, որ պատիժը պայմանականորեն չկիրառելը համարվում է խրախուսանքի ձև: Դատարանը նշանակելով փորձաշրջան, վստահություն ունի, որ հանցավորը կարող է ուղղվել գիտակցելով իր սխալները:

Պատիժը պայմանականորեն չկիրառելու հետ կապված, ինչպես հանցագործությունների տեսակների, հանցավոր արարքի վտանգավորության աստիճանի ու բնույթի, այնպես էլ անձանց անորոշ շրջա-

նակի հետ կապված քրեական օրենսգիրքը որևէ հատուկ սահմանափակում չի նախատեսում: Դրանով օրենսդիր մարմինը պատիժը պայմանականորեն չկիրառելու հանգամանք է համարում դատարանի համոզվածությունը, որ դատապարտյալի ուղղվելը հնարավոր առանց որոշակի պատժատեսակների իրական կրելու՝ դատապարտյալին հնարավորություն ընձեռելով կյանքի դժվար պայմաններից և հանգամանքներից կախված առաջին անգամ հանցանք կատարած անձանց ուղղվելու համար հնարավորինս մեղմ դատավճիռ կայացնել:

Հարկենշել, որ պատիժը պայմանականորեն չկիրառելուն բնորոշ են հետևյալ հատկանիշները՝

ա) առաջին հերթին պատիժը պայմանականորեն չկիրառելը պարտադիր ընթացակարգ չէ, դա հնարավոր, բայց քրեական պատժի կիրառման դեպքում ոչ պարտադիր փուլերից մեկն է:

բ) երկրորդ դեպքում, պատիժը պայմանականորեն չկիրառելու ընթացակարգը կկատարելագործի պրակտիկ գործունեությունը, որը իր արտացոլումը կատանա պետական հարկադրանքի միջոցները չկիրառելու գործում, կամ էլ կհանգեցնի անհավասարակշռվածության, որի դեպքում կխոսվի անպատժելիության և քրեական պատասխանատվության անխուսափելիության սկզբունքի խախտման մասին:

գ) մյուս դեպքում, պայմանը նշանակում է, որ պատիժը պայմանականորեն չկիրառելու որոշումը պայմանավորված է այն նպատակից, որ հավանական է դատապարտյալի ուղղում, մեղավորի վերացիալականացում և նախազգուշացում հանցանք կատարելու դեպքում վրա հասնող հետևանքների մասին [3, 115-116]:

Տվյալ ինստիտուտը հանդիսանում է պատժի կատարման այլընտրանքային միջոց և ուղղված է նպաստելու հանցանք կատարած անձի ուղղմանը և ինտեգրմանը [4]: Կարծում ենք, որ դատարանը պատիժը պայմանականորեն չկիրառելու ինստիտուտը պետք է կիրառի

գործի բոլոր հանգամանքները հաշվի առնելով: Անձի նկատմամբ պատիժ չնշանակելով, կարող է կարծիք ստեղծվել, որ անձը դրանով խուսափում է պատժից, բայց սոցիալական արդարության վերականգնման տեսանկյունից դատարանը՝ գալով այն եզրակացության, որ անձը կարող է ուղղվել առանց պատիժ կրելու, արդեն իրագործում է սոցիալական արդարության դրույթը:

ՀՀ քրեական օրենսգրքի 70-րդ հոդվածի 5-րդ մասում նշված, որ դատարանը պատիժը պայմանականորեն չկիրառելիս դատապարտյալի վրա կարող է դնել պարտականություններ՝ չփոխել մշտական բնակության վայրը, բուժման կուրս անցել ակոհոլամոլությունից, թմրամոլությունից, վեներական հիվանդությունից կամ թունամոլությունից, նյութական օգնություն ցույց տալ ընտանիքին:

Դատարանը, դատապարտյալի վարքագծի նկատմամբ վերահսկողություն իրականացնող իրավասու մարմնի միջնորդությամբ կամ առանց դրա, դատապարտյալի վրա կարող է դնել նաև նրա ուղղմանը նպաստող այլ պարտականություններ կամ փոխարինել դրանք: Պատիժը պայմանականորեն չկիրառելիս դատարանը սահմանում է փորձաշրջան՝ մեկից հինգ տարի ժամկետով:

Փորձաշրջանը, որը նշանակվում է ստուգելու, արդյոք դատապարտյալի վարքագիծը ուղղվել է, արդյոք նրան կարելի է տեսնել որպես օրինապահ քաղաքացի: Կարծում ենք, եթե անձը փորձաշրջանի ընթացքում չի կատարում իր վրա դրված պարտականությունները, ապա դա դեռ չի նշանակում, որ անհրաժեշտ է վերացնել պատիժը պայմանականորեն չկիրառելու ինստիտուտը, քանի որ չի բացառվում, որ անձը դեռևս ի վիճակի է ուղղվելու:

Նշենք, որ փորձաշրջանի ընթացքում պարտականությունները չկատարելը կամ դրանցից խուսափելը դեռևս չպետք է հիմք հանդիսանա անձի նկատմամբ վերահսկողություն իրականացնող մարմնի միջնորդությամբ փորձաշրջանը վերացնելու վերաբերյալ: Նախ պետք է

պարզել, թե ինչու է անձը խախտել փորձաշրջանի պայմանները և միայն դրանից հետո ընձեռնել հնարավորություն փորձաշրջանի ժամկետը երկարաձգելու համար:

Պատիժը պայմանականորեն չկիրառելիս դատարանը հաշվի է առնում հանցավորի անձը բնութագրող տվյալները, պատասխանատվությունը և պատիժը մեղմացնող և ծանրացնող հանագամանքները:

Այս մասին է խոսվում վճռաբեկ դատարանի նախադեպային որոշումներից մեկում, որում վճռաբեկ դատարանը Գագիկ Պետրոսյանի վերաբերյալ կայացված գործով որոշման մեջ փաստել է, որ պատիժ նշանակելիս և այն կրելու նպատակահարմարության հարցը լուծելիս, ստորադաս դատարանները պետք է հաշվի առնեն ինչպես խախտված հասարակական հարաբերությունների բնույթն ու կարևորությունը, այնպես էլ արարքի հանրային վտանագավորության աստիճանի վրա ազդող այնպիսի հանգամանքներ, ինչպիսիք են անձի հոգեբանական վերաբերմունքն իր կատարած արարքի և դրա հետևանքների նկատմամբ, հանցագործության հանգամանքները, եղանակը, վնաս պատճառելու համար օգտագործված տարատեսակ գործիքները, միջոցները, հանցավորի անձը բնութագրող և պատասխանատվությունը և պատիժը ծանրացնող ու մեղմացնող հանգամանքները:

Ինչպես նաև պետք է հաշվի առնել էական նշանություն ունեցող փաստեր, ինչպիսիք են հանցավորի պատրաստվածությունը, կոնկրետ գործի շրջանակներում օգտագործված առարկաները (հրազեն, դանակ, կացին, մուրճ, մետաղյաձող, քար և այլն), մեղքի ձևը, որոնք միասին վերցրած ավելի են մեղմացնում հանցագործությունը ավարտին հասցնելու կամ ավելի մեծ վնաս պատճառելու հավանականությունը: Կարծում ենք, որ կիրառվող քրեաիրավական ներգործության միջոցների համաչափության տեսանկյունից պետք է գնահատականի արժանանա արարքի և դրա հետևանքների նկատմամբ հանցավորի հոգեբանական վերաբերմունքը:

Հիշատակելով և կարևորելով վճռաբեկ դատարանի դիրքորոշումները, առաջարկում ենք ՀՀ քրեական օրենսգրքի 70-րդ հոդվածի 2-կետը վերաշարադրել հետևյալ կերպ. «Պատիժը պայմանականորեն չկիրառելիս դատարանը պետք է հաշվի առնի հասարակական հարաբերությունների բնույթը և կարևորությունը, անձի հոգեբանական վերաբերմունքը իր կատարած արարքի և դրա հետևանքների նկատմամբ, հանցավորի պատրաստվածությունը, գործիքները, միջոցները, հանցավորի անձը բնութագրող հանգամանքները և պատիժը մեղմացնող և ծանրացնող հանագամանքները»>>:

Անհրաժեշտ է անդրադառնալ պատիժը պայմանականորեն չկիրառելու վերաբերյալ ՀՀ քրեական օրենսգրքի և քրեական օրենսգրքի նախագծի միջև առկա տարբերակիչ առանձնահատկություններին: Նախ, իրավացի ենք համարում քրեական օրենսգրքի նախագծում այս ինստիտուտը ոչ թե պատժի նշանակման, այլ պատժից ազատման տեսակների շարքում ընդգրկելը, քանի որ պատիժը պայմանականորեն չկիրառելը իր հատկանիշներով, այսինքն փորձաշրջանի առկայությամբ, փորձաշրջանի ընթացքում թույլտրված խախտումների նկատմամբ իրավական գնահատականի տեսանկյունից, կիրառման հիմքով, ավելի նման է պատիժը կրելուց պայմանական վաղաժամկետ ազատելու ինստիտուտի հատկանիշներին:

Ի տարբերություն գործող քրեական օրենսգրքի, որը 70-րդ հոդվածի 6-րդ կետը սահմանում է, եթե դատապարտյալը փորձաշրջանի ընթացքում խուսափում է իր վրա դրված պարտականությունները կատարելուց պատիժը պայմանականորեն չկիրառելու վերացման հարցը լուծում է դատարանը, քրեական օրենսգրքի նախագիծը սահմանում է, եթե դատապարտյալը փորձաշրջանի ընթացքում չի կատարում իր առջև դրված պարտականությունները, ապա դատարանը 6 ամիս ժամկետով երկարացնում է փորձաշրջանի տևողությունը:

Համամիտ ենք քրեական օրենսգրքի նախագծի տվյալ դրույթին, քանի որ այդ դրույթը ընդգծում է մարդասիրությունը դատապարտյալի անձի հանդեպ, որպեսզի նա գիտակցի, որ իրեն տրվում է հնարավորություն օրինապահ քաղաքացի դառնալու, հասարակության և օրենքի հանդեպ հարգալից վերաբերմունք դրսևորելու համար:

Մինևույն ժամանակ առաջարկում ենք, եթե դատապարտյալի նկատմամբ վերահսկողություն իրականացնող մարմինը փորձաշրջանի ընթացքում գալիս է այն համոզման, որ նա փորձաշրջանի մնացած մասը կրելու կարիք չունի, ապա կարող է միջնորդություն ներկայացնել դատարան փորձաշրջանի չկրած մասի վերացման հարցը լուծելու համար:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. *Ривман В.Д.* О юридической природе условного осуждения и участии общест-венности в перевоспитании условно осужденных // Вестник ЛГУ. 1965. № 23. С. 144.
2. *Шаргородский, М.Д.* Советское уголовное право. Часть общая: учебник / М.Д. Шаргородский. Ленинград: ЛГУ, 1960. С. 513
3. *Ахметова М.Н., Иванова Ю.В., Лактионов К.С., Комогорцев М.Г., Ахметова В.В., Брезгин В.С., Котляров А.В., Яхина А.С., Шульга О.А.* Юридические науки: проблемы и перспективы: материалы междунар. заоч. науч. конф. (г. Пермь, март 2012 г.). Пермь: Меркурий, 2012. – vi, 116 ст. 5. Маликов Б.С., Условное осуждение – форма условного наказания // Актуальные вопросы юриспруденции, М., 2001, № 15:
4. *Маликов Б.С.* Условное осуждение – форма условного наказания // Актуаль-ные вопросы юриспруденции, М., 2001, № 15:

УСЛОВНОЕ НЕПРИМЕНЕНИЕ УГОЛОВНОЙ ЮРИСДИКЦИИ И ЭФФЕКТИВНОСТЬ ПРИМЕНЕНИЯ

С. Сукиасян¹

¹*Российско-Армянский университет*

²*Институт права и политики*

Sako_sukiasyan@mail.ru

АННОТАЦИЯ

Чтобы понять суть предмета в научном исследовании, мы сначала предприняли глубокий анализ фактического и практически используемого института, чьи ссылки на работы известных ученых были проанализированы, и позиция ученых относительно несоответствующего применения наказания пришла к некоторым выводам. В то же время было проведено сравнительно-правовое исследование между существующим Уголовным кодексом и проектом Уголовного кодекса.

Ключевые слова: исправление осужденного, личностные характеристики, цель наказания, ресоциализация осужденного.

ՊՏՈՒՂԸ ՈՐՊԵՍ ՀԱՆՑԱԳՈՐԾՈՒԹՅԱՆ ԱՌԱՐԿԱ
(Կյանքի և առողջության դեմ ուղղված հանցագործություն)

Ս.Ս. Ավետիսյան, Ս.Ա. Մարգարյան

*Հայ-Ռուսական համալսարան
Քրեական իրավունքի և դատավարության ամբիոն*

crimlaw.rau@mail.ru 098009911@mail.ru

ԱՄՓՈՓՈՒՄ

Հայաստանում պտղի արդեն, իսկ երեխայի իրավունքները պաշտպանվում են ծննդյան պահից, տվյալ հարցի վերաբերյալ բազմաթիվ իրավաբաններ տարբեր, բազմակարծիք մոտեցումներ են ցույց տալիս այս հարցին թե արդյոք պտուղը օժտված չէ իրավունքներով կամ արդյոք չունի պաշտպանության իրավունք: Թեմայումս անրադարձել եմ դրանից ծնող մի քանի խնդիրներին, դրանց կարևորությանը:

Թեմայի արդիականությունը

Հայաստանում պտղի արդեն, իսկ երեխայի իրավունքները պաշտպանվում են ծննդյան պահից, տվյալ հարցի վերաբերյալ բազմաթիվ իրավաբաններ տարբեր, բազմակարծիք մոտեցումներ են ցույց տալիս այս հարցին թե արդյոք պտուղը օժտված չէ իրավունքներով կամ արդյոք չունի պաշտպանության իրավունք : Թեմայի ընտրությունը կայանում է նրանում, որ ըստ ինձ բավականին արդիական է, քանի որ մարդկության առաջուցիմից մինչ այսօր և մինչև մարդկության վերացումը կպահպանի իր արդիականությունը քանի որ աշխարհում

գրանցվում է բնակչության աճ, չնայած նրան որ Հայաստանում ներկայումս ծնելիության մակարդակը փոքր ինչ նվազել է , բայց դրանից թեմայի կարևորության աստիճանը չի նվազել: Թեմայում անրադարձել եմ ըստ ինձ տվյալ օրենսդրական բացից առաջացաց խնդիրներին ինչպիսիք են հղիության արհեստական ընդատումը՝ աբորտը, այն որ կյանքի սկիզբը համարվում է ծննդյան պահը, սեռական խտրականությունը, փոխնակության պայմանագիրը, փոխնակ մորը:

Հետազոտության խնդիրները:

- **Մարդկային կյանքի արժեզրկում**
- **Սեռական խտրականություն**
- **Երեխայի առք ու վաճառք**
- **Օրենքի առջև հավասարության սկզբունքի խախտում**

Հայաստանում կյանքի սկիզբ է համարվում երեխայի ծննդյան պահը՝ մոր արգանդից իսկ բաժանվելուց , երեխան օժտվում է իրավունքներով: Բայց ըստ իմ ուսումնասիրության Համակարծիք եմ բժիշկ, պրոֆեսոր Վ.Ա. Գոլիչենկովի և բժիշկ Դ.Վ Պոպովի այն կարծիքին, որ ժամանակակից կենսաբանության տեսանկյունից մարդկային կյանքը որպես կենսաբանական անհատականություն սկսվում է տղամարդու և կնոջ սեռական բջիջների միաձուլումից և մեկ միջուկի ձևավորման պահից: Եվ այն չի կարող նմանվել մոր օրգանիզմի օրգանիկամ օրգանի մասերի հետ , հետևաբար ակնհայտ է, որ հղիության տևողության ցանկացած ժամկետում աբորտը մարդու կյանքի կանխամտածված դադարեցումն է որպես կենսաբանական անհատ: Հղիության օրվանից (3-4 շաբաթ հղիության) 18-րդ եւ 25-րդ օրերի միջև երեխայի սիրտը սկսում է աշխատել: 20-րդ օրը ձևավորվում է նյարդային համակարգը: 6-րդ շաբաթում, երեխան այսինքն պտուղը կարողանում է շարժել ամբողջ մարմինը, ինչպես ծնված երեխան: Բայց կինը այս շարժումները զգում է ավելի ուշ, 16-20 շաբաթվա ընթացքում:

Հղիության 9-10 շաբաթվա ընթացքում երեխան արդեն արթնանում և քնում է, 11-րդ շաբաթվա ընթացքում նա արձագանքում է հնչյուններին, արտաքին աղմուկը կարող է արթնացնել նրան: Եղունգները հայտնվում են 11-12 շաբաթվա ընթացքում, թարթիչները հայտնվում են 16 շաբաթվա ընթացքում: Հղիության 10-11-րդ շաբաթում գործում են երեխայի, պտղի մարմնի բոլոր համակարգերը¹, այսինքն որևէ տարբերություններ չկան նորածին երեխայի հետ, ապա եթե տրվել է մարդու կյանքի ավարտման պահը այսինքն այն որ, մարդու մահը գրանցվում է ուղեղի բջիջների մահվանից հետո ապա ըստ տրամաբանության մարդու կյանքի սկիզբ պետք է համարվի այդ բջիջներ ստեղծման պահից, քանի որ արդեն իսկ 12 շաբաթական պտուղը՝ երեխան օժտված է այն ամենով ինչ նորածին երեխան, բացի իրավունքներից: Այո քրեական օրենսգրքի 104-ի երկրորդ մասի չորրորդ կետով, ակնհայտ հղի կնոջ սպանություն այնտեղ նշվում է, որ միաժամանակ ոտնձգվում է երկու արժեքի դեմ², բայց եկեք պատկերացնենք մեկ դրություն, երբ 9 ամսեկան հղի կնոջ մահը գրանցվում է հենց հիվանդանոցում, օրիանկ սրտի կանգի պատճառով, և ամեն ինչ արվել է կյանքը փրկելու համար բայց չի հաջողվել, տվյալ կնոջ մահից հետո փաստացի ժամանակահատված գոյություն ունի՝ մի քանի բույսեր պետք է փրկվի պտղի՝ երեխայի, կյանքը բայց, չի արել, փաստացի հնարավորություն ունենալով, ապա տվյալ դեմքում ինչպես կորակվի բժշկի արաքը, բժշկական անփութություն?

Երբ մարդկային կյանքը արհամարվում է, երբ հնարավորություն կար կյանքը փրկելու, և մենք՝ ինքներս ինչպես կընկալենք դա մեր երեխայի կորուստ թե ուղղակի սաղմի՝ պտղի կորուստ որը ներկայումս արժեք չունեցող առոչինչ է, կիսով չափ պաշտպանվող ներկայիս իրավաբանության մեջ: Եվ սաղմը՝ պտուղը, պետք է դիտարկել որպես

¹ <https://www.pravmir.ru/pravo-vracha-na-otkaz-ot-aborta/>

² ՀՀ Քրեական իրավունք, Երևան, ԵՊՀ հրատարակչություն 2012, էջ 56

մարդկային կյանքի սկիզբ այն ժամանակահատվածը ինչպիսիք են նորածնի, դեռահասության, երիտասարդության և ծերության ժամանակահատվածը: Օրինակ մի շարք եվրոպական երկրներում (ինչպիսիք են Վենգրիա, Իռլանդիա և այլն) ամրագրվել են պտղի ձևավորման պահից մարդու կյանքի և արժանապատվության իրավունքի մասին դրույթներ: Հաջորդ երկու խնդիրներն են աբորտն ու սեռական խտրականությունը՝ չծնված երեխայի սեռի հետ կապված ընտրությունը: Հայաստանում ավելի գերապատվություն են տալիս արական սեռի երեխաներին քան աղջիկներին: ՀՀ Առողջապահության նախարարության պաշտոնական վիճակագրությամբ հղիությունների 45%-ը ավարտվում են աբորտով: Իսկ կանանց 37%-ը իրենց կյանքի ընթացքում ունեցել են առնվազն մեկ աբորտ: Այս կանանց շրջանում 65%-ն ունեցել է 2 կամ ավելի աբորտ: Հայաստանում պտղի սեռով պայմանավորված աբորտների թիվն այնպիսի ահասարսուռ ծավալների է հասել, որ ժողովրդագրական լուրջ վտանգ են սպառնում: Մեր երկրում տղա երեխաների տղա երեխաների նախապատվություն տալու հետեվանքով տարեկան 1400-1600 աղջիկ երեխաներ չեն ծնվում, թույլ չեն տալիս ծնվել: Ծնունդների նման սեռային հարաբերակցության հետագա շարունակման դեպքում կանխատեսվում է որ, մինչև 2060 թվականը կնվազի հավելյալ 80 000 մարդով (սա ներկայում Հայաստանի 2 տարվա ծնունդների թիվն է) և, այլ հավասար պայմաններում կկազմի 2,6 միլիոն³: Եվ եթե մեզ մոտ արգելված է էվթանազիան այն հիմքով, որ ոչ իրավունք չունի կյանքից զրկել որևէ մեկին անգամ իր համաձայնությամբ, ապա ինչպես կարելի է թույլատրվել աբորտը:

Փոխնակության ոլորտում հնարավոր պայմանագրերի տեսակներն են՝ առուվաճառքի, ծառայությունների վճարովի մատուցման և

³ <http://womennet.am/%C2%AB%D5%A2%D5%AA%D5%AB%D5%B7%D5%AF%D5%B6%D5%A5%D6%80%D5%A8-%D5%B0%D5%A1%D5%B3%D5%A1%D5%AD-%D5%B4%D5%A5%D5%AE-%D6%81%D5%A1%D5%BE-%D5%A5%D5%B6-%D5%A1%D5%BA%D6%80%D5%B8%D6%82%D5%B4-%D5%A5%D6%80%D5%A2/> □ □ □ □ □ □

տվյալ դեպքում պտուղը հանդիսանում է գույք, առարկա՝ անշունչ առարկա, որն արդեն հակասում է իր փաստացի վիճակին, սույն դեպքում լիովին անտեսվում են ապագա երեխայի շահերը, քանի որ դրանք որևէ կերպ չեն շոշափվում, այո գործարքի առարկան պայմանագրի կնքման պահին կենսունակություն չունեցող երևույթ է, իսկ պայմանագրի կատարման որոշման փուլից սկսած գործարքի առարկան դառնում է կենսունակություն ունեցող երևույթ՝ մարդ, որը կարելի է համարել մարդու առք ու վաճառք որը քրեորեն պատժելի: Պատկերացնենք մեկ այլ դեպք երբ երեխան ծնվում է առողջական խնդիրներով, փոխնակ մայր ծնունդից հետո իրավաբանորեն չունի որը պարտավորվածություն այդ երեխայի նկատմամբ իսկ նպատակադրված ծնողները, իրենց պարտականությունները կատարելուց հետո հրաժարվում են երեխայից քանի որ ունի առողջական խնդիրներ ապա տվյալ դեպքում նրանց կողմից մարդկային կյանքը արժեզրկվում է, որը անթույլատրելի է:

Ինչպես նաև ըստ Ա.Ա. Գևորգյանի բարձրացրած հարցի փոխնակության դեպքում կնոջ, մարմինը կամ մարմնի որոշակի մասը, օրգանը, հյուսվածքը, բջիջը կարող է դառնալ գործարքի առարկա իսկ դա համարվում է մարդու մարմնի մի մասի շահագործում, ինչը համարվում է հանցագործություն: Մեկ այլ հարց, փոխնակության դեպքում եթե մարդու մարմինը կամ մարմնի մի մասը օգտագործվում է հատուցելի կամ անհատույց հիմքով այստեղ հակասություն է առաջանում մարմնավաճառության հետ կապված իսկ ինչու մարմնավաճառը չի կարող ժամանակավորապես վճարովի օգտագործման հանձնել իր մարմնի որոշակի մասը: Այսօր մարմնավաճառությունը համարվում է զանցանք վարչական իրավախախտում: Հարցն անհրաժեշտ է դիտարկել ոչ թե բարոյական, այլ իրավական հարթությունում, քանի որ

երբեմն պայմանագրային հարաբերությունները լիարժեք չեն կարող արտահայտել հանրության շահերը⁴:

Ամփոփելով սույն աշխատանքը կարելի է հակիրճ եզրահանգել, որ՝

ներկայումս այսպիսի բազմաթիվ օրենսդրական բացեր և սխալներ գոյություն ունեն այն բանի համար որ, մարդկային կյանքի սկիզբը համարվում է առոչինչ, ուղակի գույք: Ինչպես նաև կրոնական տեսանկյունից փոխնակությունը համարվում է ծայրահեղ անբարոյական երևույթ որ « Փոխնակ մայրն իրավունք չունի հրաժարվել իրենից ծնված երեխային հանձնել օրենքով սահմանված կարգով պայմանագիր կնքած անձանց: ԵՎ ոչ միայն կրոնական, ինչպես նաև հասարակության կողմից է անընդունելի աբորտը, զրկել անջձին կյանքից: Աբորտը դա նույն սպանություն է, բայց արարքը մեղմացնելու նպատակով օգտագործվում է բազմաթիվ հոմանիշ բառեր:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. <https://www.pravmir.ru/pravo-vracha-na-otkaz-ot-aborta/>
2. ՀՀ Քրեական իրավունք, Երևան, ԵՊՀ հրատարակչություն 2012, էջ 56
3. <http://womennet.am/%C2%AB%D5%A2%D5%AA%D5%AB%D5%B7%D5%AF%D5%B6%D5%A5%D6%80%D5%A8-%D5%B0%D5%A1%D5%B3%D5%A1%D5%AD-%D5%B4%D5%A5%D5%AE-%D6%81%D5%A1%D5%BE-%D5%A5%D5%B6-%D5%A1%D5%BA%D6%80%D5%B8%D6%82%D5%B4-%D5%A5%D6%80%D5%A2/> Նելլի Բարայան
4. Ժողովածու հանրապետական գիտական կոնֆերանսի նյութեր, Երևան, 2017, Ա. Գևորգյան, էջ 108

⁴ Ժողովածու հանրապետական գիտական կոնֆերանսի նյութեր, Երևան, 2017, Ա. Գևորգյան էջ 108

ПРАВОВЫЕ ПРОБЛЕМЫ ЗАЛОГА ПРАВ ПО ДОГОВОРУ БАНКОВСКОГО СЧЕТА

Н.С. Долунц, К.М. Оганесян

*Российско-Армянский университет
ЗАО «Южно-Кавказская Железная дорога», ЗАО Банк ВТБ*

naira.dolunts@gmail.com, okarina@mail.ru

АННОТАЦИЯ

В данной работе были выявлены непроработанность законодателем данного вида залога в главе 23 ГК РФ, посвященной залoгу, а также в главе 45 ГК РФ, посвященной банковскому счету, а также был проведен сравнительный анализ с зарубежными странами, в связи с чем в работе предложен вариант понятия залогового счета. Также были отмечены определенные проблемы относительно реализации залoга прав по договору банковского счета, где на практике довольно часто встречаются ситуации, когда происходит путаница в процедуре по реализации залoженных средств на банковском счете. Особенно часто такое можно наблюдать в случаях, когда залoгодержатель и банк совпадают в одном лице, что иногда и приводит к злоупотреблениям. Считаем, что данная проблема может быть решена следующим образом. Возможность реализации залoга прав по договору банковского счета может происходить лишь в случае создания специального залогового счета, и денежные средства на указанном счете будут являться предметом требования в рамках этой разновидности залoга. При этом, считаем, что функции залогового счета должны быть ограничены, например, относительно без акцептного списания на этот счет или на расходные операции по залоговому счету.

Ключевые слова: залoг, залoг прав по договору банковского счета, банковский счет, залоговый счет, реализация залогового счета.

Залог права требования по договору банковского счета является относительно новым для ГК РФ. Ранее, до внесения изменений в часть первую ГК РФ, российскому гражданскому праву не был известен данный вид залога. Более того, любые попытки использования наличных или безналичных денег в качестве залога очень категорично воспринимался судами.

В статье анализируется деятельность государственной комиссии по защите экономической конкуренции, а также недостатки закона «О защите экономической конкуренции» РА, которые могут привести к созданию неравных условий конкуренции.

Ключевые слова: конкуренция, защита конкуренции, законодательские недостатки, комиссия.

**ՖՐԱՆԶԱՅՁԻՆԳԻ ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ՓՈՐՁԻ
ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՏԵՂԱՅՆԱՑՄԱՆ
ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՀՀ-ՈՒՄ**

Ե.Ա. Տեր-Մովսիսյան

Վանաձորի պետական համալսարան

termovsisyan99@gmail.com

ԱՄՓՈՓՈՒՄ

Աշխատանքի մեջ ներկայացված է ֆրանչայզինգի ուսումնասիրությունը զարգացած տնտեսություն ունեցող երկրներում՝ ԱՄՆ-ում, Ֆրանսիայում, Գերմանիայում, Իտալիայում, Իսպանիայում, Չինաստանում, Սինգապուրում և այլ երկրներում, ընդգծված է ֆրանչայզինգի արդյունավետությունը և նրա ունեցած առանցքային ազդեցությունը ցանկացած տնտեսության զարգացման գործում: Աշխատանքում նաև հիմնավորված է ֆրանչայզինգի զարգացման անհրաժեշտությունը և կարևորությունը ՀՀ տնտեսության համար՝ որպես արդի փուլում տնտեսության աշխուժացման կարևոր գրավական:

Հիմնաբառեր՝ ֆրանչայզինգ, ֆրանչայզինգային ցանց, ֆրանչայզակալ, ֆրանչայզատու:

Ներածություն

Այսօր ամբողջ աշխարհում ոչ ոքի չես գարմացնի ապրանքներով և ծառայություններով, որոնց վրա նշված են այնպիսի հայտնի կազմակերպությունների ապրանքային նշանները, ինչպիսիք են օրինակ

«Coca Cola»-ն, «Adidas»-ը, «McDonalds»-ը, «Zara»-ն ,«KFC»-ն և այլն: Այս ապրանքային նշանները մենք ասոցացնում ենք մեծ հեղինակություն ունեցող կոնկրետ արտադրողների հետ, ու դրանք անուղղակիորեն մատնանշում են արտադրանքի և ծառայությունների բարձր որակի մասին: Ամբողջ աշխարհում այսպիսի արտադրանքի բաշխման ամենաարդյունավետ եղանակներից մեկը ֆրանչայզինգն է:

Շատ երկրներում ֆրանչայզինգի օգտագործման բազմամյա փորձը ապացուցում է, որ այն չափազանց արդյունավետ է, քանի որ «կրկնօրինակում է» արդեն իսկ հաջողված բիզնեսի փորձը, իսկ ընկերություններին ֆրանչայզինգը հնարավորություն է տալիս ընդլայնելու սեփական բիզնեսը: Ֆրանչայզինգը բիզնեսի կառուցման այն եզակի ձևերից մեկն է, որը տալիս է կայունություն, իրական հեռանկար և ապահովում ընկերությունների կենսունակությունը: Ֆրենչայզինգը ձեռնարկատիրության հեռանկարային ձև է, եթե «սովորական» բիզնեսում հիմնադրված 100 կազմակերպություններից գոյատևում են միայն 10-ը, ապա ֆրենչայզինգային բիզնեսի դեպքում նրանցից 90-ը էլ արդյունավետ կգործեն, որը շատ կարևոր է աշխատատեղերի ստեղծման տեսանկյունից: Թեմայի արդիականությունը ու նպատակայնությունը պայմանավորված է նրանով, որ Հայաստանում ֆրանչայզինգի շուկան դեռևս լավ ձևավորված և զարգացած չէ, սակայն դրա զարգացման համար անհրաժեշտ ներուժը բավականին մեծ է: Ֆրանչայզինգի զարգացումը կարևոր նշանակություն ունի ՀՀ տնտեսության համար և նրա զարգացումը բազմարկիչի էֆեկտ կունենա տնտեսության այլ ճյուղերի և ոլորտների վրա:

Աշխատանքի հիմնական բովանդակությունը


Ֆրանչայզինգ բառը ծագել է ֆրանսիական franchise բառից, որը նշանակում է արտոնություն, ազատում հարկերից: Ֆրանչայզինգը (համալիր ձեռնարկատիրական գործունեության թույլտվությունը) բիզնեսի կազմակերպման ձև է, որում ընկերությունը անհատին կամ այլ ընկերությանը՝ ֆրանչայզակալին, տալիս է իր ընկերության ապրանքների կամ ծառայությունների վաճառքի իրավունք: Ֆրանչայզատուն այն ընկերությունն է, որը տալիս է լիցենզիա կամ իր ապրանքանիշի, նոու-հաուի օգտագործման իրավունք: Ֆրանչայզակալը անհատ է կամ ընկերություն, որը ֆրանչայզատուից գնում է թույլտվության կամ ապրանքանիշի, նոու-հաուի օգտագործման իրավունք և վճարում ծառայության վճար՝ ռոյալթի ֆրանչայզերի ապրանքանիշի, նոու-հաուի և այլնի օգտագործման դիմաց: Ֆրանչիզան ամբողջական բիզնես համակարգ է, որը ֆրանչայզատուն վաճառում է ֆրանչայզակալին: Ֆրանչայզինգը ամուր դիրքեր է զբաղեցնում գրեթե բոլոր երկրներում, ֆրանչայզատուների և ֆրանչայզինգային ցանցերի քանակն աճում է բարձր տեմպերով^[3, էջ 6]:

ԱՄՆ-ում ֆրանչայզինգի զարգացման ժամանակակից փուլը սկսել է նախորդ դարի 50-60-ական թթ.-ին: ԱՄՆ-ում ֆրանչայզինգը առաջին անգամ սկսել է օգտագործվել կարի մեքենաներ արտադրող «Singer Sewing» ընկերության կողմից: Շատ հետազոտողներ Իսահակ Ջինգերին (Isaak Singer) համարում են ժամանակակից ֆրանչայզինգի հիմնադիրը:

Ֆրանչայզինգի միջազգային ասոցացիայի (IFA) տվյալների համաձայն աշխատանքային օրվա յուրաքանչյուր ութերորդ թույլտվում ստեղծվում է ֆրանչիզայի նոր կետ: ԱՄՆ-ում գոյություն ունեն ավելի քան 2000 ֆրանչիզային համակարգեր գործունեության 75 ոլորտներում: Ֆրանչիզային ձեռնարկությունների քանակը հասնում է 767 000-

ի: Յուրաքանչյուր ֆրանչայզատուին բաժին է ընկնում մոտավորապես 380 ֆրանչիզային կետեր: Մակայն ֆրանչայզատուների մեծ մասը ունի 100-ից քիչ ֆրանչիզային կետեր:


ԱՄՆ-ում ֆրանչիզային համակարգի գրեթե 80 %-ը պահանջում է 50 000-250 000 դոլար ներդրումներ, իսկ 20 %-ը՝ 50 000 դոլարից քիչ ներդրում: Ռոյալթիի մեծությունը տատանվում է միջինում 3-6 %՝ կախված վաճառքի ծավալներից: Ֆրանչայզինգային համակարգի տարեկան վաճառքի ծավալները գերազանցում են 1.5 տրիլիոն դոլարը: Մանրածախ առևտրի ֆրանչայզինգը ապահովում է ԱՄՆ-ի ՀՆԱ-ի շուրջ 15 %-ը: ՀՆԱ-ի մոտավորապես 60 %-ը ստեղծվում է փոքր և միջին բիզնեսի միջոցով, որոնց ավելի քան 50 %-ը աշխատում են ֆրանչայզինգի համակարգով [4, էջ 17-25]:



Գծապատկեր 1. Ֆրանչայզինգը ԱՄՆ-ում՝ ըստ ոլորտների, 2018 թ. [5, էջ 22]


Ֆրանսիայում ֆրանչայզինգի աճը տեղի է ունեցել 1970-ական թթ.-ին: Ֆրանսիան Եվրոպայում առաջատար դիրք է զբաղեցնում ֆրանչայզինգների քանակով(1900 ֆրանչայզատու և 71518 ֆրանչայզակալ): Ներկայումս Ֆրանսիայում ֆրանչայզինգի շուկան զարգանում է կայուն և դինամիկ ձևով: 2016 թ.-ին ցանցերի քանակը կազմել է 1900, ֆրանչիզային առևտրի կետերը՝ 71518, շրջանառությունը՝ 55,1 մլրդ եվրո, աշխատատեղերը՝ 618 845: Ֆրանչայզինգային ցանցերի մեծ մասը զբաղված է առևտրի ոլորտում: Այնուհետև գալիս են սպասարկման ոլորտը, հյուրանոցային և ռեստորանային բիզնեսը [8]:

Ֆրանչայզատուների և ֆրանչայզակալների քանակով **Գերմանիան** առաջատար դիրք է զբաղեցնում եվրոպական մի շարք երկրների մեջ: Ֆրանչայզինգային համակարգերի թիվը Գերմանիայում հասնում է 598-ի և ներկայացվում է 28 000 ֆրանչայզատու ընկերությունների կողմից: Ֆրանչայզատուների տարեկան աճը կազմում է 7 %, իսկ ֆրանչայզակալների համար՝ 17 % , որը փաստում է ֆրանչայզինգի զարգացման բարձր մակարդակի մասին: Վերջին հինգ տարիների ընթացքում ֆրանչայզատուների և ֆրանչայզակալ ընկերությունների թվաքանակը աճել է 60 %-ով, Գերմանիայի ֆրանչայզինգի ասոցացիան յուրաքանչյուր տարի կանխատեսում է 8-10 % աճ: Ֆրանչայզինգի ոլորտում ապրանքաշրջանառությունը կազմում է 22,4 միլիարդ եվրո: Ֆրանչայզինգային ցանցերի ավելի մեծ աճ նկատվում է արագ սննդի ոլորտում, ինչպես նաև սպասարկման, ավտոսպասարկման և ավտոպահեստամասերի, ժամանցի, կրթության տուրիզմի և հյուրանոցային բիզնեսի ոլորտներում: Գերմանիայում 2016 թ. գործել է շուրջ 950 ֆրանչայզատուներ, մոտ 120 000 անկախ ֆրանչայզակալներ, աշխատատեղերով են ապահովել 700 000 հոգու, ֆրանչայզինգային համակարգերի 39 % սպասարկման ոլորտում, 30 %՝ մանրածախ առևտրում, 22% սննդի կազմակերպման ու զբոսաշրջության ոլորտում [4, էջ 30-32]:



Գծապատկեր 2. Ֆրանչայզինգը Գերմանիայում՝ ըստ ոլորտների, 2016 թ. [9]

2017 թվականի ավարտին **Իսպանիայում** գործում էին 74 398 բիզնեսներ, որոնցից 20 620-ը սեփական էին, իսկ մնացած 53 778-ը՝ ֆրանչայզինգ: Նախորդ տարվա համեմետատ՝ ֆրանչայզինգի աճը կազմում է ավելի քան 5.5%: Հաշվետու ժամանակահատվածում ֆրանչայզինգի թվաքանակով գերակշռում է սննդի ոլորտը՝ 13 997 ֆրանչայզինգներով (2016 թվականի համեմատ՝ 1 306-ով ավելի), այնուհետև հաջորդում է նորաձևության՝ 9.107 և սպասարկման ոլորտները՝ 8.659: 2017 թվականին ընդհանուր ֆրանչայզինգի համակարգի շրջանառությունը կազմել է 27,5 միլիարդ եվրո՝ 2016 թվականի 26,9 միլիարդ եվրոյի փոխարեն, այսինքն տեղի է ունեցել 2.2% աճ: 2017 թվականին ֆրանչայզինգի համակարգում աշխատել են 278 951 մարդ՝ 9 965-ով ավելի, քան 2016 թվականին (3.7%) [6, էջ 4-10]:



Գծապատկեր 3. Ֆրանչայզինգը Իսպանիայում 2001-2017 թթ. [6, էջ 3]

Ֆրանչայզինգը կարևոր դերակատարում ունի նաև **Իտալիայի** տնտեսությունում: Նույնիսկ տնտեսության լճացման փուլում այն դարձել էր փոքրաքանակ հատվածներից մեկը, որը դրսևորում էր աճի դրական միտումներ: Յուրաքանչյուր տարի ֆրանչայզինգի հատվածի աճը կազմում է 3 %: 2005-2016 թվականներին ֆրանչայզատուների քանակը ավելացել է 1.1%-ով՝ կազմելով 2.7%: 2017 թվականին 28 152 միլիարդ դոլար վաճառքի ծավալներով Իտալիան չորրորդ ամենախոշոր շուկան էր Եվրոպական ֆրանչայզինգի շուկայում՝ Ֆրանսիայից, Գերմանիայից և Իսպանիայից հետո: 2016 թվականին իտալական ֆրանչայզների թիվը կազմում էր ավելի քան 50 720: Ֆրանչայզինգի ոլորտում աշխատողների թիվը կազմում է 195 303: Ֆրանչայզատուների վաճառքների միջին ծավալը Իտալիայում կազմում է մոտ 26,5 միլիարդ դոլար, մինչդեռ ֆրանչայզակալի սկզբնական ներդրումների միջին մեծությունը կազմում է 22 000-55 000 դոլար: Ուսումնասիրությունները պարզել են, որ Իտալիայում ամենահեռանկարային ոլորտը սննդի արտադրությունն է՝ ֆրանչայզինգային համակարգերի 32.2%-ը սննդի արտադրության ոլորտում է, 7.3%-ը հագուստի, 7.6%-ը արագ

սննդի և փողոցային սննդի, 6.2%-ը ներքնագգեստի արտադրության, 6%-ը ոչ պարենային ոլորտներում: Ֆրանչայզինգը նաև աճում է իրավաբանական ծառայությունների, բջջային հեռախոսների և ատամնաբուժական կլինիկաներում [7]:

Չինաստանում գործում են ամենամեծ քանակությամբ ֆրանչիզաները, բայց նրանց գործունեության մաշտաբները համեմատաբար փոքր են: Չինաստանում հատկապես հանրաճանաչ են ֆրանչիզները սննդի, խմիչքի և մանրածախ առևտրի ոլորտներում (ֆրանչիզների մոտ 40%): Յուրանքանչյուր ֆրանչիզային համակարգ իր մեջ պարունակում է մոտավոր 43 կետ՝ համեմատած ԱՄՆ-ի 540 կետերի: Չինաստանում գործում են 2 600 բրենդներ 200 000 տարբեր շուկաներում: Չինաստանի խանութների ցանցերի և ֆրանչայզինգի ասոցացիայի վիճակագրությունից հետևում է, որ երկրի թոփ 100 ֆրանչիզների վաճառքի ընդհանուր ծավալը կազմել է մոտ 66 մլրդ դոլար 124 086 վաճառակետերում: Չինաստանում գործող ֆրանչիզների և խանութների ցանցերի շնորհիվ երկրում ստեղծվել են ավելի քան 5 մլն աշխատատեղեր [4, էջ 27-29]:

Հնդկաստանում ապրանքների և ծառայությունների օտարերկրյա ֆրանչայզինգը գտնվում է ձևավորման փուլում: Հնդկաստանի ֆրանչայզինգի ասոցիացիայի տվյալների համաձայն՝ դեռևս 2012 թ. առկա էր 45 հազար ֆրանչայզակալներ և 2, 5 հազար ֆրանչայզատուներ, ընկերությունների համախառն շրջանառությունը կազմել էր 13,4 մլրդ. դոլար: 2017 թ. տեղի ունեցավ աճ՝ մինչև 168 հազար ֆրանչայզի և 3,5 հազար ֆրանչայզեր, իսկ շրջանառությունը՝ ավելի քան 50 մլրդ դոլար: Հնդկաստանում ֆրանչայզինգը զարգացած է կրթության, հագուստի և հասարակական սննդի ոլորտներում: Հնդկաստանը հանդիսանում է մեծածախ առևտրի ֆրանչայզինգի ամենամեծ շուկան իր 300

միլիոնանոց միջին խավի սպառողներով, որը շոայլ է ծախսերի կատարման ժամանակ, և, բացի այդ, բնակչությունը ունի բիզնես հակումներ [4, էջ 29-30]:

Լավ ցուցանիշներ ունի **Թայվանի** շուկան. ավելի քան 2,5 հազար ֆրանչայզերներ և մոտ 130 հազար վաճառքի կետեր՝ ներառյալ կորպորատիվ վաճառակետերը, շրջանառությունը 2015 թ. ավելացել է 1, 5 անգամ և կազմում է 70 մլրդ դոլար: Թայվանական ֆրանչիզների հիմնական առանձնահատկությունը միջազգային ներգրավվածությունն է. նրանք լայնորեն ներկայացված են ողջ Ասիայում և Ամերիակայում շնորհիվ ձեռնարկատիրության պետական աջակցության [13, էջ 3]: «Տնտեսական հրաշք» կարելի է անվանել ֆրանչայզինգը **Մինգապուրում**: Մինգապուրի ֆրանչայզինգի և լիցենզավորման ասոցիացիայի տվյալների համաձայն, այստեղ իրենց զարգացումն են ստացել 700 ֆրանչիզներ. 40 %-ը՝ սննդի և խմիչքի, 30 %-ը՝ կրթության, 20 %-ը՝ անհատական սպասարկման ոլորտներում, մնացածը բաշխված են այլ ճյուղերում [1, էջ 4]:

Ի տարբերություն արևմտյան երկրների՝ ֆրանչայզինգը **Հայաստանում** իրավական կարգավորման է ենթարկվել ավելի ուշ և, լինելով համեմատաբար նոր ինստիտուտ, չունի լայն կիրառելիություն: Հայաստանում գործարարության զարգացմանը խոչընդոտող հիմնական յոթ խոչորագույն արգելքներն են արդար և հավասար մրցակցային միջավայրի բացակայությունը, կոռուպցիան, հարկային համակարգը, տեսչական ստուգումների համակարգը, ֆինանսական ռեսուրսների հասանելիությունը, ՓՄՁ զարգացման քաղաքականությունը և մաքսային համակարգը [2, էջ 3]: Հայաստանի բիզնես միջավայրում առկա վերը նշված թերություններից բացի նրա զարգացմանը խոչընդոտում

են օրենսդրական դաշտում առկա բացթողումները, աշխարհաքաղաքական և անվտանգության խնդիրները, այդ թվում երկու հարևան երկրների հետ փակ սահմանները: ՀՀ ֆրանչայզինգի շուկայի զարգացման խոչընդոտներից է նաև ֆրանչայզինգային ասոցիացիայի բացակայությունը, որն էականորեն դժվարացնում է ֆրանչայզատուների և ֆրանչայզակալների համագործակցությունը, բացասաբար է ազդում երկրի հետ համագործակցության ցանկություն հայտնող կազմակերպությունների վրա:

Զարգացած երկրներում ֆրանչայզինգի կիրառումը անառարկելիորեն վկայում է վերջինիս՝ բիզնես վարելու կենսունակ և արդյունավետ ձև լինելու մասին: Սակայն ֆրանչայզինգը Հայաստանում դեռևս այնքան էլ տարածված չէ և ՀՀ-ն փաստացի ֆրանչիզներ ներմուծող է, քանի որ Հայաստանում գործող ֆրանչիզների զգալի մասն արտասահմանյան ծագում ունի: Ամփոփելով նշենք, որ ՀՀ-ում առկա է ֆրանչայզինգի հետագա զարգացման համար մեծ ներուժ: Ֆրանչայզինգի զարգացումը հզոր խթան կարող է դառնալ հայաստանյան տնտեսության զարգացման համար՝ բազմարկիչի էֆեկտով ներագդելով տնտեսության այլ ճյուղերի և ոլորտների վրա:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Ավետիսյան Լ. «Ֆրանչայզինգի համաշխարհային շուկայի զարգացման միտումները և դրանց դրսևորումները Հայաստանում», Երևան, 2018
2. «Ձեռնարկատիրական գործունեությանը խոչընդոտող գործոնները Հայաստանում», Երևան, 2016
3. Зими́на Л. «Организация бизнеса на основе франчайзинга» Ульяновск, 2009

4. «Международный опыт развития франчайзинга, информационная поддержка Национальной палаты предпринимателей Республики Казахстан», 2016
5. «Franchise business outlook for 2018», by IHS Markit Economy, 2018
6. «Franchising in Spain, national statistics» , Annual report 2018
7. www.export.gov/article?id=Italy-Franchising
8. <https://www.franchise-fff.com/franchise/les-chiffres-cles>
9. www.gtai.de/GTAI/Navigation/EN/Invest/Industries/Consumer-industries/franchising.

ИЗУЧЕНИЕ МИРОВОГО ОПЫТА ФРАНЧАЙЗИНГА И ВОЗМОЖНОСТИ ЕГО ЛОКАЛИЗАЦИИ В АРМЕНИИ

Е.А. Тер-Мовсисян

Ванадзорский Государственный университет

termovsisyan99@gmail.com

АННОТАЦИЯ

В данной работе демонстрируется обзор состояния франчайзинга в развитых странах: в США, во Франции, в Германии, в Италии, в Испании, в Китае, в Сингапуре и в других странах. Подчеркивается эффективность франчайзинга и его ключевое влияние на развитие любой экономики. Также подчеркивается необходимость и важность франчайзинга для армянской экономики как важной гарантии для экономической активации на современном этапе.

Ключевые слова: франчайзинг, франчайзинговая сеть, франчайзи, франчайзер.

**ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ՇՈՒԿԱՅԻ
ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆԸ ԵՍՏՄ ԵՐԿՐՆԵՐՈՒՄ**

Հ.Ս. Ղուկասյան

Վանաձորի պետական համալսարան

hovoghukasyan96@mail.ru

ԱՍՓՈՓՈՒՄ

Այս հոդվածում վերլուծության է ենթարկվել ԵՍՏՄ երկրների ապահովագրական շուկայի ներկայիս վիճակը և զարգացման աստիճանը, վեր են հանվել առկա թերություններն ու խնդիրները, արդյունավետության բարձրացման հնարավոր ուղիները: Ըստ այդմ՝ եկանք այն եզրակացության, որ ապահովագրության ոլորտի զարգացման մակարդակը և ապահովագրության տեսակների կառուցվածքը անընդհատ փոփոխվում են: Այս խնդիրները հաղթահարելու համար անհրաժեշտ է բարձրացնել ապահովագրական մշակույթի մակարդակը ԵՍՏՄ երկրներում, կարգավորել պարտադիր ապահովագրության համակարգը:

Հիմնաբառեր՝ ապահովագրություն, ապահովագրական շուկա, ԵՍՏՄ երկրներ:

Ներածություն

ԵՍՏՄ երկրներում ապահովագրական շուկան նոր է սկսել զարգանալ, իսկ դա նշանակում է, որ Հայաստանը դեռևս զիջում է ոլորտի զարգացած երկրներին: Մեր նպատակն է ուսումնասիրել ԵՍՏՄ երկրների ա-

ապահովագրական շուկաների առանձնահատկությունները ու տարբերությունները: Արդյունքում պարզ դարձավ, որ այս երկրների ապահովագրական շուկաները բութագրվում են իրենց առանձնահատկություններով և զարգացման տարբեր մակարդակներով: Այս երկրների ապահովագրական շուկաները ավելի սերտացնելու համար մենք ուսումնասիրեցինք նրանց առանձնահատկությունները, բազմազանությունը և զարգացման աստիճանը: Թեմայի ակտուալությունը ամփոփված է առաջադրված խնդրում, այն է՝ բացահայտել ապահովագրական շուկայի տարբերությունները և առաջարկել շուկաների միավորման ու ինտեգրման ուղիներ: Դրան կարող է նպաստել այն հանգամանքը, որ ԽՍՀՄ փլուզումից հետո որոշ առանձնահատկություններ մնացին ԵՄԱՄ երկրների համար որպես ընդհանուր կողմ:

Աշխատանքի հիմնական բովանդակությունը

Ապահովագրությունը ռիսկի փոխանցումն է մի անձից, մի սուբյեկտից մյուսին: Ռիսկի պարագայում ապահովագրողը, ապահովագրական ընկերությունը փոխհատուցում է պատճառված վնասը: Սկզբունքը պարզ է. ապահովագրական ֆոնդը հավաքագրում է ապահովագրավճարները, իսկ ապահովագրական դեպքերում տուժողին տրվում է փոխհատուցում ապահովագրական ֆոնդից:

Ապահովագրական գործունեությունը հիմնված է համարժեքության և պատահականության սկզբունքների վրա: Համարժեքության սկզբունքը ապահովում է ապահովագրական կազմակերպության եկամուտների և ծախսերի միջև հավասարակշռությունը: Ռիսկը սպառնում է բոլորին, սակայնք քչերն են դատապարտված մասնակից լինել ապահովագրական պատահարներին: Ապահովագրված դեպքերի համար վճարումները կատարվում են ռիսկերից խուսափող այլ ապահովագրողների կողմից կատարված վճարումների հաշվին:

Երկու խոսք ԵԱՏՄ երկրների ապահովագրական շուկաների վերաբերյալ: Առաջին ապահովագրական ընկերությունը ստեղծվել է Ռուսաստանում 1988-1989թթ., Բելառուսում՝ 1990-ականներին:

ԽՍՀՄ-ի փլուզումից հետո ստեղծվեց բաց մրցակցության հնարավորություն, որից օգտվեցին այս ոլորտի առաջատար կազմակերպությունները: Ապահովագրական շուկայի թերզարգացումը առկա է նաև Հայաստանում, Ղազախստանում, ինչպես նաև Ղրղզստանում, որտեղ ապահովագրական շուկան ձևավորվել է 2000-ականներին: Իսկ Ղրղզստանում այս շուկայի շարժիչ ուժը՝ ԱՊՊԱ-ն, ուժի մեջ կմտնի 2019 թվականին:

Համեմատելով ԵԱՏՄ-ի տարբեր երկրների ապահովագրական շուկաների առանձնահատկությունները՝ կարելի է եզրակացնել, որ յուրաքանչյուր երկիր ունի հատուկ մոտեցում ապահովագրական համակարգի ստեղծման և օգտագործման նկատմամբ, որը կախված է մի շարք գործոններից (տե՛ս աղյուսակ 1):

Աղյուսակի վերլուծությունը ցույց տվեց (բոլոր ցուցանիշները հաշվարկվել են 05.04.2019թ. սահմանված արտարժույթի կուրսով), որ ԵԱՏՄ բոլոր երկրներում գործում է ԱՊՊԱ-ն: ԱՊՊԱ-ի միջին գինը հաշվարկվել է բոլոր երկրներում ԿԻԱ ՕՊՏԻՄԱ ավտոմեքենայի համար՝ ըստ հետևյալ չափանիշների՝

-ավտոմեքենայի տարեթիվը՝ 2014թ.

-ապահովագրման ժամկետը՝ 1 տարի,

-գտնվելու վայրը՝ մայրաքաղաք,

-նախկինում չվթարված,

-վարորդի տարիքը և վարորդական իրավունքի ստացման ժամկետը՝ 25 տարեկան և նվազագույնը 2 տարի:

2018թ. տվյալներով Հայաստանում ԱՊՊԱ-ի միջին գինը կազմում է 48100 դրամ, որը գերազանցում է մյուս բոլորին: Նվազագույնը

արժեքը գրանցվել Ղազախստանում՝ 12691 դրամ (համեմատվել են միայն 4 երկրների ցուցանիշները, քանի որ Ղրղզստանում ԱՊՊԱ-ն դեռևս կիրառվում է): Այսպիսով՝ ԵԱՏՄ երկրներում ԱՊՊԱ-ի միջին գինը կազմում է 27176 դրամ:

Ապահովագրական շուկայում ԱՊՊԱ-ի գծով ամենամեծ մասնաբաժինը Բելառուսինն է (52%), իսկ ամենափոքրը՝ Ռուսաստանինը (12.2%):

ԿԱՍԿՈ-ի ուսումնասիրությունը ցույց տվեց, որ ապահովագրության այս ձևը գործում է ԵԱՏՄ բոլոր երկրներում: Չնայած այն բանին, որ Ռուսաստանում 2014թ. ճգնաժամ էր, ԿԱՍԿՈ-ի պոլիսի միջին գինը 325 600 դրամ է, որը գերազանցում է մյուս բոլոր երկրների ցուցանիշներին, իսկ ամենացածրը՝ 116 254 դրամ, գրանցվել է Ղրղզստանում: Բայց Ռուսաստանը չի հանդիսանում ԿԱՍԿՈ-ի գծով շուկայի առաջատար: Այստեղ առաջատարը Բելառուսն է՝ 25.6%, իսկ Հայաստանին է պատկանում ամենափոքր մասնաբաժինը:

Աղյուսակ 1. ԵԱՏՄ երկրներում ապահովագրության տեսակները
և առանձնահատկությունները*

Երկիր Տեսակ	Հայաստան [1]	Ռուսաստան [2]	Բելառուս [3]	Ղազախստան [4]	Ղրղզստան [5]
ԱՊՊԱ	Պարտադիր	Պարտաիր	Պարտադիր	Պարտադիր	_____
Միջին գին	48 100	27 935	19 980	12 691	_____
Ապահովագր. ծածկույթ	3 345 207	3 700 000	5 675 800	_____	_____
Մասնաբաժինը շուկայում	43%	12.2%	52%	13.3%	_____
ԿԱՍԿՈ	Կամավոր	Կամավոր	Կամավոր	Կամավոր	Կամավոր
Միջին գին	126 540	325 600	162 060	263 958	116 254

Ապահովագր. ծածկույթ	1 520 545	Ըստ պայմանագրի	303 400	Ըստ պայմանագրի	_____
Մասնաբաժինը շուկայում	4.5%	9.7%	25.6%	4.8%	_____
Բժշկական ապահովագր.	Կամավոր	Պարտադիր	Պարտադիր	Կամավոր	Կամավոր
Միջին գին	44 000	128 020	121 360	231 620	Ըստ պայմանագրի
Ապահովագր. ծածկույթ	7 770 000	14 800 000	11 100000	21 460 000	_____
Մասնաբաժինը շուկայում	35.2%	19.2%	6.94%	6.7%	12%
Գույքի ապահովագր.	Կամավոր	Կամավոր	Կամավոր	Կամավոր	Կամավոր
Միջին գին	Ըստ պայմանագրի	8 880 դր.	13 320 դր.	22 200դր.	8 436դր.
Ապահովագր. ծածկույթ	Ըստ պայմանագրի				
Մասնաբաժինը շուկայում	6.1%	12.5%	11%	20.8%	62%
Կյանքի ապահովագր.	_____	Կամավոր	Կամավոր	Կամավոր	Կամավոր
Միջին գին	_____	296 000	Ըստ պայմանագրի	Ըստ պայմանագրի	Ըստ պայմանագրի
Ապահովագր. ծածկույթ	_____	Ըստ պայմանագրի	Ըստ պայմանագրի	Ըստ պայմանագրի	Ըստ պայմանագրի
Մասնաբաժինը շուկայում	_____	24.4%	8%	7.6%	_____

* Աղյուսակը կազմվել է հեղինակի կողմից

Դժբ. պատահար. ապահովագր.	Կամավոր	Կամավոր	Կամավոր	Կամավոր	Կամավոր
Միջին գին	7 400	13 660	Ըստ պայմանագրի	Ըստ պայմանագրի	Ըստ պայմանագրի
Ապահովագր. ծածկույթ	Ըստ պայմանագրի				
Մասնաբաժինը շուկայում	3.6%	8.3%	5.7%	1.9%	_____

Հարկ է նշել, որ ԿԱՍԿՈ-ի միջին գինը հաշվարկվել է 2014թ. արտադրության ԿԻԱ ՕՊՏԻՄԱ մեքենայի համար՝ ըստ հետևյալ չափանիշների՝

- շուկայական արժեքը՝ 4 810 000 դրամ,
- տրանսպորտային միջոցը չի օգտագործվում որպես տաքսի,
- վարորդների քանակը՝ մինչև 3
- վարորդական իրավունք՝ նվազագույնը 3 տարի:

Բժշկական ապահովագրություն, որպես ապահովագրական համակարգը ձևավորող կարևոր բաղադրիչ, առկա է ԵԱՏՄ անդամ բոլոր պետություններում: Ըստ միջին գնի ցուցանիշի՝ ուսումնասիրվել է 4 երկիր, բացառությամբ՝ Ղրղզստանի (գինը որոշվում է պայմանագրով): Այս ցուցանիշի համաձայն՝ Ղազախստանը ունի ամենաբարձր գինը (231 620 դրամ), իսկ ամենացածրը Հայաստանում է (44000դրամ): Ի տարբերություն ԵԱՏՄ այլ երկրների՝ Հայաստանում բժշկական ապահովագրությունը պարտադիր է միայն պետական ապարատի աշ-

խատակիցների համար: Շուկայական մասնաբաժնի առումով Հայաստանը զբաղեցնում է ամենաբարձր դիրքը (35.2%), իսկ ցուցակը եզրափակում է Ղազախստանը (6.7%):

Գույքի ապահովագրությունը բոլոր երկրներում կամավոր բնույթի է: Ապահովագրության միջին գինը Ղազախստանում ամենաբարձրն է (22 200 դրամ), իսկ ամենացածրը Ղրղզստանում է (8436 դրամ): Հայաստանը այս ցանկում ընդգրկված չէ, քանի որ մեր երկրում այն կարգավորվում է՝ ըստ պայմանագրի: Ապահովագրության այս ձևով շուկայում ամենամեծ մասնաբաժինը ունի Ղրղզստանը (62%) և ամենափոքրը՝ Հայաստանը (6.1%):

ԵԱՏՄ երկրների ցանկում Հայաստանը միակն է, որտեղ չկա կյանքի ապահովագրություն: Միջին գինը հաշվարկվում է միայն Ռուսաստանում (296 000 դրամ), մյուսներում՝ հաշվարկվում է պայմանագրով: Երեք երկրներում (բացառությամբ՝ Ղրղզստանի) ըստ շուկայի մասնաբաժնի՝ ցուցակը գլխավորում է Ռուսաստանը (24.4%), իսկ եզրափակում՝ Ղազախստանը (7.6%):

Վերջին ցուցանիշը վերաբերում է դժբախտ պատահարների ապահովագրությանը ԵԱՏՄ-ի բոլոր երկրներում: Ապահովագրության միջին գինը բոլոր երկրներում (բացառությամբ Հայաստանի 7400 դրամ և Ռուսաստանից 13660 դրամ) որոշվում է՝ ըստ պայմանագրի: Շուկայի ամենամեծ մասնաբաժինը ունի Ռուսաստանը (8.3%), Ղրղզստանում տվյալներ չկան, իսկ ամենափոքր մասնաբաժինը ունի Ղազախստանը (1,9%):

Այժմ ներկայացնենք ապահովագրական շուկան բնութագրող մի քանի կարևոր ցուցանիշներ (տե՛ս աղյուսակ 2):

Աղյուսակ 2. Ապահովագրական շուկան բնութագրող ընդհանուր ցուցանիշներ*

Երկիրը Տեսակը	Հայաստան 6	Ռուսաստան 7	Բելառուս 8	Ղազախստան 9	Ղրղզստան 10
Պարտադիր ապահովագր. %	43.5 %	19.25 %	43.41%	33.4%	-
Կամավոր ապահովագր. %	57.5%	80.5%	56.59%	66.6%	-
Մեկ շնչին բաժին ընկնող ապահովագրավճարների մեծությունը, դրամ	7 200	64 461	26 936	26 765	1 221
Ապահովագրական վճարների բաժինը ՀՆԱ-ում, %	0.3%	1.3%	1.14%	0.07%	-
Պետության մասնաբաժինը շուկայում, %	0%	2 %	32%	23%	-

* Աղյուսակը կազմվել է հեղինակի կողմից

Տարբեր երկրներում միմյանցից էապես տարբերվում են պարտադիր և կամավոր ապահովագրության ձևերը: Հայաստանում ծավալով ամենամեծը պարտադիր ապահովագրությունն է, մասնավորապես՝ ԱՊՊԱ-ն: Իսկ Բելառուսում պարտադիր ապահովագրական պայմանագրեր կարող են կնքել միայն պետական ընկերությունները: Այնտեղ գործում է նաև այսպես կոչված «կանաչ քարտ», որը վարորդի

ԱՊՊԱ-ն է այլ երկրներում (գործում է 48 երկրում): Այստեղ ևս պարտադիր ապահովագրությունը շուկայի մեծ մասնաբաժինն է կազմում: Ռուսաստանում ԱՊՊԱ-ն ևս առաջին տեղն է զբաղեցնում պարտադիր ապահովագրության տեսակների ցանկում: Ղազախստանում պարտադիր են բժշկական ապահովագրությունը և աշխատակիցների ապահովագրությունը դժբախտ դեպքերից: Պարտադիր ապահովագրությունը կազմում է ընդհանուր ապահովագրավճարների մոտ քառորդ մասը: Դրողստանում ԱՊՊԱ-ն ուժի մեջ կմտնի 2019 թվականին: Որպես պարտադիր ապահովագրության տեսակ՝ Հայաստանում սոցիալական փաթեթ կա, որը տրամադրվում է պետական հիմնարկներում աշխատողներին:

Ինչ վերաբերում է կամավոր ապահովագրությանը, ապա ԵԱՏՄ երկրներում այդ ցուցանիշը կազմում է մոտավորապես նույն է: Գույքի ապահովագրությունը գերակշռող մասն է: Հայաստանի առանձնահատկությունը կյանքի ապահովագրության բացակայությունն է, որը պայմանավորված է պարտադիր բժշկական ապահովագրության բացակայությամբ, ինչպես նաև նրանով, որ ապահովագրական ընկերությունները չեն մասնակցում կենսաթոշակային ֆոնդերի կառավարմանը:

2018թ. տվյալներով մեկ շնչին բաժին ընկնող ապահովագրավճարների չափը հետևյալն է. Դրողստանի ցուցանիշը ամենացածրն է՝ 1221 դրամ, Հայաստանինը՝ 7200 դրամ, իսկ Բելառուսի և Ղազախստանի ցուցանիշները գրեթե նույնն են՝ 26 765 դրամ և 26 936 դրամ: Ինչ վերաբերում է Ռուսաստանին, ապա վերջինիս ցուցանիշը մի քանի անգամ գերազանցում է մյուս երկրներին՝ 64 461 դրամ:

Տարբեր երկրներում ապահովագրական շուկայի զարգացման մասին ավելի հստակ պատկերացում կազմելու համար հաշվի է առնվում ՀՆԱ-ի չափը: Ինչպես տեսնում ենք աղյուսակ 2-ում, ՀՆԱ-ում ապահովագրավճարների ամենամեծ բաժինը Ռուսաստանին է (1.3%):

Ապահովագրական շուկայում պետության մասնաբաժնի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ այն բավականին բարձր է Բելառուսում (32%), իսկ Հայաստանում՝ 0%, ուստի կարող ենք ասել, որ Հայաստանում ապահովագրական շուկան զարգանում է ինքնուրույն:

Ուսումնասիրության արդյունքում եկանք այն եզրահանգման, որ ԵԱՏՄ երկրներում ապահովագրական շուկան ունի զարգացման տարբեր մակարդակներ, իսկ ապահովագրական ծառայությունները անհավասար են բաշխված: Ըստ այդմ առաջարկում ենք՝

-ԵԱՏՄ երկրների համար ստեղծել ապահովագրական շուկայի ինտեգրման այնպիսի պայմաններ, որի արդյունքում ցանկացած ապահովագրական պոլիս, պայմանագիր գործի ԵԱՏՄ բոլոր երկրներում, ինչպես օրինակ Բելառուսի «կանաչ քարտը»,

-ստեղծել համընդհանուր նորմեր (նորմատիվա-իրավական բազա) ԵԱՏՄ ապահովագրական շուկայի զարգացման համար:

Վերը թվարկված պայմանները կունենան իրենց դրական ազդեցությունը ապահովագրական շուկայի վրա:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. <http://www.armstat.am/ru/>
2. <https://www.minfin.ru/ru/>
3. <http://www.minfin.gov.by/ru/>
4. <http://www.minfin.gov.kz/irj/portal/anonymous>
5. <http://www.minfin.kg/>
6. [http://www.ingoarmenia.am/index/index/lang/ru,](http://www.ingoarmenia.am/index/index/lang/ru)

- <http://www.reso.am/rus/index.html>, <http://www.rgs.am/rus/index.html>
7. <http://www.banki.ru/>, <http://www.reso.ru/>, <https://www.ingos.ru/>,
<https://www.sogaz.ru/>
 8. <https://benefit.by/page/show/articles/1814>, <https://task.by/>,
<https://www.promtransinvest.by/>, <https://infobank.by/straxovye-kompanii-perechenj/>, <http://www.bns.by/>
 9. <http://www.nationalbank.kz>, <https://allinsurance.kz>, <https://m.kapital.kz/>
 10. <https://www.akchabar.kg/insurance/>, <http://www.minfin.kg/>,
<https://forbes.kz>, <https://m.kapital.kz/>, <http://www.minfin.am/>

ИССЛЕДОВАНИЕ СТРАХОВОГО РЫНКА В СТРАНАХ ЕАЭС

О.С. Гукасян

Ванадзорский государственный университет

hovoghukasyan96@mail.ru

АННОТАЦИЯ

В данной статье проанализировано текущее состояние и уровень развития страхового рынка стран ЕАЭС, были подняты существующие проблемы и возможные пути повышения эффективности. На основе исследований мы пришли к выводу, что уровень развития этой области в странах ЕАЭС и структура видов страхования значительно варьируются. Для преодоления этих проблем необходимо повысить уровень страховой культуры населения в странах ЕАЭС, упорядочить систему обязательного страхования в структуре механизмов урегулирования страны.

Ключевые слова: страхование, страховой рынок, страны ЕАЭС.

АНАЛИЗ ТОРГОВЛИ РЕСПУБЛИКИ АРМЕНИИ СО СТРАНАМИ-УЧАСТНИЦАМИ ЕАЭС

Л.Р. Нерсисян

Российско-Армянский университет

lusinenersisyan97@gmail.com

АННОТАЦИЯ

В данной статье был рассмотрен внешнеторговый оборот стран-участниц ЕАЭС между собой, а также с другими странами. С помощью таких индексов, как индекс сходства, индекс корреляции и индекс Грубеля-Ллойда или внутриотраслевой торговли была сделана попытка оценить сегодняшнее состояние внешней торговли стран ЕАЭС, в частности Армении, и являются ли эти пять стран конкурентами на внешнем рынке. Также с помощью регрессионной модели была рассмотрена взаимосвязь между экспортом и ВВП Армении.

Ключевые слова: ЕАЭС, импорт, экспорт, Армения

Введение

В течение последних десятилетий количество региональных интеграционных соглашений (объединений) неуклонно растет и к 2017 году по данным Всемирной торговой организации (ВТО) оно достигло 445. Как известно, создание интеграционных объединений оказывает существенное влияние не только на развитие объединяющихся стран, но и на всю мировую экономику в целом, в особенности, если доли интегрирующихся стран в мировой экономике значительны.

Предполагается, что вступление стран в состав ЕАЭС, расширит их внешнеэкономические связи, будет способствовать более свободному перемещению товаров и услуг, труда, капитала и технологий. Однако, как известно, в ЕАЭС существует неравномерность по распределению данных показателей в силу того, что экономики объединившихся стран коренным образом отличаются друг от друга по масштабам и в нем присутствует страна-лидер – РФ, степень присутствия которой в экономиках остальных стран Союза изначально настолько существенна, что создание экономического союза на данный момент времени не дает ожидаемых результатов.

Из вышесказанного можно сделать вывод, что анализ внешней торговли Армении со странами-участницами ЕАЭС крайне актуальная тема.

Целью данной статьи является выявление взаимосвязи между экспортом и ВВП Армении. Для достижения нашей цели был сделан анализ нынешнего состояния внешней торговли стран

Материалы и методы

В современной экономике благоприятным фактором регионального товарообмена является региональная торговая интеграция, способствующая укреплению регионального рынка и повышению его эффективности.

Как видно из графиков из стран ЕАЭС основным как импортером, так и экспортером является Россия. По данным 2018 года внешнеторговый оборот России составил почти 634 млрд. долларов, что составляет почти 84% от общего товарооборота стран-участниц ЕАЭС. По сравнению с Россией доля Армении в общем товарообороте ЕАЭС со странами вне зоны союза очень низка, составляет почти 1%. В таком же состоянии находится и Киргизия. Казахстан и Беларусь находятся в более лучшем состоянии, чем предыдущие две страны, но их доля тоже низка.



Рисунок 1: Внешнеторговый оборот стран-участниц ЕАЭС за 2015-2018 года, млрд \$

По данным Евразийской экономической комиссии, в 2018 году товарооборот между странами ЕАЭС составил 116 млрд. \$. На долю Армении приходится 1,2% от общего объема экспорта. По сравнению с остальными четырьмя странами это самый низкий показатель. Самый высокий – у России – 66,7%. В 2018 году доля Армении от общего импорта составляет 2,4%. Это означает, что внутри союза Армении выступает в роли покупателя. В аналогичной ситуации находятся Беларусь, Казахстан и Киргизия. И только Россия выступает в роли продавца, так как экспорт превышает импорт.



Рисунок 2: Взаимная торговля между странами ЕАЭС за 2015-2018 года, млрд \$

В структуре взаимной торговли ЕАЭС наибольшую долю имеет минеральная продукция, из которой 84.8% экспортирует Россия, второе место занимает бытовая техника, затем продукты питания.



Рисунок 3: Структура взаимной торговли ЕАЭС по укрупненным товарным группам за 2018 год

Казахстан и Беларусь занимают небольшую долю в обороте внешней торговли ЕАЭС. Не считая Россию, которая является главным партнером по торговле, Казахстан наладил внешнеэкономические отношения с Италией, Нидерландами, Германией, Китаем, США. Армения и Киргизия занимают сверхнезначительные доли в общем обороте ЕАЭС с третьими странами, а более конкретно 0,69% и 0,57%, соответственно. Основными партнерами по внешней торговле Киргизии являются Швейцария, Китай, Узбекистан, Турция. А во внешней торговле ЕАЭС Киргизия торгует с Россией и Казахстаном. Основным партнером по экспорту для Армении является Россия (23%). Она экспортирует в Россию продукты питания, текстиль, драгоценные металлы и изделия из них, бытовую технику и так далее. Далее по объему экспорта занимают Болгария (9.1%), Грузия

(7.9%), Ирак, Германия и т.д. Армения импортирует товары из большинства стран мира. Однако лидирующее место в импорте занимает Россия (31%). Она импортирует товары также из Китая. Несмотря на политические разногласия между Арменией и Турцией, в импорте Армении Турция занимает третье место. Остальные страны в импорте Армении составляют очень малую долю. По вышесказанному и по нижеприведенной диаграмме можно сделать вывод, что основными торговыми партнерами ЕАЭС являются Китай, Германия, Нидерланды и Италия.




Рисунок 5: Внешняя торговля ЕАЭС по странам за 2018 год, млрд \$

В структуре торговли с третьими странами наибольшую долю имеют минеральная продукция и топливно-энергетические ресурсы, которые составляют 32,5% и 31,7% соответственно, из которых 83% и 84% приходится на долю России. Доля Армении составляет 0,3% и 0,09% соответственно.



Рисунок 6: Структура торговли ЕАЭС по укрупненным товарным группам с третьими странами за 2018 г.

Индекс сходства принимает значения от 0 до 1, где 0-абсолютное сходство, а 1 – абсолютное отклонение. Значительное сходство экспорта означает, что экономики стран являются конкурентами на глобальных рынках, что помешает региональной интеграции;

По нижеприведенной таблице можно заметить, что в странах ЕАЭС имеется невысокое сходство экспорта Армения по товарной структуре наиболее схожа с Киргизией, а наименьшее сходство имеет с Россией. По первому подходу сделаем вывод, что страны ЕАЭС неконкурентоспособны, а значит, это никак не помешает их торговой интеграции.

Страны-участницы ЕАЭС	Армения	Беларусь	Казахстан	Киргизия	Россия
Армения	0	0,71	0,79	0,69	0,83
Беларусь	0,71	0	0,86	0,5	0,61
Казахстан	0,79	0,86	0	0,52	0,6

Киргизия	0,69	0,5	0,52	0	0,65
Россия	0,83	0,61	0,6	0,65	0

Страны-участницы ЕАЭС	Армения	Беларусь	Казахстан	Киргизия	Россия
Армения		-0.14	0.25	0.37	0.23
Беларусь	-0.14		-0.11	0	-0.07
Казахстан	0.25	-0.11		0.14	0.36
Киргизия	0.37	0	0.14		0.11
Россия	0.23	-0.07	0.36	0,11	

Таблица 1-2. Индекс сходства и корреляции экспорта стран-участниц ЕАЭС за 2018 год

Для оценки взаимодействия стран на мировых рынках существует индекс торговой корреляции, позволяющий сравнить специализацию стран в торговле и выяснить, в какой степени они конкурируют на мировых товарных рынках, являясь экспортерами одного и того же продукта. Данный индекс принимает значения от -1 до 1, где -1 – отсутствие конкуренции между странами, 1- наличие конкуренции. Из всех стран только Беларусь неконкурентоспособна. Наиболее конкурентоспособной является Армения. Больше всего она конкурирует с Киргизией.

Индекс Грубеля-Ллойда принимает значения от 0 до 1. Если индекс принимает значение 0, то имеется или импорт, или экспорт. Если индекс равен 1, то экспорт равен импорту. Чем выше значение индекса, тем выше качество внутриотраслевой торговли. Из таблицы видно, что у России наилучшей товарной группой является «Продукты растительного происхождения», так как ее значение находится самой близкой к 1.

	Россия	Казахстан	Беларусь	Киргизия
Продукты питания	0,33	0,31	0,08	0
Продукты растительного происхождения	0,84	0,9	0,76	
Бытовая техника	0,69	0,28	0,1	0,88
Драгоценные и недраг. металлы и изделия из них	0,63			
Текстиль	0,15	0	0,6	0
Продукты животного происхождения	0,06	0	0,06	
Химическая продукция	0,77	0,73	0,61	0,14
Минеральные продукты	0,05		0,18	0,06
Транспорт	0,2		0,01	

Таблица 3. Индекс Грубеля-Ллойда между Арменией и остальными странами ЕАЭС за 2018 год

Самое низкое качество внутриотраслевой торговли имеют текстиль, продукты животного происхождения и минеральные продукты. Данные товарные группы имеют значения ближе к 0, так как текстиль и продукты животного происхождения Армения экспортирует намного больше, чем импортирует. Во внутриотраслевой торговле между Арменией и Казахстаном индекс Грубеля-Ллойда был самым высоким у статьи «Продукты растительного происхождения». Из таблицы видно, что наивысший индекс во внутриотраслевой торговле между Арменией и Беларусью у продуктов растительного происхождения. Внешняя торговля между Арменией и Киргизией осуществляется в минимальных объемах. Минеральные продукты и химическая продукция имеют такое маленькое значение индекса, так как минеральная продукция больше импортируется в Армению, а химическая продукция – экспортируется.

Модель взаимосвязи ВВП от изменения объемов экспорта Армении

Для понятия того насколько зависит ВВП страны от экспорта, был проведен регрессионный анализ и построена модель между вышеприведенными переменными. Для построения модели были использованы поквартальные статистические данные ЦБ РА в промежутке от 2007 до 2018 года. Следует отметить, что для возможности сравнения результатов, промежуток был разделен на 2 части, соответственно до вступления РА в ЕАЭС (до 2015 года) и после вступления (2015-2018гг.).


Сначала была построена модель взаимосвязи между ВВП и экспортом РА в промежутке до вступления страны в ЕАЭС, при этом как зависимая переменная был выбран ВВП, а как объясняющая- экспорт.

Рассмотрим модель взаимосвязи до вступления Армении в ЕАЭС.

Variable	Coefficient	Std. Error	t-Statistic	Prob.
C	4.55E+08	3.49E+08	1.302577	0.2030
EXPORT	4792.586	1135.467	4.220808	0.0002
R-squared	0.380543	Mean dependent var		1.89E+09
Adjusted R-squared	0.359183	S.D. dependent var		5.74E+08
S.E. of regression	4.60E+08	Akaike info criterion		42.79191
Sum squared resid	6.13E+18	Schwarz criterion		42.88442
Log likelihood	-661.2746	Hannan-Quinn criter.		42.82206
F-statistic	17.81522	Durbin-Watson stat		1.552636
Prob(F-statistic)	0.000219			

Для начала мы должны убедиться в значимости выбранного объясняющего фактора (экспорта). Для этого рассмотрим последний столбец (probability). Как видно, в случае экспорта этот показатель меньше 0.05, следовательно, на 5% уровне значимости мы можем отвергнуть 0-ую ги-

потезу (то что фактор незначителен), и мы можем определить, что объясняющая переменная значима. Далее рассмотрим коэффициент детерминации (R^2). Как видно из таблицы, этот показатель составляет примерно 38%. Следовательно, можем утверждать, что зависимость между изменением объемов экспорта и ВВП Армении до вступления последней в состав ЕАЭС определенно существует, но она небольшая. Теперь посмотрим линию регрессии между этими факторами.




Как известно, линия регрессии показывает изменение зависимой переменной при изменении независимой переменной на одну единицу и имеет следующую формулу: $Y=c+bx$. В нашем случае, эта линия показывает насколько увеличится ВВП страны при увеличении экспорта на 1 единицу. Для выявления формулы взаимосвязи между этими показателями вернемся к таблице регрессии. Как видно константа c в нашем случае равняется примерно 455188696, а угловой коэффициент b равняется примерно 4792. Следовательно, взаимосвязь между ВВП страны и экспортом можно представить следующей формулой:

$$\mathbf{GDP = 455188696.14 + 4792.58582615 * EXPORT}$$

Теперь рассмотрим изменение ситуации после вступления Армении в состав ЕАЭС.

Variable	Coefficient	Std. Error	t-Statistic	Prob.
C	1.24E+09	5.91E+08	2.098820	0.0545
EXPORT	3111.968	1200.518	2.592187	0.0213
R-squared	0.324306	Mean dependent var		2.74E+09
Adjusted R-squared	0.276042	S.D. dependent var		5.92E+08
S.E. of regression	5.04E+08	Akaike info criterion		43.02916
Sum squared resid	3.55E+18	Schwarz criterion		43.12573
Log likelihood	-342.2333	Hannan-Quinn criter.		43.03411
F-statistic	6.719435	Durbin-Watson stat		1.964842
Prob(F-statistic)	0.021299			

Сначала рассмотрим значимость объясняющей переменной. Как видно из вышеприведенной таблицы *probability* ниже 0.05, следовательно, на 5% уровне значимости мы можем отвергнуть 0-ую гипотезу и мы можем определить, что объясняющая переменная значима. Как и в предыдущей модели, так и в этой увеличение объемов экспорта положительно влияет на ВВП страны. Далее рассмотрим коэффициент детерминации (R^2). Как видно из таблицы, этот показатель составляет примерно 32%.



Подчеркнем то обстоятельство, что регрессионная зависимость между ВВП и экспортом была лучше в промежутке от 2007-2015 гг., т.е. до вступления страны в состав ЕАЭС. Следовательно, можем утверждать, что зависимость между изменением объемов экспорта и ВВП Армении после вступления последней в состав ЕАЭС существует, но она хуже, чем до вступления.

Для выявления формулы взаимосвязи между этими показателями вернемся к таблице регрессии. Как видно константа c в нашем случае равняется примерно 1240599956, а угловой коэффициент b равняется примерно 3112. Следовательно, взаимосвязь между ВВП страны и экспортом можно представить следующей формулой:

$$\text{GDP} = 1240599955.85 + 3111.9681845 * \text{EXPORT}$$

Заключение

Заключая данную статью можно сделать следующие выводы:

- Индекс внутриотраслевой торговли выше всего у товарной группы "Химическая продукция", а ниже - "Продукты животного происхождения"
- Рассмотрев индекс сходства, увидели, что в странах ЕАЭС имеется невысокое сходство экспорта. Наибольшее сходство в товарной структуре имеют Казахстан и Киргизия, а наименьшее – Казахстан и Беларусь. Армения по товарной структуре наиболее схожа с Беларусью, а наименьшее сходство имеет с Казахстаном.
- Из стран ЕАЭС наиболее конкурентоспособной является Армения. Больше всего она конкурирует с Киргизией.
- Существует прямая взаимосвязь между экспортом Армении и ВВП, но она ниже, чем было до вступления страны в состав ЕАЭС.

ЛИТЕРАТУРА

1. *И.Б. Петросян*, Взаимные инвестиции в странах ЕАЭС // Вестник РАУ. Изд-во РАУ, №2. 2017. 12 стр.
2. Официальный сайт Евразийского экономического союза:
<http://www.eaeunion.org/>
3. Национальная статистическая служба Республики Армения:
<https://www.armstat.am/ru/>
4. Центральный банк РА:<https://www.cba.am>
5. Всемирный банк:<https://www.worldbank.org/>

ANALYSIS OF THE TRADE OF ARMENIA WITH THE EAUE MEMBER COUNTRIES

L. Nersisyan

Russian-Armenian University

lusinenersisyan97@gmail.com

ABSTRACT

In this article, the foreign trade turnover of the EAEU member countries was considered among themselves, as well as with other countries. With help indexes as the similarity index, the correlation index and the Grubel-Lloyd index or intra-industry trade, an attempt was made to assess the current state of foreign trade of the EEU countries, in particular Armenia, and whether these five countries are competitors in the foreign market. Also, using the regression model, the relationship between exports and GDP of Armenia was considered.

Keywords: EAEU, import, export, Armenia.